



CASE – Centrum Analiz Społeczno-Ekonomicznych
CASE – Center for Social and Economic Research



CASE reports No. 508 (2024)

Բարձրացնելով Հայաստանի տնտեսական դիմակայունությունը



Հայկազ Ֆանյան, Արմինե Պետրոսյան և Մելինե Աբրահամյան

Բանալի բառեր: Հայաստանի տնտեսություն, Հայաստանի էներգետիկ համակարգ,
Հայաստանի բանկային համակարգ, Հայաստանի ՕՈՒՆ, Հայաստանի առևտուր

Տնտեսական գրականության ամսագրի (JEL) ծածկագրեր՝ E01; E21; E22; E23; E31; E42;
E58; E63; F10; F21; G21; H20; J11: K32

© CASE – Center for Social and Economic Research, Warsaw, 2024

ISBN 978-83-67407-23-6

Հրատարակող՝

CASE - Սոցիալական և տնտեսական հետազոտությունների կենտրոն

Վիդ. Չամենհոֆ 5/1բ, 00-165, Վարշավա, Լեհաստան

հեռ.: +48 798 023 759

Էլ. փոստ: case@case-research.eu

«CASE Reports» շարքը «CASE Network Studies & Analyses» շարքի շարունակությունն է

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկազ Ֆանյանը Մոդեքս խորհրդատվական ընկերության և Մոցիալ-տնտեսական վերլուծությունների հայկական կենտրոնի տնօրենն (ACSES) է, ունի ավելի քան 13 տարվա աշխատանքային փորձ հանրային քաղաքականության մշակման, միջազգային տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության, մակրոտնտեսական և այլ վերլուծությունների իրականացման մեջ: Նա պարբերաբար խորհրդատվություն է տրամադրում Հայաստանի կառավարությանը տնտեսական բարեփոխումների հարցերում, աշխատել է այնպիսի միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են USAID-ը, ԱԶԲ-ը և GIZ-ը:

Արմինե Պետրոսյանը աշխատում է որպես ավագ խորհրդատու Մոդեքս խորհրդատվական ընկերությունում և ավագ հետազոտող՝ ACSES վերլուծական կենտրոնում: Նա ունի ավելի քան 10 տարվա աշխատանքային փորձ արտաքին առևտրի, ներդրումային միջավայրի, հանրային ֆինանսների ուսումնասիրության, քաղաքականության միջամտությունների վերաբերյալ առաջարկությունների պատրաստման և հայեցակարգերի մշակման ոլորտներում:

Մելինե Աբրահամյանը զբաղեցնում է խորհրդատուի պաշտոն Մոդեքս խորհրդատվական ընկերությունում: Նա աշխատել է տարբեր թեմաներով նախագծերի վրա, ներառյալ ֆինանսական ոլորտը, արտաքին տնտեսական հարաբերությունները և ենթակառուցվածքները՝ կենտրոնանալով տվյալների հավաքագրման և վերլուծության վրա:

Բովանդակություն

<i>Հապավումներ.....</i>	<i>4</i>
<i>Գծապատկերներ.....</i>	<i>6</i>
<i>1. Ներածություն.....</i>	<i>9</i>
<i>2. Ներքին և արտաքին քաղաքական զարգացումները և դրանց տնտեսական ազդեցությունը.....</i>	<i>12</i>
<i>3. Մակրոտնտեսական կայունություն.....</i>	<i>16</i>
3.1. Մակրոտնտեսական քաղաքականություն.....	16
3.2 Մակրոտնտեսական կայունություն . պատմական հեռանկար և ներկա իրավիճակը....	18
3.3. Մակրոտնտեսական խոցելիության հիմնական աղբյուրները և հիմնական մակրոտնտեսական ռիսկերը	33
<i>4. Հայաստանի ֆինանսական հատվածի կայունությունը.....</i>	<i>36</i>
4.1 Բանկային հատվածը	37
4.2 Ոչ բանկային ֆինանսական կազմակերպություններ.....	42
4.3 Ֆինանսական վերահսկողություն.....	44
4.4 Ֆինանսական խոցելիության և ռիսկերի հիմնական աղբյուրները.....	45
<i>5. Արտաքին տնտեսական հարաբերություններ.....</i>	<i>47</i>
5.1 Արտաքին առևտրային հարաբերությունների դերը ՀՀ տնտեսական կյանքում . հիմնական ցուցանիշներ	47
5.2 Ապրանքային առևտրի խոցելիությունը	54
5.3 Ծառայությունների առևտրի խոցելիությունը	68
5.4 Օտարերկրյա ներդրումների խոցելիությունը.....	70
5.5 Բնակչության շարժունակության հետ կապված խոցելիությունը	77
<i>6. ՀՀ էներգետիկայի ոլորտը . ընդհանուր նկարագիր, կախվածություն և հեռանկարներ.....</i>	<i>82</i>
6.1 Երկրի էներգետիկ պատկերը	82
6.2 Էներգիայի սպառումը.....	89
6.3 Վերականգնվող էներգիա . զարգացումը և ներուժը	95
6.4 Էներգետիկ քաղաքականություն և հեռանկարներ	98
<i>7. Խոցելիության աղբյուրները և ռիսկի գործոնները.....</i>	<i>102</i>
<i>8. Առաջարկություններ.....</i>	<i>109</i>

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՆԻ	Արտահանման նմանության ինդեքս
ԱԱՀ	Ազատ առևտրի համաձայնագիր
ԱՀԻ	Առևտրի համատեղելիության ինդեքս
ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
Արմատատ	Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտե
ԱՏԳ ԱԱ	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԲԷՑ	Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵԱԶԲ	Եվրասիական զարգացման բանկ
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԱԿ	Զարգացման աջակցության կոմիտե
ԶՊԱ	Զարգացման պաշտոնական աջակցություն
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակ
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԻ	Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՄԱԱԶՀ	ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով
ՋԷԿ	Ջերմաէլեկտրակայան
ՎՀ	Վճարային հաշվեկշիռ
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ

SS	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
SZՁԿ	Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպություն
ՓՀԻ	Փոխառության հատուկ իրավունք
ՕՈԻՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՖՎ	Ֆոտովոլտային
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
COP29	ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության 29-րդ համաժողով
GSP+	ԵՄ Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ
GMT	Գրիլիի, Մասկիանդարոյի և Թաբելինիի ինդեքս
R2E2	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ

Գծապատկերներ

Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ-ն ընթացիկ ԱՄՆ դոլարով և իրական ՀՆԱ-ի հավելածը, 2007-2023 թթ.	19
Գծապատկեր 2. ՀՀ տնտեսական աճի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2011-2023 թթ.	20
Գծապատկեր 3. ՀՀ ՀՆԱ-ն՝ ըստ ծախսային բաղադրիչների, 2007-2023 թթ.	20
Գծապատկեր 4. ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը, 2007-2023 թթ.	22
Գծապատկեր 5. ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը, 2007-2023թթ.	23
Գծապատկեր 6. ՀՀ զուտ միջազգային ներդրումային դիրքը, 2007-2023 թթ. տարեվերջի դրությամբ	24
Գծապատկեր 7. ՀՀ պետական բյուջեի եկամուտները և ծախսերը, 2007-2023թթ.	25
Գծապատկեր 8. ՀՀ պետական բյուջեի ծախսերը, 2008-2023 թթ.	27
Գծապատկեր 9. ՀՀ պետական պարտքը և կառավարության պարտքի սպասարկումը, 2007-2023 թթ.	28
Գծապատկեր 10. ՀՀ փողի զանգվածը, 2007-2023 թթ. տարեվերջի դրությամբ.....	29
Գծապատկեր 11. Գնաճը ՀՀ-ում, 2007-2023 թթ.	30
Գծապատկեր 12. Հայաստանի ստացած զուտ զարգացման պաշտոնական աջակցությունը, 2007-2022 թթ.	33
Գծապատկեր 13. ՀՀ ռեզիդենտների ցպահանջ ավանդները, 2007-2023 թթ. տարեվերջի դրությամբ	39
Գծապատկեր 14. ՀՀ առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրամադրված վարկերը, 2004-2023 թթ. տարեվերջի դրությամբ.....	40
Գծապատկեր 15. ՀՀ ֆոնդային բորսայի հիմնական ցուցանիշները, 2018-2023թթ.	44
Գծապատկեր 16. ՀՀ ապրանքների և ծառայությունների առևտրաշրջանառությունը ՀՆԱ-ի նկատմամբ, 2007-2023 թթ.	49
Գծապատկեր 17. ՀՀ ծառայությունների մասնաբաժինը արտահանման և ներմուծման մեջ, 2007-2023 թթ.	50
Գծապատկեր 18. ՀՀ ապրանքների առևտրի հաշվեկշիռը, 2007-2023 թթ.	51
Գծապատկեր 19. ՀՀ ծառայությունների առևտրի հաշվեկշիռ, 2007-2023 թթ.	52
Գծապատկեր 20. ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքը, 2007-2023 թթ.	53
Գծապատկեր 21. ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ-ի պաշարները, 2007-2023 թթ. տարեվերջի դրությամբ	53
Գծապատկեր 22. ՀՀ ստացած տրասնֆերտները, 2007-2023 թթ.	54
Գծապատկեր 23. ՀՀ արտահանման ուղղությունները, 2013-2023 թթ.	55
Գծապատկեր 24. ՀՀ ներմուծումն ըստ երկրների, 2013-2023 թթ.	56
Գծապատկեր 25. ՀՀ ներմուծումն ըստ ապրանքների մշակման մակարդակի, 1997-2023 թթ.	57
Գծապատկեր 26. ՀՀ արտահանումն ըստ ապրանքների մշակման մակարդակի, 1997-2023 թթ.	58

Գծապատկեր 27. ՀՀ արտահանումն ըստ ապրանքների վերջնական օգտագործման, 2013-2021 թթ.	58
Գծապատկեր 28. ՀՀ ներմուծումն ըստ ապրանքների վերջնական օգտագործման, 2013-2021 թթ.	59
Գծապատկեր 29. ՀՀ ապրանքային արտահանումն ըստ ապրանքների, 2013-2023 թթ.	60
Գծապատկեր 30. ՀՀ արտահանման և ներմուծման կենտրոնացվածությունը (ՀՀԻ) ըստ ապրանքների, 2013-2023 թթ.	61
Գծապատկեր 31. ՀՀ արտահանման համատեղելիությունը այլ երկրների ներմուծման հետ, 2022 թ.	62
Գծապատկեր 32. ՀՀ ներմուծման համատեղելիությունը այլ երկրների արտահանման հետ, 2022 թ.	62
Գծապատկեր 33. Հայաստանի և այլ երկրների արտահանման նմանությունը, 2022 թ.	63
Գծապատկեր 34. Հումքային ապրանքների մասնաբաժինը Հայաստանի արտահանման և ներմուծման մեջ, 2013-2023 թթ.	64
Գծապատկեր 35. ՀՀ վերարտահանումն ըստ ուղղությունների, 2013-2023 թթ.	66
Գծապատկեր 36. ՀՀ վերարտահանումն ըստ ապրանքների, 2013-2023 թթ.	67
Գծապատկեր 37. ՀՀ ծառայությունների արտահանումը, 2007-2023 թթ.	69
Գծապատկեր 38. ՀՀ ծառայությունների ներմուծումը, 2007-2023 թթ.	70
Գծապատկեր 39. ՀՀ ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքերի և արտահոսքերի ծավալները, 2007-2023 թթ.	71
Գծապատկեր 40. ՀՀ մեկ շնչի հաշվով ՕՈՒՆ-ների պաշարներն այլ երկրների համեմատ, 2007-2022 թթ.	72
Գծապատկեր 41. ՀՀ ՕՈՒՆ-ների մաքուր պաշարներն ըստ երկրների, 2021-2023 թթ. տարեվերջի դրությամբ	73
Գծապատկեր 42. ՀՀ ՕՈՒՆ-ների մաքուր պաշարներն ըստ ոլորտների, 2021-2023 թթ. տարեվերջի դրությամբ	74
Գծապատկեր 43. ՀՀ իրականացրած ՕՈՒՆ-ների պաշարները, 2007-2023 թթ. տարեվերջի դրությամբ	75
Գծապատկեր 44. ՀՀ-ում իրականացված պորտֆելային ներդրումների զուտ ներհոսքը, 2007-2023 թթ.	76
Գծապատկեր 45. ՀՀ իրականացրած պորտֆելային ներդրումների զուտ արտահոսքը, 2007-2023 թթ.	77
Գծապատկեր 46. ՀՀ միգրացիայի մնացորդը, 2007-2023 թթ.	78
Գծապատկեր 47. Հայաստանից Ռուսաստան արտագնա աշխատանքային միգրացիան, 2017-2022 թթ.	79
Գծապատկեր 48. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած ոչ առևտրային փոխանցումները, 2013-2023 թթ.	80
Գծապատկեր 49. ՀՀ-ում էներգիայի մատակարարումն ըստ աղբյուրների, 2022թ.	82

Գծապատկեր 50. Էներգիայի մատակարարման դինամիկան ըստ աղբյուրների, 2010-2022 թթ.	83
Գծապատկեր 51. Էներգիայի ինտենսիվության մակարդակը Հայաստանում և ընտրված երկրներում, 2010-2021 թթ.	84
Գծապատկեր 52. ՀՀ էներգիայի վերջնական սպառումը ըստ աղբյուրների Հայաստանում և ընտրված երկրներում, 2022թ.	90
Գծապատկեր 53. Էներգիայի ընդհանուր վերջնական սպառումը ըստ հաճախորդների Հայաստանում և ընտրված երկրներում, 2022թ.	91
Գծապատկեր 54. ՀՀ էներգիայի մատակարարումը, ներքին արտադրությունը և գուտ ներմուծումը, 2010-2022 թթ.	92
Գծապատկեր 55. ՀՀ էլեկտրաէներգիայի ներքին արտադրությունն ըստ աղբյուրների, 2010-2022 թթ.	93
Գծապատկեր 56. ՀՀ էներգիայի գուտ ներմուծումը ըստ աղբյուրների, 2010-2022թթ.	93
Գծապատկեր 57. ՀՀ էներգիայի գուտ ներմուծման մասնաբաժինը էներգիայի ընդհանուր մատակարարման մեջ, 2010-2022թթ.	94
Գծապատկեր 58. ՀՀ էներգիայի ներմուծումը ըստ գործընկեր երկրների, 2010-2022 թթ.	95
Գծապատկեր 59. CO ₂ արտանետումները ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով Հայաստանում և ընտրված երկրներում, 2010-2022 թթ.	96
Գծապատկեր 60. Վերականգնվող, ցածր ածխածնային աղբյուրների և հանածո վառելիքի մասնաբաժինները ՀՀ էլեկտրականության արտադրության մեջ, 2007-2022 թթ.	97
Գծապատկեր 61. Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը (առանց կենսազանգվածի) էներգիայի ընդհանուր վերջնական սպառման մեջ, 2010-2021 թթ.	98

1. Ներածություն

Հայաստանը փոքր, դեպի ծով ելք չունեցող երկիր է Կովկասյան տարածաշրջանում: Այն սահմանակից է չորս երկրների հետ, որոնցից երկուսի՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ սահմանները տարիներ շարունակ փակ են: Մեկ տասնամյակ առաջ Հայաստանը լայնածավալ բարեփոխումներ էր իրականացնում եվրաինտեգրման ուղղությամբ, սակայն անսպասելիորեն փոխեց իր աշխարհաքաղաքական ուղղվածությունը՝ դառնալով Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ՝ տնտեսական միություն, որը միավորում է Հայաստանը, Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը և Ղրղզստանը: Հայաստանը նաև Ռուսաստանի գլխավորած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ է, որը, ինչպես ժամանակը ցույց տվեց, ևս մեկ ռազմավարական գործիք է Ռուսաստանի համար՝ իր ազդեցությունը հարևան երկրների վրա տարածելու համար: 1990-ականներին անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից տարիների ընթացքում աճել է: Այսօր Ռուսաստանը Հայաստանի էներգակիրների առաջնային մատակարարն է, առաջատար առևտրային գործընկերը և նրա տնտեսության ամենամեծ օտարերկրյա ներդրողը:

Վերջին տասնամյակում Հայաստանը բախվել է մի շարք ցնցումների, այդ թվում՝ 2018 թ-ի հեղափոխությունը, ՔՈՎԻԴ-19 համավարակը և 2020 թ-ին Ադրբեջանի հետ հակամարտության սրումը, Ռուսաստանի շարունակվող ներխուժումը Ուկրաինա և դրա հետ կապված պատժամիջոցները, 2023 թ-ին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ռազմական գործողությունները, որոնք հանգեցրել են Լեռնային Ղարաբաղից մոտ 100,000 բռնի տեղահանվածների ներհոսքի: Այս զարգացումները էականորեն ազդել են երկրի քաղաքական և տնտեսական իրավիճակի վրա՝ որոշ դեպքերում խորացնելով Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից: Օրինակ՝ 2022 թ-ին Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժումից հետո աճել է Ռուսաստանից Հայաստան մարդկանց և կապիտալի ներհոսքը: Այս միգրացիոն հոսքերը, ի թիվս այլ դրական տնտեսական հետևանքների, հանգեցրել են ապրանքների և ծառայությունների սպառման ավելացման, ավանդների ներհոսքի աճին, միջնորդավճարների և այլ վճարների գծով բանկերի եկամուտների և պետական բյուջեի հարկային եկամուտների աճին: Բացի այդ, Ռուսաստանի նկատմամբ արևմտյան տնտեսական պատժամիջոցները և Ռուսաստանի զուգահեռ ներմուծման կանոնակարգերի փոփոխությունները նոր հնարավորություններ են բացել Հայաստանի արտահանողների համար, ինչը բերել է դեպի Ռուսաստան արտահանման ավելացմանը և Հայաստանից ապրանքների արտահանման ընդհանուր աճին: Սակայն այս զարգացումները նաև խորացրել են Հայաստանի տնտեսական կախվածությունը Ռուսաստանից:

2018 թ-ի հեղափոխությունից հետո նոր կառավարությունը խոստացավ հավասարակշռել Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի և Արևմուտքի հետ: Երկիրը հավատարիմ էր իր ռազմավարական դաշինքին Ռուսաստանի հետ, մասնավորապես ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի շրջանակներում, մինչև ժամանակ քայլեր էր ձեռնարկում արևմտյան երկրների և կառույցների հետ կապերը ամրապնդելու ուղղությամբ՝ ընդգծելով նվիրվածությունը ժողովրդավարական արժեքներին, ձգտելով ընդլայնել տնտեսական համագործակցության շրջանակները և փնտրելով աջակցություն: 2023 թ-ին Հայաստանի կառավարությունը հայտարարեց նոր ծրագրի մասին՝ դառնալու «խաղաղության խաչմերուկ» և առանցքային տարանցիկ երկիր Կենտրոնական Ասիայի և Եվրոպայի միջև առևտրի համար. ծրագիր, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի աշխարհաքաղաքական նշանակությունը և տնտեսական հեռանկարները՝ այն որպես կարևորագույն հանգույց դիրքավորելով տարածաշրջանային առևտրի համար:

Այս ուսումնասիրության նպատակն է բացահայտել մակրոտնտեսական, կառուցվածքային և ինստիտուցիոնալ տեսանկյունից Հայաստանի խոցելիությունը, ներառյալ կախվածությունը Ռուսաստանից, և ներկայացնել առաջարկություններ՝ տարբեր տեսակի տնտեսական ցնցումների նկատմամբ երկրի դիմակայունությունը բարձրացնելու վերաբերյալ:

Զեկույցը բաղկացած է ներածությունից, յոթ գլուխներից և առաջարկություններից: Այն անդրադառնում է Հայաստանի վերջին տարիների ներքին և արտաքին քաղաքական զարգացումներին և դրանց տնտեսական ազդեցություններին, երկրի մակրոտնտեսական և ֆինանսական հատվածի կայունությանը, արտաքին տնտեսական հարաբերություններին, ներառյալ ապրանքների և ծառայությունների առևտրի խոցելիությունը, օտարերկրյա ներդրումները, էներգետիկ ոլորտի հեռանկարները, Հայաստանի խոցելիության աղբյուրները և ռիսկի գործոնները: Առաջարկություններ բաժնում ներկայացված են տնտեսական քաղաքականության առաջարկություններ տարբեր ցնցումների նկատմամբ Հայաստանի դիմադրողականության բարձրացման վերաբերյալ:

Ուսումնասիրությունն ընդգրկում է 2007 թ-ից (վերջին տարին մինչև համաշխարհային ֆինանսական ճգնաժամը) մինչև 2023 թ-ը (կամ առկա տվյալների վերջին տարին) ընկած ժամանակահատվածը: Զեկույցը պատրաստվել է 2024 թ-ի մարտ-օգոստոս ամիսներին, տվյալները հավաքագրվել են նույն տարվա փետրվարին և թարմացվել մինչև զեկույցի հրատարակումը: Ուսումնասիրության համար հիմնականում օգտագործվել են տվյալների միջազգային աղբյուրներ, օրինակ՝ Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ), Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ) և նրա մասնագիտացված գործակալություններ և այլն:

Հետազոտությունն իրականացվել է «Մոդերս» ՍՊԸ-ի կողմից «Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի տնտեսական կայունության բարձրացում» ծրագրի շրջանակներում՝ CASE - Սոցիալական և տնտեսական հետազոտությունների կենտրոնի համակարգմամբ: Մոդերս խորհրդատվական ընկերությունը հիմնադրվել է 2017թ-ին Հայաստանում: Այն խորհրդատվական ծառայություններ է մատուցում միջազգային կազմակերպություններին, մասնավոր և պետական հատվածի հաճախորդներին:

2. Ներքին և արտաքին քաղաքական զարգացումները և դրանց տնտեսական ազդեցությունը

Վերջին տասնամյակում Հայաստանում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ, որոնք էականորեն ազդել են երկրի քաղաքական և տնտեսական իրավիճակի վրա: Եվրաինտեգրման ուղղությամբ լայնածավալ բարեփոխումներ իրականացնող երկիրը **2013 թ-ի սեպտեմբերին հանկարծակի փոխեց իր աշխարհաքաղաքական հայացքները դեպի Ռուսաստան և ԵԱՏՄ՝** նախկին նախագահ Սերժ Սարգսյանի և Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումից անմիջապես հետո (Radio Azatutyun, 2013a): Աշխարհաքաղաքական դժվարին փոխզիջման արդյունքում Հայաստանը նախընտրեց չստորագրել ԵՄ-ի հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը՝ փոխարենը ընտրելով խորացնել ինտեգրումը Ռուսաստանի հետ՝ տարածաշրջանում ռազմական ուժերը հավասարակշռելու և Ադրբեյջանի հետ հակամարտության սրման ռիսկը մեղմելու հույսով: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ նախագահ Սարգսյանի հաշվարկները սխալ էին:

2015 թ-ին **Հայաստանը դարձավ ԵԱՏՄ անդամ:** ԵԱՏՄ անդամ երկրներն են Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը և Ռուսաստանը: Այն մաքսային միություն է, ինչը նշանակում է, որ անդամ երկրները կապված են ընդհանուր մաքսային սակագնով, որը թույլ է տալիս ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը: Այնուամենայնիվ, որոշ փորձագետներ կարծում են, որ դա Վլադիմիր Պուտինի նախաձեռնությունն է՝ վերադարձնելու նախկին Խորհրդային Միության ազդեցությունն ու կառուցվածքը (BBC, 2014): Իրոք, ժամանակը ցույց տվեց, որ ԵԱՏՄ-ն, ՀԱՊԿ-ի տրամաբանությամբ, ծառայում է ոչ միայն որպես տնտեսական միավոր, այլ նաև որպես ռազմավարական քաղաքական գործիք՝ Ռուսաստանի ազդեցությունը իր հարևան երկրների վրա տարածելու համար: ԵԱՏՄ-ին անդամակցությունն ազդել է Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքի վրա՝ մասնավորապես հանգեցնելով միությունից դուրս գտնվող երկրներից Հայաստանի ներմուծման նվազմանը, օրինակ՝ ԵՄ երկրներից, և ավելացնելով արտահանումը ԵԱՏՄ երկրներ: Սա ավելի է խորացրել Հայաստանի կախվածությունը ռուսական տնտեսությունից և մեծացրել ռիսկերի նկատմամբ խոցելիությունը:

2018 թ-ի զարնանը Հայաստանում տեղի ունեցավ հեղափոխություն, որը հետևեց նախկին նախագահ/վարչապետ Սերժ Սարգսյանի դեմ բողոքի համատարած ցույցերին: Նախագահ Սերժ Սարգսյանը փորձում էր երկարաձգել իր իշխանությունը՝ դառնալով վարչապետ: Սա քայլ էր, որը շատերի կողմից ընկալվում էր որպես իշխանությունից կառչելու փորձ՝ չնայած սահմանադրական փոփոխություններին,

որոնց նպատակն էր սահմանափակել նման երկարաձգված պաշտոնավարումը: Բողոքի ցույցերը, որոնք հայտնի են, որպես «**Թավշյա հեղափոխություն**» և որոնք գլխավորում էր ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը, սկսվեցին 2018 թ-ի ապրիլին: 2018 թ-ի ապրիլի 23-ին Սերժ Սարգսյանը հայտարարեց իր հրաժարականի մասին, իսկ 2018 թ-ի մայիսի 8-ին Ազգային ժողովի կողմից վարչապետ ընտրվեց Նիկոլ Փաշինյանը:

Այս իրադարձությունը շրջադարձային էր Հայաստանի քաղաքականության մեջ: Փաշինյանի իշխանության գալը դիտվում էր որպես Հայաստանի ներսում ժողովրդավարական շարժումների հաղթանակ և նախկինում արմատացած քաղաքական էլիտաներից հեռացում: Մի քանի ամիս անց՝ 2018 թ-ի դեկտեմբերին Փաշինյանը կազմակերպեց արտահերթ ընտրություններ: Նրա գլխավորած քաղաքական դաշինքը ապահովեց Ազգային ժողովի մանդատների մեծամասնությունը՝ կայունացնելով Փաշինյանի իշխանությունը երկրում: Փաշինյանն իր առաջին պաշտոնավարման ընթացքում (2018-2021 թթ.) սահմանել է «խաղի նոր կանոններ»՝ հիմնված օրենքի գերակայության վրա, և զգալիորեն նվազեցրել է երկրում ստվերային տնտեսության ծավալը: Նրա վարչակազմը իրականացրել է տարբեր հակակոռուպցիոն միջոցառումներ, որոնք հանգեցրել են կառավարության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը: Այս ջանքերը արտացոլվում էին կոռուպցիայի ընկալման միջազգային ինդեքսներում և տնտեսական ազատության զեկույցներում Հայաստանի դիրքերի բարելավման մեջ:

Չնայած այս ներքին բարեփոխումներին, Փաշինյանը աշխարհաքաղաքական էական փոփոխություններ չիրականացրեց: Փոխարենը նա նպատակ ուներ հավասարակշռել Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի և Արևմուտքի հետ: Փաշինյանը պահպանում էր Հայաստանի ռազմավարական դաշինքը Ռուսաստանի հետ, մասնավորապես ԵԱՏՄ-ի և ՀԱՊԿ-ի շրջանակներում: Միևնույն ժամանակ, նա ձգտում էր ամրապնդել կապերը արևմտյան երկրների և կառույցների հետ՝ ընդգծելով նվիրվածությունը ժողովրդավարական արժեքներին, ձգտելով ընդլայնել տնտեսական համագործակցության շրջանակները և փնտրելով աջակցություն:

2020 թ-ին ՔՈՎԻԴ-19-ի և Ադրբեջանի հետ հակամարտության սրման հետ կապված Հայաստանի տնտեսությունը լուրջ մարտահրավերների բախվեց: Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմի հետևանքով զոհվեց ավելի քան 4,000 զինվոր և խաղաղ բնակիչ, հազարավոր մարդիկ վիրավորվեցին, տասնյակ հազարավոր մարդիկ բռնի տեղահանվեցին Լեռնային Ղարաբաղից Հայաստան: Այս իրադարձությունները հանգեցրին զգալի սոցիալական և քաղաքական լարվածության երկրի ներսում, որի արդյունքում 2021 թ-ի հունիսին տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Այս ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ Փաշինյանի գլխավորությամբ, վերահաստատեց իր մեծամասնությունը խորհրդարանում: 44-օրյա պատերազմի հետևանքները, սահմանի

վրա բախումները և ՀԱՊԿ-ի անգործությունը զգալիորեն փոխեցին Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքորոշումը: Այս դիրքորոշման փոփոխությունը ավելի ակնհայտ դարձավ Ռուսաստանի Ուկրաինա ներխուժումից հետո, որը դրդեց Հայաստանին ավելի շատ «թեքվել» դեպի Արևմուտք: Դրա մասին են խոսում արևմտյան երկրների և կառույցների հետ Հայաստանի հարաբերությունների ակտիվացումը, ինչը արտաքին հարաբերությունները հավասարակշռելուն ուղղված ռազմավարական քայլ է:

2022 թ-ին ռուս-ուկրաինական պատերազմի սկսվելուց հետո մարդկանց և կապիտալի ներհոսքը Ռուսաստանից Հայաստան ավելացել է: Ի թիվս այլ դրական տնտեսական հետևանքների, այս ներհոսքը հանգեցրել է ապրանքների և ծառայությունների սպառման կտրուկ աճին, ՀՀ բանկային համակարգում ավանդների ավելացմանը, միջնորդավճարների ու այլ վճարների գծով բանկերի եկամուտների ավելացմանը և պետական բյուջեի հարկային եկամուտների աճին: Բացի այդ, Ռուսաստանի նկատմամբ արևմտյան տնտեսական պատժամիջոցները և Ռուսաստանի զուգահեռ ներմուծման կանոնակարգերի փոփոխությունները նոր հնարավորություններ են բացել հայ արտահանողների համար, ինչը բերել է դեպի Ռուսաստան արտահանման ավելացմանը և ընդհանուր առևտրաշրջանառության աճին:

Սակայն այս զարգացումները նաև խորացրել են Հայաստանի տնտեսական կախվածությունը Ռուսաստանից: Այս կախվածության վրա ազդեցություն է ունեցել նաև Հայաստանի՝ 2022 թ-ին ԵՄ Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից (անգլերեն համարժեք եզրույթը՝ Generalised Scheme of Preferences Plus կամ GSP+) դուրս մնալը, որը հնարավորություն էր տալիս հայկական ծագման ավելի քան 6,200 ապրանքատեսակ ԵՄ շուկա արտահանել զրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով: Հայաստանը դադարել է օգտվել ԵՄ GSP+ արտոնյալ առևտրային ռեժիմից, քանի որ Համաշխարհային բանկի կողմից երեք տարի անընդմեջ դասակարգվել է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների շարքում: Ընդհանուր առմամբ, այս տնտեսական զարգացումները նպաստել են տնտեսության նշանակալի աճին. 2022 թ-ին ՀՆԱ-ի աճը կազմել է 126%: Այնուամենայնիվ, չնայած այս աճին՝ տնտեսությունը մնում է խոցելի արտաքին ցնցումների նկատմամբ: Երբ 2023 թ-ին ռուս-ուկրաինական պատերազմի անմիջական ազդեցությունը սկսեց թուլանալ, տնտեսական աճի տեմպը դանդաղեց, և ակնկալվում է, որ այս միտումը կպահպանվի միջնաժամկետ հեռանկարում:

2023 թ-ի ռազմական գործողությունների հետևանքով Լեռնային Ղարաբաղից մոտ 100,000 բռնի տեղահանվածներ տեղափոխվել են Հայաստանի տարբեր քաղաքներ և գյուղեր: Հայաստանի կառավարությունը տարբեր ծրագրեր է իրականացնում՝ աջակցելու նրանց սոցիալ-տնտեսական ինտեգրմանը: Օրինակ, բացի սոցիալական աջակցության ծրագրերից, Հայաստանի կառավարությունը ստանձնել է նաև Լեռնային Ղարաբաղի կառավարության, տարբեր հիմնադրամների ու արցախցիների՝

հայաստանյան բանկերին ունեցած պարտավորությունների 70%-ը: Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների ներհոսքը կունենա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հետևանքներ՝ ազդելով տնտեսության պահանջարկի և առաջարկի, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության և պետական պարտքի վրա:

2023 թ-ին Հայաստանի կառավարությունը հայտարարեց նոր ծրագրի մասին՝ դառնալու «**խաղաղության խաչմերուկ**» և առանցքային տարանցիկ երկիր Կենտրոնական Ասիայի և Եվրոպայի միջև առևտրի համար: Այս նախագիծը նպատակ ունի բարձրացնել Հայաստանի աշխարհաքաղաքական նշանակությունը և տնտեսական հեռանկարները՝ այն որպես կարևորագույն հանգույց դիրքավորելով տարածաշրջանային առևտրի համար: Նախագիծը ենթադրում է բարձր քաղաքական հանձնառություն տարածաշրջանում կայուն խաղաղություն հաստատելու ուղղությամբ, մասնավորապես՝ Թուրքիայի հետ սահմանի բացման և Ադրբեջանի հետ խաղաղության համաձայնագրի ձեռքբերման միջոցով: Առաջին քայլերն արդեն արվել են՝ Հայաստանի հյուսիսարևելյան հատվածում սահմանագծի հաստատմամբ: Ավելին, Հայաստանի կառավարությունը հայտարարել է, որ մտադիր է խաղաղության պայմանագիր կնքել Ադրբեջանի հետ մինչև 2024 թ-ի նոյեմբերին կայանալիք ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության 29-րդ համաժողովը (COP29), որը տեղի է ունեցել Բաքվում: Այդուհանդերձ, պայմանագիրը չստորագրվեց, և ներկայումս ադրբեջանական կողմից բավարար ազդակներ չկան, որ նրանք կհստում են տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ նույն տեսլականը:

3. Մակրոտնտեսական կայունություն

3.1. Մակրոտնտեսական քաղաքականություն

ՀՀ Կենտրոնական բանկը (ԿԲ) պատասխանատու է երկրի գների և ֆինանսական կայունության ապահովման համար: 2006 թ-ի հունվարի 1-ից ՀՀ ԿԲ-ն անցում է կատարել գնաճի նպատակադրման ռազմավարության՝ ցածր և կայուն գնաճ ապահովելու նպատակով: ԿԲ-ն թիրախավորում է 12-ամսյա գնաճի՝ 4%+/-1.5% գնաճի միջակայքը: Գների կայունության խնդրի իրագործման նպատակով ԿԲ-ն մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրեր: Դրամավարկային քաղաքականությունն իրականացնելու համար ՀՀ ԿԲ-ն ունի հստակ իրավական մանդատ և գործառնական անկախություն: Համաձայն Կենտրոնական բանկի անկախությունը չափող այնպիսի միջազգային ինդեքսների, ինչպիսիք են Քուքիերմանի (1998) և Գրիլիի, Մասկիանդարոյի և Թաբելինիի (անգլերեն համարժեք եզրույթը՝ GMT) (1991) ինդեքսները, ԿԲ-ին հաջողվել է պահպանել անկախության բարձր մակարդակ: Օրինակ, 2013 թ-ի գնահատականներով Քուքիերմանի կշռված ինդեքսը կազմել է 0.96 (առավելագույնը՝ 1.0), Քուքիերման պարզ ինդեքսը կազմել է 0.92 (առավելագույնը՝ 1.0), իսկ GMT ինդեքսը՝ 13 (առավելագույնը՝ 16):¹ ԿԲ-ն վարում է ազատ լողացող փոխարժեքի քաղաքականություն: Այնուամենայնիվ, գնաճի թիրախին հասնելու համար ՀՀ ԿԲ-ն իրականացնում է քանակական մեղմացման քաղաքականություն, ինչպես նաև արտարժույթի առք ու վաճառք, ինչը կարող է փոխել արտարժույթի պահանջարկն ու առաջարկը՝ այդպիսով ազդելով շուկայում փոխարժեքի վրա:

Հարկաբյուջետային քաղաքականության մասով ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխանատու է հարկաբյուջետային քաղաքականության մշակման և հանրային ֆինանսների կառավարման համար: Հարկաբյուջետային կայունությունն ապահովելու համար խորհրդարանը և կառավարությունը ներդրել են ընդհանուր հարկաբյուջետային կանոններ: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է ՀՆԱ-ի նկատմամբ կառավարության պարտքի հարաբերակցության շեմեր².

1. Եթե կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցել է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:
2. Եթե կառավարության պարտքը գերազանցել է ՀՆԱ-ի 50%-ը, ապա, բացի նախորդ կետի պահանջից, ընթացիկ ծախսերի աճի առավելագույն չափը

¹ Central Bank of Armenia (CBA), Central Bank website, հասանելի է 2024թ-ի Ապրիլի 4-ի դրությամբ <https://bit.ly/3TGZKXH>

² Armenian legal information system (ARLIS), the Law of the Republic of Armenia on the “Budgetary system” of 21 August 1997, հասանելի է 2024թ-ի Ապրիլի 4-ի դրությամբ, <https://bit.ly/3xvhlKt>

նախորդ տարվա ընթացիկ ծախսերի փաստացի ծավալի համեմատությամբ սահմանվում է հիմք ընդունելով Հայաստանի ՀՆԱ նախորդ տարիների միջին աճը: Բացի այդ, եթե կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության չափը գտնվել է 50-60 %-ի միջակայքում, ապա կառավարությունը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ-ի նկատմամբ կառավարության պարտքի մակարդակը նվազեցնելու համար:

3. Եթե կառավարության պարտքը գերազանցել է ՀՆԱ-ի 60%-ը, ի լրումն նախորդ երկու պահանջների, ընթացիկ ծախսերի աճը սահմանափակվում է սպասվող հարկային եկամուտների մեծությամբ:

Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները կոորդինացվում են ԿԲ-ի և Ֆինանսների նախարարության միջև «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև համագործակցության որդեգրած սկզբունքների վերաբերյալ համաձայնագրի» շրջանակներում: Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացումը իրականացվում է միջնաժամկետ, ամսական, եռամսյակային և տարեկան ծրագրերի մշակման, ճշգրտման և իրականացման գործընթացում: Կոորդինացման դաշտին են վերաբերում ինչպես մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ընտրությունը, այնպես էլ ԿԲ-ի կողմից իրացվելիության կարճաժամկետ կարգավորմանը, Կառավարության կողմից արտաքին ֆինանսական հոսքերի ստացմանն ու ծախսմանը, պետական պարտատոմսերի թողարկմանն ու տեղաբաշխմանն առնչվող խնդիրները³:

Հայաստանի մակրոտնտեսական կայունությունը պարբերաբար վերանայվում է ԱՄՀ-ի կողմից «Սթենդ-Բայ» վարկային պայմանավորվածության (անգլերեն համարժեք եզրույթը՝ Stand-by Arrangement, SBA) շրջանակներում: 2022 թ-ի դեկտեմբերի 12-ին ԱՄՀ գործադիր խորհուրդը հաստատել է Հայաստանի հետ 36-ամսյա «Սթենդ-Բայ» վարկային պայմանավորվածությունը, որի գումարը կազմում է 128.8 մլն ՓՀԻ (մոտ 171.1 մլն ԱՄՆ դոլար) (IMF, 2022): Այս վարկային պայմանավորվածության շրջանակներում երկրին տրամադրվում է կարճաժամկետ ֆինանսական աջակցություն, միևնույն ժամանակ իշխանություններից պահանջվում է իրականացնել բարեփոխումներ մի շարք ոլորտներում: Այդ թվում, պահանջվում է քայլեր ձեռնարկել մակրոտնտեսական կայունության պահպանման, առաջնահերթ սոցիալական և կապիտալ ծախսերի համար հարկաբյուջետային հնարավորությունների ստեղծման, հարկաբյուջետային ռիսկերի կառավարման, դրամավարկային, մակրոպրոդյուկցիալ քաղաքականությունների կատարելագործման, վերահսկողության ուժեղացման, ինչպես նաև աշխատանքի և

³ CBA, “Monetary policy” [in Armenian], CBA official website, հասանելի է 2024թ-ի Ապրիլի 4-ի դրությամբ <https://bit.ly/3PQMTRv>


ապրանքների շուկաներում կառուցվածքային բարեփոխումների, ֆինանսական ռեսուրսների հասանելիության և կառավարման բարելավման միջոցով տնտեսական դիմադրողականության բարձրացման ուղղությամբ: Համաձայն «Սթենդ-Բայ» պայմանավորվածության շրջանակներում Հայաստանի կատարողականի երրորդ ամփոփիչ ստուգման, որի արդյունքները հրապարակվել են 2024 թ-ի հունիսին, 2023 թ-ի դեկտեմբերի վերջի կատարողականի քանակական բոլոր չափորոշիչները և կողմնորոշիչ թիրախները կատարվել են (IMF, 2024): Սակայն ցածր գնաճը խախտել է Դրամավարկային քաղաքականության շուրջ խորհորդակցության դրույթի (անգլերեն համարժեք եզրույթը՝ Monetary Policy Consultation Clause, MPCC) ստորին արտաքին միջակայքը՝ առաջացնելով մակրոտնտեսական ռիսկեր, բացի այդ՝ կան նաև որոշակի ուշացումներ կառուցվածքային հենանիշերի ուղղությամբ առաջընթացում:

3.2 Մակրոտնտեսական կայունություն. պատմական հեռանկար և ներկա իրավիճակը

2007-2023 թթ. -ին Հայաստանի իրական ՀՆԱ-ն աճել է տարեկան միջինում 4.2 %-ով՝ 9,206 մլն ԱՄՆ դոլարից (3,149 մլրդ դրամ) հասնելով 24,086 մլն ԱՄՆ դոլարի (9,453 մլրդ դրամ): 2009 թ-ին, 2007-2009 թթ. -ի ֆինանսական ճգնաժամի հետևանքով, Հայաստանի ՀՆԱ-ն նվազել էր 14.1%-ով: Համաշխարհային տնտեսության դանդաղ աճը հանգեցրել էր Հայաստանում արտերկրից (հատկապես Ռուսաստանից) ստացվող տրանսֆերտների և ներդրումների կրճատմանը: Առավել տուժող ճյուղերից մեկը շինարարությունն էր, որի անկումը մեծ ազդեցություն ունեցավ երկրի տնտեսական ակտիվության կրճատման վրա: Սա միակ դեպքը չէր, երբ արտաքին գործոնները, մասնավորապես Ռուսաստանում տեղի ունեցող զարգացումները, էական ազդեցություն ունեցան Հայաստանի տնտեսության վրա: 2016 թ-ին Հայաստանում տնտեսական աճի տեմպը նվազել էր մինչև 0.2%, ինչը պայմանավորված էր նավթի գների անկման և արևմտյան պատժամիջոցների պատճառով Ռուսաստանի տնտեսության անկմամբ, ինչպես նաև մետաղների միջազգային գների նվազմամբ: Հաջորդ մի քանի տարիների ընթացքում վերականգնվելուց հետո 2020 թ-ին՝ ՔՈՎԻԴ-19 համավարակի և Լեռնային Ղարաբաղում պատերազմի հետևանքով, ՀՆԱ-ն նվազել է 7.2%-ով: Այնուամենայնիվ, 2020 թ-ից ի վեր Հայաստանի տնտեսությունը աճում է տպավորիչ տեմպերով՝ իր ներուժից շատ ավելի բարձր տեմպերով: 2022 թ-ին ՀՀ տնտեսական աճը կազմել է 12.6%, իսկ 2023 թ-ին՝ 8.3%: Վերջին երեք տարիներին գրանցված բարձր տնտեսական աճի հիմնական պատճառներից են արտաքին պահանջարկի բարենպաստ շուկր, միգրացիայի և Ռուսաստանից կապիտալի ներհոսքի դրական ազդեցությունը: ՌԴ քաղաքացիների, այդ թվում՝ ավանդական զբոսաշրջիկների և ՏՏ ոլորտի բարձրակարգ մասնագետների, ներհոսքը հանգեցրել է Հայաստանից ծառայությունների արտահանման ծավալների աճին, որն իր հերթին նպաստել է 2022 թ-ին (13.5%-ով) և 2023 թ-ին (9.9%-ով) դրամի արժևորմանը:

Արժևորումը նաև արտահայտվել է 2022-2023 թթ-ին ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՆԱ-ի կտրուկ աճով, ինչը համեմատաբար ավելի բարձր էր, քան դրամով արտահայտված ՀՆԱ-ի աճը:

Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ-ն ընթացիկ ԱՄՆ դոլարով և իրական ՀՆԱ-ի հավելվածը, 2007-2023 թթ.




Աղբյուր՝ ԱՄՀ (2007-2022 թթ-ի համար), Արմստատ (2023 թ-ի համար)

ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի տեսանկյունից՝ առևտրի և ծառայությունների ոլորտը եղել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը, մինչդեռ արդյունաբերության և գյուղատնտեսության մասնաբաժինները վերջին տասնամյակում նվազել են (Գծապատկեր 2): Դիտարկված ժամանակահատվածում մեծածախ և մանրածախ առևտրի տեսակարար կշիռը ՀՆԱ կառուցվածքում շարունակել է կայուն մնալ, մինչդեռ ֆինանսական և ապահովագրական գործունեության և տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) մասնաբաժիններն աճել են՝ նպաստելով ծառայությունների ոլորտի տնտեսական կարևորության բարձրացմանը: Ընդհանուր առմամբ, ՀՆԱ-ում առևտրի և ծառայությունների կշիռը 2011 թ-ի 41%-ից աճել է՝ 2023 թ-ին կազմելով 59% (Armstat, 2023; ArmStatBank Database):⁴ 2023 թ-ին Հայաստանում 8.3 % տնտեսական աճի հիմնական շարժիչներից են եղել առևտուրը, ՏՀՏ-ն և շինարարությունը՝ համապատասխանաբար 2.7, 1.5 և 1.1 տոկոսային կետերով:

⁴ Armstat, ArmStatBank Database, հասանելի 2024 թ-ի Ապրիլի 8-ի դրությամբ <https://bit.ly/4bV6bgX>


Գծապատկեր 2. ՀՀ տնտեսական աճի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2011-2023 թթ.



Աղբյուր՝ Արմաստատ

Ծախսային բաղադրիչների տեսանկյունից՝ սպառումը և ավելի քիչ չափով ներդրումները եղել են տնտեսական աճի շարժիչները: 2007-2023 թթ-ին և՛ տնային տնտեսությունների, և՛ պետական հիմնարկների սպառման ծավալները զգալիորեն աճել են: 2022 և 2023 թվականներին տնտեսական աճի վրա արտահանման ազդեցությունը զգալիորեն աճել է: Օրինակ, եթե 2007 թ-ին զուտ արտահանումը կազմել է շուրջ -629 մլրդ դրամ, ապա 2022 թ-ին արտահանման և ներմուծման տարբերությունը կրճատվել է մինչև -83 մլրդ դրամ, իսկ 2023 թ-ին հասել է շուրջ -77 մլրդ դրամի: Արտաքին պահանջարկի այս տպավորիչ աճի մեջ մեծ էր Ռուսաստանի տնտեսության դերը: Ռուսաստանի նկատմամբ կիրառված արևմտյան պատժամիջոցները սահմանափակեցին այլ երկրներից դեպի Ռուսաստան արտահանումը, որի հետևանքով ավելացավ Հայաստանի արտահանման ծավալները Ռուսաստան: 2022 թ-ին Հայաստանից դեպի Ռուսաստան արտահանումը եռապատկվել է: Հարկ է նշել, որ թեև տեղական արտահանումը (անգլերեն համարժեք եզրույթը՝ domestic export) ևս աճել է, սակայն դեպի Ռուսաստան արտահանման աճը հիմնականում պայմանավորված էր վերաարտահանման աճով: Ինչ վերաբերում է համախառն կապիտալի կուտակմանը, ապա վերջին տասնամյակների, և հատկապես վերջին երկու տարիների ընթացքում, իրականացված ներդրումների մեծ մասը ուղղվել է բնակելի շենքերի կառուցման:

Գծապատկեր 3. ՀՀ ՀՆԱ-ն՝ ըստ ծախսային բաղադրիչների, 2007-2023 թթ.



Աղբյուր՝ Արմատատ


2008 թ-ին Հայաստանի ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է և կազմել 1,659 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 14.2%-ը)՝ նախորդ տարվա 677 մլն ԱՄՆ դոլարի (ՀՆԱ-ի 7.4%-ը) փոխարեն: 2008 թ-ին Հայաստանի ապրանքային առևտուրը կրճատվել է պղնձի, երկաթամիահալվածքի, ադամանդի, անմշակ ոսկու և ոսկերչական իրերի արտահանման նվազման հաշվին, ինչն իր հերթին պայմանավորված էր միջազգային ապրանքային շուկաներում գների անկմամբ (օրինակ, պղնձի միջազգային գների կտրուկ անկումը): Բացի այդ, ռուս-վրացական պատերազմը 2008 թ-ի երրորդ եռամսյակում բարդացրել էր Հայաստանից բեռնափոխադրումների և արտահանման գործընթացը: Հետագա տարիներին Հայաստանի ընթացիկ հաշվի պակասուրդը բարելավվել է հիմնականում համաշխարհային տնտեսության, մասնավորապես հիմնական գործընկեր երկրներում արձանագրված տնտեսական զարգացումների հաշվին:

2021 թ-ին Հայաստանի ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատվել է մինչև 483 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2022 թ-ին արձանագրվել է ընթացիկ հաշվի հավելուրդ: Հավելուրդի ձևավորմանը նպաստել են Հայաստանից Ռուսաստան վերաարտահանման կտրուկ աճը և դեպի Հայաստան դրամական փոխանցումների մեծածավալ ներհոսքը՝ պայմանավորված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով միգրացիոն հոսքերով: 2022 թ-ին Ռուսաստանի նկատմամբ արևմտյան տնտեսական պատժամիջոցները հնարավորությունների պատուհան բացեցին հայ արտահանողների համար, ինչը հանգեցրեց ինչպես Հայաստանից Ռուսաստան վերաարտահանման, այնպես էլ տեղական արտահանման աճին: Այս ընթացքում աճել է նաև ծառայությունների արտահանումը, որը հիմնականում պայմանավորված էր Ռուսաստանից զբոսաշրջիկների և միգրանտների ներհոսքով (2022 թ-ին

ծառայությունների հաշվեկշիռը կազմել էր 1,719 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ 2021 թ-ին կազմում էր 390 մլն ԱՄՆ դոլար):

2023 թ-ին արտաքին հատվածից փոխանցվող ազդեցությունները սկսել են թուլանալ, ինչը արտահայտվել է նաև ընթացիկ հաշվի վարքագծում: Ընթացիկ հաշիվը պակասուրդային է եղել, դրա բաղադրիչ հանդիսացող երկրորդային եկամուտների հաշվեկշիռը կրճատվել է՝ 2023 թ-ին հասնելով 289 մլն ԱՄՆ դոլարի՝ 2022 թ-ի 1,734 մլն ԱՄՆ դոլարի դիմաց:

Գծապատկեր 4. ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը, 2007-2023 թթ.



Աղբյուր՝ ԱՄՀ


Ընթացիկ հաշվի տևական պակասուրդի արդյունքում Հայաստանը արտաքին աշխարհից ավելի շատ պարտավարություններ ստանձնողի, քան տրամադրողի դերում էր: Սակայն, 2022 թ-ին երկրի ֆինանսական հաշիվը եղել է հավելուրդային: 2022 թ-ին ֆինանսական հաշվի գուտ վարկավորումը կազմել է 272 մլն ԱՄՆ դոլար, 2021 թ-ի 369 մլն ԱՄՆ դոլար գուտ փոխառության դիմաց: 2023 թ-ին, երբ ռուս-ուկրաինական պատերազմի դրական ազդեցությունները սկսել են թուլանալ, ֆինանսական հաշիվը կրկին դարձել է պակասուրդային՝ կազմելով -495 մլն ԱՄՆ դոլար:

2022թ-ին Հայաստանում ՕՈՒՆ-ի գուտ ներհոսքը (գուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնումը) նախորդ տարվա համեմատ աճել է 2.7 անգամ՝ հասնելով գրեթե 1 մլրդ ԱՄՆ դոլարի, ինչը հանդիսանում է պատմական ռեկորդ Հայաստանի համար: Հարկ է նշել, որ նման տպավորիչ աճը մասամբ պայմանավորված էր դրամի արժևորմամբ, մասնավորապես, հավելաճի կառուցվածքում դրամի արժևորման նպաստումը կազմել է 13.5% (Modex, 2023): Ինչպես նաև պետք է նկատել, որ ՕՈՒՆ-ի ներհոսքում զգալի է վերաներդրված շահույթի կշիռը (օտարերկրյա ներդրողի շահույթի չբաշխված մասը, որը

վերաներդրվում է օտարերկրյա ներդրումով կազմակերպությունում): 2023 թ-ին վերաներդրված շահույթը կազմել է ՕՈՒՆ-ի գուտ ներհոսքի 66.1%-ը:

Ինչ վերաբերում է պորտֆելային ներդրումներին, ապա 2022 թ-ին ներդրումների գուտ արտահոսքը կազմել է 1,356 մլն ԱՄՆ դոլար, 2021 թ-ի 672 մլն ԱՄՆ դոլար գուտ ներհոսքի դիմաց: 2022 թ-ին պորտֆելային ներդրումների գուտ արտահոսքը (գուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում) կազմել է 1,032 մլն ԱՄՆ դոլար՝ 2021 թ-ի 54 մլն ԱՄՆ դոլարի դիմաց: Այս նշանակալի աճը պայմանավորված էր ավանդային կազմակերպությունների (բացի կենտրոնական բանկից) կողմից պարտքի արժեթղթերում իրականացրած ներդրումների աճով (899 մլն ԱՄՆ դոլար): Ռուս-ուկրաինական պատերազմի սկսվելուց ի վեր Ռուսաստանից Հայաստան մարդկանց մեծ ներհոսքը հանգեցրել է ՀՀ բանկային համակարգում ավանդների, միջնորդավճարների ու այլ վճարների գծով եկամուտների կտրուկ աճի, և իրենց ակտիվները արդյունավետ կառավարելու նպատակով բանկերը ավելացրել են իրենց ներդրումները պարտքային գործիքներում, ինչը արտացոլվել է պորտֆելային ներդրումների աճի մեջ: 2023 թ-ին, պորտֆելային ներդրումների հաշվեկշիռը կրկին դարձավ բացասական (-64.5 մլն ԱՄՆ դոլար):

Գծապատկեր 5. ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը, 2007-2023թթ.




Աղբյուր՝ ԱՄՀ

2007-2023 թթ-ին Հայաստանի արտաքին ակտիվների պաշարները աճել են 6,922 մլն ԱՄՆ դոլարով և 2023 թ-ի վերջի դրությամբ կազմել 9,214 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտաքին պարտավորությունների պաշարները աճել են 15,884 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 20,916 մլն ԱՄՆ դոլար: Պարտավորությունների աճն առավելապես պայմանավորված էր ՀՀ առևտրային բանկերի կողմից ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների, կառավարության արտաքին վարկերի, ինչպես նաև օտարերկրյա

ուղղակի ներդրողների կողմից իրենց ընկերություններում իրականացրած վերաներդրումների աճով: Ինչ վերաբերում է ակտիվների դիրքի փոփոխությանը՝ այն հիմնականում պայմանավորված էր ավանդային կազմակերպությունների (բացի կենտրոնական բանկից) արտաքին ակտիվների դիրքի և ՀՀ պահուստային ակտիվների աճով:

2022 թ-ի վերջին ՀՀ ԿԲ միջազգային պահուստները նախորդ տարվա վերջի համեմատ աճել են 27%-ով՝ հասնելով 4,112 մլն ԱՄՆ դոլարի, իսկ 2023 թ-ի վերջի դրությամբ կրճատվել են 12%-ով և կազմել 3,608 մլն ԱՄՆ դոլար: 2007 թ-ից մինչև 2023 թ-ը ԿԲ միջազգային պահուստային ակտիվների արժեքն աճել է 2.2 անգամ:

Գծապատկեր 6. ՀՀ զուտ միջազգային ներդրումային դիրքը, 2007-2023 թթ. տարեվերջի դրությամբ



Աղբյուր՝ ԱՄՀ


Հայաստանի պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգը ունի շատ բարձր կենտրոնացվածություն: Պետական ֆինանսների վիճակագրությունը սահմանափակվում է պետական և համայնքային բյուջեներով, մինչդեռ կան զգալի թվով պետական կազմակերպություններ, որոնք դասվում են կառավարությանը պատկանող առևտրային կազմակերպությունների շարքին, որոնց վերաբերյալ համապարփակ տվյալներ չկան: Կենտրոնացվածությունը ակնհայտ է դառնում պետական և համայնքային բյուջեների ծախսերը ու եկամուտները ուսումնասիրելիս: Օրինակ՝ 2023 թ-ին պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,548 մլրդ դրամ՝ 10.5 անգամ ավելի, քան համայնքների բյուջեների ծախսերը (մոտ 243 մլրդ դրամ):

Հայաստանում հարկային եկամուտները պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրն են (2007-2023 թթ-ին միջինում 92%-ը ընդհանուր եկամուտների): 2023 թ-ին Հայաստանի պետական բյուջեի եկամուտները կազմել են 2,359 մլրդ դրամ (6,010 մլն ԱՄՆ դոլար⁵)՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.3%-ով, որը հիմնականում պայմանավորված էր շահութահարկի, ԱԱՀ-ի և եկամտային հարկի գծով մուտքերի աճով: 2023 թ-ի պետական բյուջեի հարկային եկամուտների աճի վրա դրական ազդեցություն են ունեցել Հայաստանից Ռուսաստան վերաարտահանման աճը և ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով դեպի Հայաստան միգրացիոն բարձր հոսքերը: Մասնավորապես, ԱԱՀ-ի մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծվող ապրանքներից (որոնց մի մասը այնուհետև վերաարտահանվել է Ռուսաստան) ստացված մուտքերի աճով: Եկամտային հարկի աճը հիմնականում պայմանավորված էր ՌԴ քաղաքացիների և Ռուսաստանում գործող ընկերությունների տեղափոխմամբ Հայաստան: Այս ներհոսքը հատկապես նշանակալի էր համեմատաբար բարձր վարձատրվող SS ոլորտում:

2007-2023 թթ-ին պետական բյուջեի ծախսերն աճել են 4 անգամ՝ 635 մլն դրամից հասնելով 2,548 մլրդ դրամի: 2023 թ-ին պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 13.6%-ով՝ կազմելով 2,548 մլրդ դրամ (6,491 մլն ԱՄՆ դոլար):

Վերջին տարիներին Հայաստանի կառավարությունը պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման համար սկսել է ավելի շատ հենվել ներքին, քան արտաքին աղբյուրների վրա: Օրինակ՝ 2020 թ-ից ի վեր պակասուրդը ամբողջությամբ ֆինանսավորվում է ներքին աղբյուրների հաշվին:

Գծապատկեր 7. ՀՀ պետական բյուջեի եկամուտները և ծախսերը, 2007-2023թթ.




⁵ Ըստ 2022 թ-ի միջին տարեկան փոխարժեքի, հասանելի է ՀՀ ԿԲ կայք էջում հետևյալ հղմամբ՝ <https://is.gd/2Y07MM>

Աղբյուր՝ ԱՄՀ, ՀՀ ՖՆ

Հայաստանի պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում ամենամեծ կշիռը ունեն սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերը (2008-2023 թթ-ին միջինում ընդհանուր ծախսերի 28%-ը), ներառյալ կենսաթոշակների վճարումը և սոցիալական նպաստների հատկացումը: Պետական ծախսերի հաջորդ երկու հիմնական ուղղություններն են պաշտպանությունը և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունները (2008-2023 թթ-ին յուրաքանչյուրը կազմել է ընդհանուր ծախսերի միջինում 17%-ը): Դիտարկվող ժամանակահատվածում ծախսերի կառուցվածքում պաշտպանության և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների կշիռները աճել են համապատասխանաբար 6 և 8 տոկոսային կետերով: 2008-2023 թթ-ին, ընդհանուր առմամբ, սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերն աճել են 3 անգամ, իսկ պաշտպանության և ընդհանուր հանրային ծառայությունների ծախսերը՝ համապատասխանաբար 4 և 5 անգամ: 2023 թ-ին սոցիալական պաշտպանությանն առնչվող ծախսերը կազմել են 706 մլրդ դրամ (1,798 մլն ԱՄՆ դոլար), պաշտպանության ոլորտին հատկացվել է 526 մլրդ դրամ (1,340 մլն ԱՄՆ դոլար) իսկ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով ծախսերը կազմել են 523 մլրդ դրամ (1,331 մլն ԱՄՆ դոլար):

2007-2023 թթ-ին տարեկան պետական ծախսերի 85%-ը միջինում բաժին է հասել ընթացիկ ծախսերին, 15%-ն ուղղվել է կապիտալ ծախսերի իրականացմանը: Այս տարիների ընթացքում ընթացիկ ծախսերն աճել են մոտ 5 անգամ, իսկ կապիտալ ծախսերը՝ 2.5 անգամ:

Գծապատկեր 8. ՀՀ պետական բյուջեի ծախսերը, 2008-2023 թթ.




Աղբյուր՝ ԱՄՀ, ՀՀ ՖՆ

Վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանի պետական պարտքը զգալիորեն աճել է՝ 2023 թ-ի վերջին կազմելով 4,659 մլրդ դրամ (11.5 մլրդ ԱՄՆ դոլար): 2020 և 2021 թվականներին, ԲՈՎԻԴ-19 համավարակով պայմանավորված, ՀՆԱ-ի նկատմամբ պարտքի բեռը հատել է հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% սահմանային շեմը: 2022 թ-ին, ՀՀ տնտեսության համար ձևավորված նպաստավոր պայմանների շնորհիվ, կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն էականորեն նվազել է՝ կազմելով 49.2%, այնինչ կառավարությունը նախատեսում էր այս թիրախին հասնել մինչև 2026 թ-ը: Պետական պարտքի մոտ 95%-ը կազմում է կառավարության պարտքը, իսկ մնացած մասը՝ ԿԲ-ի պարտքը:

Տարիների ընթացքում զգալիորեն աճել են նաև պարտքի սպասարկման ծախսերը: 2007 թ-ին կառավարության պարտքի սպասարկման տոկոսավճարների վճարմանն ուղղվել է պետական բյուջեի ծախսերի 1.6%-ը, մինչդեռ 2022 թ-ին այս ցուցանիշը հասել է 8.8%-ի, իսկ 2023 թ-ին՝ 10.3%-ի: Այնուամենայնիվ, կառավարության պարտքը մնում է կառավարելի: Դրամային պարտքի մասնաբաժնի աճը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ներքին պարտքն աճում է ավելի արագ տեմպով, քան արտաքին պարտքը, բարենպաստ են անդրադարձել պարտքի կառավարման վրա: 2018 թ-ի վերջի

դրությամբ կառավարության պարտքի 18.7%-ն էր միայն դրամով, այնինչ 2023 թ-ի վերջի դրությամբ դրամով պարտքի մասնաբաժինը կազմել է 42.6%:⁶

Գծապատկեր 9. ՀՀ պետական պարտքը և կառավարության պարտքի սպասարկումը, 2007-2023 թթ .




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2023 թ-ի վերջի դրությամբ փողի զանգվածը կազմել է 5,182 մլրդ դրամ, ինչը իր պատմական առավելագույն արժեքն է և 7.5 անգամ ավելի է, քան 2007 թ-ի տարեվերջի ցուցանիշը: Վերջին տարիներին փողի զանգվածի հավելաճի տեմպը արագացել է՝ 2021 թ-ի 13.1%-ից հասնելով 17.4%-ի 2023 թ-ին, ինչը պայմանավորված էր ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից ի վեր կապիտալի և աշխատուժի մեծ ներհոսքի արդյունքում արձանագրված բարձր տնտեսական ակտիվությամբ, դրամական փոխանցումների աճով և կապիտալի մեծ ներհոսքով, որոնք արտացոլում են մարդկանց և կապիտալի ներհոսքը Ռուսաստանից: Ավելին, 2008 թ-ից ի վեր փողի զանգվածը աճել է ավելի արագ, քան եկամուտները՝ հանգեցնելով փողի զանգվածի շրջապտույտի արագության (անգլերեն համարժեք եզրույթը՝ income velocity of the broad money) նվազման, որը հաշվարկվում է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերակցություն, և նպաստում է տնտեսությունում գնաճային միջավայրի ձևավորմանը: 2008 թ-ին անվանական ՀՆԱ-ի մեծությունը 5 անգամ գերազանցում էր փողի զանգվածի արժեքը, մինչդեռ 2023 թ-ին այս հարաբերակցությունը կազմում էր 1.8:

⁶ MoF, “State budget” (web page), MoF website, հասանելի է 2024 թ-ի ապրիլի 8-ի դրությամբ, <https://is.gd/3esrgB>


Գծապատկեր 10. ՀՀ փողի զանգվածը, 2007-2023 թթ. տարեկերջի դրությամբ



Աղբյուր՝ ԱՄՀ, ՀՀ ՎԲ

2013 թ-ից մինչև ԲՈՎԻԴ-19 համավարակը Հայաստանում գանձի մակարդակը ցածր էր: Մինչ այդ, 2008 թ-ին գները բարձրացել են ֆինանսական ճգնաժամով պայմանավորված և 2010 թ-ին՝ միջազգային շուկաներում պարենային ապրանքների գների կտրուկ աճի պատճառով: Վերջին մի քանի տարիներին Հայաստանում գնաճի տեմպն արագացել է՝ պայմանավորված հիմնականում արտաքին գործոններով: Միջին տարեկան գնաճի տեմպը արգացել է՝ 2020 թ-ի 1.2%-ից հասնելով 7.2%-ի 2021 թ-ին և 8.6%-ի 2022 թ-ին, ինչը շատ ավելի բարձր է գնաճի թիրախային միջակայքի 5.5% վերին շեմից: Գնաճի այս արագացմանը նպաստել են ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից ի վեր դեպի Հայաստան մարդկանց ներհոսքով պայմանավորված ներքին պահանջարկի աճը, ինչպես նաև պարենային ապրանքների համաշխարհային գների աճը:

Գծապատկեր 11. Գնաճը ՀՀ-ում, 2007-2023 թթ.



Աղբյուր՝ Արմստատ

Արագացող գնաճը զսպելու համար ԿԲ-ն խստացրել էր դրամավարկային պայմանները՝ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Մասնավորապես, 2022 թ-ին վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվել է մի քանի անգամ՝ տարեվերջին հասնելով 10.75%-ի: Համաշխարհային տնտեսությունում գնաճային միջավայրի թուլացման և ՀՀ ԿԲ-ի իրականացրած դրամավարկային քաղաքականության արդյունքում 2023 թ-ին գնաճը աստիճանաբար դանդաղեց և հայտնվեց նպատակային միջակայքի ստորին շեմից (2.5%) ներքև: Արդյունքում, ԿԲ-ն 2023 թ-ի ընթացքում աստիճանաբար իջեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը մինչև 9.25%: 2024 թ-ին վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազման միտումը շարունակվել է և 2024 թ-ի նոյեմբերի 6-ի դրությամբ վերաֆինանսավորման տոկոսադրույքը կազմել է 7.25%:⁷ Ընդհանուր առմամբ, վերջին տասնամյակների ընթացքում մշտապես ԿԲ-ն արագ կերպով արձագանքում էր գնաճային ճնշումներին:

Թեև տոկոսադրույքները եղել են ԿԲ-ի հիմնական գործիքը, տարիների ընթացքում ֆինանսական կայունության ապահովման նպատակով՝ երկրի գլխավոր ֆինանսական կառույցը նաև փոփոխություններ է իրականացրել պարտադիր պահուստավորման նորմատիվներում, ինչպես նաև իրականացրել է բաց շուկայական գործառնություններ: Օրինակ՝ 2014-2016 թթ-ին Հայաստանում շարունակվում էր պահպանվել գնանկումային միջավայր և վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխության հետ միասին ՀՀ ԿԲ-ն՝ դրամավարկային քաղաքականության շրջանակներում, կիրառել է նաև այլ գործիքներ: Մասնավորապես, 2014 թ-ին գնաճը

⁷ CBA, “MP Instruments Interest rates” (web page), հասանելի է 2024 թ-ի նոյեմբերի 6-ի դրությամբ, <https://is.gd/k6V6RX>

նվազել է կանխատեսվածից ավելի արագ տեմպերով և մոտեցել թիրախային միջակայքի ստորին շեմին՝ պայմանավորված հիմնականում դանդաղ տնտեսական աճով և որոշ պարենային ապրանքների գների զգալի անկմամբ: Դրամավարկային պայմանների թուլացման նպատակով՝ ԿԲ-ն ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց ԿԲ-ում դրամով տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը 4%-ից իջեցրել է 2%, իսկ արտարժույթով ներգրավված միջոցների դեպքում՝ սկզբում բարձրացրել՝ 12%-ից դարձնելով 24%, այնուհետև իջեցրել՝ սահմանելով 20 %-ի չափով:⁸

Դրամավարկային քաղաքականության գործիքակազմում ԿԲ-ն նաև օգտագործում է լումբարդային ռեպո տոկոսադրույքը: Օրինակ, 2014 թ-ին գների և ֆինանսական կայունության հետ կապված ռիսկերը կառավարելու նպատակով, ի թիվս այլ քայլերի, ԿԲ-ն լումբարդային ռեպո տոկոսադրույքը 8.25%-ից բարձրացրել է մինչև 21%:

2015 թ-ին Հայաստանի ֆինանսական համակարգը բախվեց բազմաթիվ արտաքին ցնցումների, այդ թվում՝ միջազգային շուկաներում հանքահումքային մետաղների գների նվազումը, ՌԴ տնտեսության վատթարացումը և այլն: Ի հավելումս վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխության, ՀՀ ԿԲ-ն կիրառել է նաև մի շարք այլ միջոցառումներ, մասնավորապես՝ բանկերի կողմից ներգրավված երկարաժամկետ միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման գրոյական կամ թույլ մեխանիզմ, արտաքին վարկանիշերի առկայության դեպքում ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների և արտահանմամբ զբաղվող վարկառուների արտարժույթային վարկերի համար սահմանվող ռիսկի կշիռների մեղմացում (CBA, 2016):

2016 թ-ին գնանկումային միջավայրը Հայաստանում շարունակում էր պահպանվել և ԿԲ-ն ստիպված էր դրամավարկային պայմանները աստիճանաբար թուլացնել, ինչը դրական ազդեցություն ունեցավ սպառման վրա: Մասնավորապես, ԿԲ-ն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչպես նաև դրան զուգահեռ նվազեցրել է արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման դրույքաչափը՝ 20%-ից իջեցնելով 18%: Այս քայլերի արդյունքում ինչպես միջբանկային, այնպես էլ վարկային և ավանդային շուկաներում տոկոսադրույքները նվազել են, իսկ վարկավորումը՝ փոքր-ինչ աճել: ԿԲ-ն ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց ԿԲ-ում դրամով տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը 4%-ից իջեցրել է 2%, իսկ արտարժույթով ներգրավված միջոցների դեպքում դրանց պարտադիր պահուստավորման նվազագույն չափը մինչ այսօր չի փոխվել, մինչդեռ

⁸ ARLIS, the CBA board resolution No. 39 on the “Approval of regulation 2 on “Regulation of banking, prudential standards for banking” of February 9, 2007, Հասանելի է 2024 թ-ի ապրիլի 8-ի դրությամբ <https://is.gd/RHKv88>


ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նվազագույն չափը վերջին անգամ փոխվել է 2021 թ-ին և ներկայում կազմում է 4%:

Ընդհանուր առմամբ վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանի գնաճային միջավայրի ձևավորման վրա ազդել են ինչպես դրամավարկային, այնպես էլ ոչ դրամավարկային գործոններ, ինչն արտացոլում է տնտեսության ու միջազգային շուկաների փոխկապակցվածությունը և գների կայունության ապահովման նպատակով արդյունավետ դրամավարկային քաղաքականությունը: Հայաստանում գների վրա ազդող ամենակարևոր ոչ-դրամավարկային գործոններից են միջազգային ապրանքային շուկաներում գների տատանումները և համաշխարհային արժեշրջանների խաթարումը, քանի որ Հայաստանը իր պարենային ապրանքների կարիքը մեծապես բավարարում է ներմուծման միջոցով, ինչպես նաև հիմնական գործընկեր երկրներում տնտեսական զարգացումները՝ հաշվի առնելով, որ Հայաստանի արտահանումը խիստ կենտրոնացված է: Ինչ վերաբերում է դրամավարկային գործոններին, ապա ԿԲ-ն ակտիվորեն կառավարում է փողի առաջարկը ու պահանջարկը իր դրամավարկային քաղաքականության գործիքակազմի, ներառյալ՝ տոկոսադրույքների և պարտադիր պահուստավորման դրույքաչափերի, միջոցով:

1990-ականների սկզբից ի վեր Հայաստանը աջակցություն է ստանում զարգացած երկրներից և միջազգային կազմակերպություններից՝ հիմնականում երկրի զարգացման ու բարեկեցության բարելավման նպատակով: 2022 թ-ին Հայաստանի ստացած զուտ Զարգացման պաշտոնական աջակցությունը (ԶՊԱ) (անգլերեն համարժեք եզրույթը՝ Official Development Assistance, ODA) կազմել է 300 մլն ԱՄՆ դոլար, ինչը 85.5 %-ով գերազանցում է 2021 թ-ի ցուցանիշը և 12.9 %-ով՝ 2007 թ-ի ցուցանիշը: ԶՊԱ-ն իրենից ներկայացնում է արտոնյալ պայմաններով դրամաշնորհներ և վարկեր (վարկերը պետք է ունենանան առնվազն 25%-ի չափով դրամաշնորհային բաղադրիչ՝ 10% արտոնյալ տոկոսադրույքով), որոնք տրամադրվում են Զարգացման աջակցության կոմիտեի (ԶԱԿ) անդամ երկրների, միջազգային կազմակերպությունների, ԶԱԿ անդամ չհանդիսացող երկրների կողմից զարգացող երկրների պետական կառավարման մարմիններին՝ տնտեսական զարգացումը և բարեկեցությունը խթանելու նպատակով: Հարկ է նշել, որ թեև Հայաստանի ստացած զուտ ԶՊԱ-ն՝ ընթացիկ ԱՄՆ դոլարով արտահայտված, վերջին 15 տարում աճել է, դրա կշիռը պետական բյուջեի ծախսերում նվազել է՝ 2007թ-ի 17.0%-ից 2022 թ-ին հասնելով 7.3%-ի: Ընդհանուր առմամբ, միջազգային դոնորների ֆինանսավորումը Հայաստանում (միջազգային դոնորների կողմից կառավարությանը տրամադրվող բոլոր վարկերն ու դրամաշնորհները)՝ հիմնականում ուղղվում է ենթակառուցվածքների բարելավմանը: Օրինակ՝ 2022 թ-ին միջազգային դոնորների ֆինանսավորման 36%-ն ուղղվել է ճանապարհային ցանցի բարելավմանը և քաղաքաշինությանը, 17%-ը՝ ոռոգման, ջրամատակարարման և ջրահեռացման

համակարգերի բարելավմանը, իսկ 16%-ը՝ կրթությանը և ենթակառուցվածքների բարելավմանը (ACSES, 2023):

Գծապատկեր 12. Հայաստանի ստացած զուտ զարգացման պաշտոնական աջակցությունը, 2007-2022 թթ.



Աղբյուր՝ ՀԲ

3.3. Մակրոտնտեսական խոցելիության հիմնական աղբյուրները և հիմնական մակրոտնտեսական ռիսկերը

2022 և 2023 թվականներին Հայաստանի տնտեսությունը զգալիորեն աճել է սպառման և ծառայությունների ոլորտի հաշվին՝ պայմանավորված Ռուսաստանից մարդկանց մեծ ներհոսքով, ինչպես նաև արտահանման ծավալի երկնիշ աճի շնորհիվ, ինչը հիմնականում պայմանավորված էր Հայաստանից Ռուսաստան վերաարտահանման աճով: Արդյունքում երկրի ընթացիկ հաշիվը և ֆինանսական հաշիվը եղել են հավելուրդային: Այնուամենայնիվ, սպասվում է, որ այս դրական ազդեցությունները առաջիկա տարիներին կթուլանան, ինչի արդյունքում Հայաստանի տնտեսության աճի տեմպը կդանդաղի: Միջազգային կառույցների, ներառյալ՝ ԱՄՀ, Համաշխարհային բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ), Եվրասիական զարգացման բանկ (ԵԱԶԲ), կանխատեսումների համաձայն՝ Հայաստանի տնտեսական աճը 2024 թ-ին կտատանվի 4.5%-ից (EBRD, 2023) 5.7%-ի (ADB, 2024; EDB, 2023) միջակայքում, իսկ 2025 թ-ին՝ 4.5%-ից (IMF, 2023; World Bank, 2024) 6.0%-ի (ADB, 2024) միջակայքում: Ակնկալվում է, որ միջնաժամկետ հեռանկարում Հայաստանի տնտեսական աճը կհասնի իր ներուժային մակարդակին՝ մոտ 5%, իսկ գնաճը կկայունանա ԿԲ-ի նպատակային 4% ցուցանիշի շուրջ: Օրինակ՝ ԱԶԲ-ի կանխատեսումների համաձայն՝ 2024 թ-ին գնաճը կկազմի 3%, իսկ 2025 թ-ին՝ 3.5%:

Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության սրումը մնում է ռիսկերի կարևոր աղբյուր: Համաձայն Համաշխարհային բանկի՝ երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճը կգույցն ապրանքային արտահանումը և լոգիստիկ խնդիրները, մինչդեռ ԱՄՆ-ն ռիսկեր է տեսնում ֆինանսական ոլորտում, մասնավորապես անշարժ գույքի ոլորտում (World Bank, 2024; IMF, 2023): Այլ ռիսկերի շարքում են Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերոջ՝ Ռուսաստանի մեկուսացումը արևմտյան շուկաներից, ինչը հնարավոր է երկարաժամկետ հեռանկարում բացասական հետևանքներ ունենա Հայաստանի տնտեսության համար (EBRD, 2023): Մյուս կողմից, ըստ միջազգային կազմակերպությունների գնահատականների, Թուրքիայի հետ ցամաքային սահմանի վերաբացման գործընթացը միջնաժամկետ հեռանկարում կարող է տնտեսական օգուտներ բերել երկրի տնտեսության համար:

Եթե կառավարությունը քայլեր չձեռնարկի կայուն տնտեսական աճի ապահովմանն ուղղված քաղաքականությունների ներդրման ուղղությամբ, ապա տնտեսական աճի տեմպը նշանակալիորեն կդանդաղի: Օրինակ, 2023 թ-ի տնտեսական աճի գլխավոր շարժիչներից մեկը Հայաստանից Վրաստանի տարածքով դեպի Ռուսաստան ավտոմեքենաների վերաարտահանումն էր: Ըստ որոշ գնահատականների՝ ավտոմեքենաների արտահանման բիզնեսը 3.5% նպաստ է ունեցել Հայաստանի ՀՆԱ-ին, մինչդեռ այս գործունեության տեսակի վճարած հարկերը կազմել են պետական բյուջեի հարկային եկամուտների 7%-ը (Chervyakov et al, 2023): 2023 թ-ի հունվարին ԵՄ-ն և ԱՄՆ-ն ընդլայնել են ավտոմեքենաների արտահանման մասով Ռուսաստանի դեմ սահմանված տնտեսական պատժամիջոցները ու պատժամիջոցներ սահմանել նաև 1.9 լիտրից ավելի աշխատանքային ծավալ ունեցող շարժիչով նոր և օգտագործված ավտոմեքենաների, ինչպես նաև էլեկտրական և հիբրիդային ավտոմեքենաների համար: Արդյունքում, Վրաստանը արգելել է իր տարածքով եվրոպական (սկսած 2023 թ-ի սեպտեմբերից) և ամերիկյան (սկսած 2023 թ-ի օգոստոսից) արտադրության մեքենաների տեղափոխումը Ռուսաստան, որը Հայաստանից Ռուսաստան ավտոմեքենաների արտահանման հիմնական ուղին էր: 2023 թ-ի օգոստոսին Հայաստանից ավտոմեքենաների վերաարտահանումը զգալիորեն նվազել է ու քանի որ ոլորտը չունի կայուն տնտեսական մոդել, դրա անկումը 2024 թ-ին բացասական ազդեցություն է ունեցել տնտեսության վրա: Նման բացասական հետևանքներ կարող են հանդիպել նաև արտահանման ուղղվածություն ունեցող այլ ոլորտներում ևս:

ԱԱՀ-ով գանձվող ապրանքների արտահանման կրճատումը կարող է հանգեցնել պետական բյուջեի հարկային եկամուտների նվազմանը: Հարկային եկամուտների վրա նաև կարող է բացասական ազդեցություն ունենալ ռուս-ուկրաինական պատերազմի սկսվելուց հետո Հայաստան տեղափոխված ՏՏ ընկերությունների և մասնագետների հեռանալը: ՏՏ-ն բարձր վարձատրվող ոլորտ է և ապահովում է եկամտային հարկի մասով պետական բյուջեի եկամուտների զգալի մասը (2023 թ-ին հավաքագրված

ընդհանուր եկամտային հարկի մոտ 16%-ը), ինչն, ընդ որում, մեծապես պայմանավորված էր վերջին տարիներին Ռուսաստանից մարդկանց և ընկերությունների ներհոսքով:

Ինչ վերաբերում է պարտքային բեռին, ապա 2024 թ-ին ակնկալվում է, որ Հայաստանի պետական պարտքը կաճի: Մասնավորապես, ՀՀ ֆինանսների նախարարությունն ակնկալում է, որ 2024 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական պարտքը կկազմի 5,269 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 52.1%-ը և 2023 թ-ի տարեվերջի համեմատ կաճի 1.5 տոկոսային կետով: Մպասվում է, որ կառավարության պարտքը կկազմի 5,037 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.8%-ը, ինչը 1.7 տոկոսային կետով գերազանցում է 2023 թ-ի տարեվերջի դրությամբ արձանագրված ցուցանիշը:⁹ Ավելի վաղ ֆինանսների նախարարը հայտարարել էր, որ ՀՀ կառավարությունն ամեն ինչ կանի, որպեսզի 2024 թ-ին պետական պարտքի մակարդակը մնա 50%-ից ցածր (Papoyan, 2023):

Պետք է նշել, որ Լեռնային Ղարաբաղի կառավարությունը, տարբեր հիմնադրամներ և քաղաքացիները 2023 թ-ի վերջի դրությամբ հայաստանյան բանկերում ունեցել են 315 մլրդ դրամի պարտավորություններ, որոնց մեծ մասը Հայաստանի կառավարությունը պատրաստվում է վերցնել իր վրա: Մասնավորապես ՀՀ կառավարությունը ստանձնելու է այս պարտավորությունների 70%-ը, իսկ ֆինանսական հաստատությունները՝ 30%-ը: Այս քայլը ևս կավելացնի պետական պարտքի բեռը: Ավելին, կառավարությունը առաջիկա տարիներին նախատեսում է իրականացնել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների բնակարանային ապահովման ծրագրեր: Այս նախաձեռնությունները կարող են լրացուցիչ ճնշում առաջացնել բյուջեի ծախսերի համար:

⁹ MoF, the Draft Law of the Republic of Armenia on the “2025 State budget” (in Armenian), հասանելի է 2024 թ-ի նոյեմբերի 7-ի դրությամբ <https://bit.ly/4fhRYgl>

4. Հայաստանի ֆինանսական հատվածի կայունությունը

Ինչպես Եվրոպայի և հատկապես հետխորհրդային տարածքի շատ երկրներ, Հայաստանը ևս ունի փոքր ֆինանսական հատված, որտեղ գերակշռում են բանկերը: Այս հատվածն անցել է մի քանի ճգնաժամի միջով՝ ինչպես գլոբալ, այնպես էլ տեղային, ինչպիսիք են համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, ՔՌՎԻԴ-19-ը, 2014 թ-ից սկսված և առայսօր շարունակվող ռուսական ներխուժումն Ուկրաինա (և դրա հետ կապված պատժամիջոցները) և Լեռնային Ղարաբաղում (ԼՂ) ռազմական գործողությունների վերսկսումը: Վերոնշյալներից երկրի տնտեսությանը հատկապես ծանր հարված է հասցրել 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, որի արդյունքում ՀՆԱ-ն կրճատվել է 14.1%-ով: Ճգնաժամին ընդառաջ, ինչպես այլ երկրներում, Հայաստանում ևս զգալիորեն աճել էր տնային տնտեսությունների վարկավորումը՝ 2008 թ-ին կրկնապատկվելով 2006 թ-ի համեմատ և կազմելով ՀՆԱ-ի 9.44%-ը՝ 2006 թ-ի 4.5% համեմատ (նշենք, սակայն, որ վարկավորման այս տեսակի ծավալն ի սկզբանե շատ ցածր էր, քանի որ 2000-ականների սկզբում Հայաստանում հիփոթեքի շուկան թերզարգացած էր):

Ճգնաժամի արդյունքում այս միտումը հակառակ ընթացք ստացավ. հիփոթեքային վարկերի աճը դանդաղեց և այդ վիճակում մնաց մինչև 2011 թ-ը, բայց միաժամանակ Հայաստանի ֆինանսական հատվածը բավականին լավ դիմակայեց փորձությանը: Մասնավորապես, արտաքին ցնցումների նկատմամբ ցածր խոցելիության և զարգացած երկրների շուկաների հետ ինտեգրման բացակայության շնորհիվ ճգնաժամից հետո ֆինանսական հատվածը նորից սկսեց բավականին արագ աճի տեմպեր ցուցաբերել: Բարելավվեց նաև նորմատիվային տնտեսական վերահսկողությունը ԿԲ-ի կողմից՝ բանկերի համար կապիտալի բուֆերների սահմանմամբ: Ուշագրավ է, որ վերջին տասնամյակում Հայաստանի ֆինանսական հատվածը և հատկապես բանկային համակարգը տպավորիչ աճ է գրանցել. մինչև 2022 թ-ին Ռուսաստանի լայնածավալ ներխուժումն Ուկրաինա Հայաստանի ֆինանսական հատվածի աճի տեմպերը բավականին բարձր էին, մասնավորապես՝ բանկային հատվածի ակտիվները 2001 թ-ի ՀՆԱ-ի 15%-ի համեմատ 2021 թ-ին հասել էին ՀՆԱ-ի 83.5%-ի:

Միաժամանակ հարկ է նշել, որ ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված՝ Հայաստանի ֆինանսական հատվածի համար սպասվում են նոր փորձություններ: Զգալիորեն արագացել է ավանդների աճն ի հաշիվ ԵԱՏՄ անդամ-գործընկեր Ռուսաստանից ակտիվների ներհոսքի՝ Արևմուտքի պատժամիջոցներից խուսափելու նպատակով: Կապիտալի շուկաները, որոնք թեև ՏՀԶԿ չափանիշներով դեռևս փոքր են ու թերկապիտալացված, նույնպես ընդլայնվել են՝ 2023 թ-ին գրանցելով

կապիտալացման 50.5% աճ 2022 թ-ի համեմատ: Հատկանշական է, որ 2021-2022 թթ-ին աճի ցուցանիշն արտառոց էր՝ 599%¹⁰:

Այս գլխում ներկայացված են Ուկրաինա Ռուսաստանի ներխուժումից հետո ՀՀ բանկային հատվածի առջև ծառայած ռիսկերը: Անկասկած, պատերազմի մեկնարկից ի վեր Ռուսաստանից Հայաստան մարդկանց մեծ ներհոսքի հաշվին ավանդների աճը կարող է ապակայունացնել բանկային հատվածը, եթե այդ ավանդները հանկարծակի դուրս բերվեն բանկային համակարգից: Ավելին, Հայաստանի և Ադրբեջանի միջև շարունակվող լարվածությունը նույնպես մեծացնում է կապիտալի արտահոսքի վտանգը: Ըստ ԱՄՆ-ի՝ հիփոթեքի և կառուցապատման ոլորտներում բանկային վարկավորումը նույնպես կարող է խնդիրներ առաջացնել բանկերի համար, եթե տնտեսության աճը դանդաղի, օրինակ՝ վերոհիշյալ աշխարհաքաղաքական լարվածության արդյունքում (IMF, 2023): Այնուամենայնիվ, պետք է նշել, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո զգալիորեն ամրապնդվել է թե՛ Հայաստանի ֆինանսական հատվածը, թե՛ ՀՀ ԿԲ-ի՝ պոտենցիալ ֆինանսական ռիսկերը վերահսկելու կարողությունը: Սակայն, չնայած ՀՀ ֆինանսական հատվածն ավելի ձկուն ու դիմացկուն է դարձել, աշխարհաքաղաքական միտումները կշարունակեն ռիսկի կարևոր աղբյուր հանդիսանալ, ինչպես նաև կօգնեն հասկանալ կառուցվածքային բարեփոխումների և դիվերսիֆիկացման առավելությունները:

4.1 Բանկային հատվածը

ՀՀ բանկային համակարգը միանշանակ ֆինանսական հատվածի հիմնական օղակն է և երկրում ֆինանսական միջնորդության կարևորագույն աղբյուրը: Այս հատվածը որպես այդպիսին սկսել է կարևորություն ձեռք բերել համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո. եթե 2012 թ-ին բանկային հատվածի ակտիվները կազմում էին ՀՆԱ-ի 58%-ը, ապա 2017 թ-ին դրանք հասել էին ՀՆԱ-ի 78%-ի, իսկ 2023 թ-ին՝ ՀՆԱ-ի 96.6%-ի կամ 9.2 տրլն դրամի (շուրջ 22.7 մլրդ ԱՄՆ դոլար)¹¹: Այս աճն ամբողջությամբ պայմանավորված է մասնավոր բանկային գործունեության աճով, քանի որ 1993-1996 թթ-ին համընդհանուր մասնավորեցման և վերակազմավորման արդյունքում Հայաստանում պետական բանկեր չեն մնացել:

ՀՀ բանկային համակարգում ներկայումս գործում է 18 բանկ, սակայն կենտրոնացումը փաստացի ցածր է. ՀՀ ԿԲ-ի տվյալներով՝ 2023 թ-ի վերջի դրությամբ Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսն ընդհանուր ակտիվների մասով կազմել է 0.092, ընդհանուր պարտավորությունների մասով՝ 0.096, ընդհանուր կապիտալի մասով՝ ընդամենը 0.

¹⁰ World Federation of Exchanges, <https://bit.ly/3LYWumR>

¹¹ CBA database, <https://bit.ly/4fOwB7c>

076:¹² ՀՀ բանկերի շարքում Արդշինբանկը խոշորագույնն է ըստ ակտիվների մեծության (4.04 մլրդ ԱՄՆ դոլար 2023 թ-ի վերջի դրությամբ) և երկրորդը՝ ըստ կապիտալի մեծության (472.7 մլն ԱՄՆ դոլար): Արդշինբանկի հետ մրցակցում և կապիտալի մեծությամբ առաջին տեղն է զբաղեցնում Ամերիաբանկը: 2024 թ-ի փետրվարին հայտարարվեց «Վրաստանի Բանկ Գրուպ» ՍՊԸ-ի (Bank of Georgia) կողմից Ամերիաբանկի ձեռքբերման մասին, որի արդյունքում Ամերիաբանկը դարձավ օտարերկրյա կապիտալով (թեև տարածաշրջանային) կազմակերպություն:


Գրեթե միևնույն ժամանակ երկրի ամենահին օտարերկրյա կապիտալով բանկը, որը գործում էր շուրջ երեք տասնամյակ, ընթանում էր հակառակ ուղղությամբ: Միջազգային ֆինանսական հսկա Էյչ-Էս-Բի-Սի Բանկը և նրա հայկական դուստր ձեռնարկությունը՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը, սկսել էին իրենց պատմությունը Հայաստանում 1996 թ-ին որպես «Միդլենդ Արմենիա Բանկ», որը 1999 թ-ին ձեռք բերվեց Էյչ-Էս-Բի-Սի-ի կողմից և 25 տարի գործեց այդ անվան ներքո: Հարկ է նշել, սակայն, որ նախորդ մի քանի տարվա ընթացքում բանկի դիրքը հայաստանյան շուկայում մրցակիցների համեմատ թուլանում էր, և 2023 թ-ի վերջի դրությամբ այն ընդամենը 12-րդն ամենախոշոր բանկն էր հանրապետությունում: 2024 թ-ի փետրվարին Արդշինբանկն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը ձեռք բերելու և վերջինիս հաճախորդների բազան իր անվան տակ ինտեգրելու պայմանագիր կնքեց, ինչի արդյունքում բարձրացավ Արդշինբանկի՝ որպես ամբողջությամբ հայկական սեփականություն հանդիսացող կազմակերպության դիրքը:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ի՝ Արդշինբանկի հետ միավորվելուց հետո ՀՀ խոշորագույն բանկերը շարունակում են «հայկական» լինել, սակայն 2020-ականներին բավականին շատ վերակազմավորումներ են տեղի ունեցել, և առկա է օտարերկրյա բաժնեմասնակցության աճի թեթև միտում: Ավելին, ՀՀ Բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանի խոսքով (2024 թ-ի փետրվար)՝ «միջազգային բրենդ ունեցող բանկի առկայությունը մեր բանկային համակարգում միշտ ցանկալի է և կարևոր» (Armbanks, 2024): Արդեն նշվել է հարևան Վրաստանում գտնվող ներդրողների կողմից Ամերիաբանկի ձեռքբերման մասին: Ըստ շահույթի հաջորդ ամենամեծ բանկն ԱՎԲԱ բանկն է, որը մասամբ պատկանում է ֆրանսիական Credit Agricole-ին և հանդիսանում է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի խոշորագույն վարկատուն: 2022 թ-ին Հայբիզնեսբանկը՝ 1991 թ-ի բարեփոխումների արդյունքում հիմնադրված առաջին բանկերից մեկը, նույնպես փոխեց սեփականատիրոջը, մասնավորապես՝ բաժնետերեր Վիտալի Գրիգորյանը, որին պատկանում էր բաժնետոմսերի 95%-ը, և Արսեն Միքայելյանը, որին պատկանում էր մնացած 5%-ը, վաճառեցին իրենց բաժնեմասերը շվեյցարական «Էմ Էֆ Էմ գլոբալ ինվեստ» ընկերությանը, որին այժմ պատկանում է

¹² Բանկերի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ, հասանելի են 2024 թ-ի մարտի 25-ի դրությամբ

բանկի բաժնետոմսերի 75%-ը: «Էմ Էֆ Էմ գլոբալ ինվեստ»-ն անմիջապես ավելացրեց բանկի կապիտալը և այն վերանվանեց «ԱՄԻՕ բանկ», սակայն նշենք, որ այդ պահից ի վեր բանկն անցել է մի շարք դժվարությունների միջով, ներառյալ 2023 թ-ին աշխատել է վնասով (Միվիլնեթ, 2022): «ՎՏԲ-Հայաստան Բանկ»-ը պահպանել է իր օտարերկրյա սեփականատերերին, թեպետ որպես ռուսական ՎՏԲ խմբի դուստր ձեռնարկություն, և որպես այդպիսին ենթարկվել է Արևմուտքի պատժամիջոցներին: Շահույթի մեծությամբ ՀՀ բանկերի շարքում 14-րդ տեղն զբաղեցնող ՎՏԲ-Հայաստանը 2022 թ-ին գրանցեց ավելի քան 1.4 մլրդ ՀՀ դրամի վնաս, որը դուլարային արտահայտությամբ կազմում է շուրջ 3.5 մլն ԱՄՆ դոլար, սակայն 2023 թ-ին կրկին շահույթ գրանցեց՝ 4.03 մլրդ ՀՀ դրամի չափով: Հարկ է նշել, որ ինչպես ՀՀ ամբողջ տնտեսության մեջ, այնպես էլ բանկային հատվածում առկա են զգալի ներդրումներ սփյուռքից, մասնավորապես՝ 18 բանկից առնվազն 4-ի կապիտալում սփյուռքահայ ներդրողներն ունեն վերահսկող բաժնեմաս:

Գծապատկեր 13. ՀՀ ռեզիդենտների ցպահանջ ավանդները, 2007-2023 թթ. տարեվերջի դրությամբ




Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Բանկերի սեփականատերերից և կարգավիճակից բացի, առկա են ՀՀ ֆինանսական հատվածի ճկունությանն ու դիմացկունությանը նպաստող այլ գործոններ ևս, մասնավորապես՝ ավանդների և վարկավորման աճը: Ավանդների մասով, ինչպես նշվել է զեկույցի ներածությունում, ավանդները կայուն աճում էին մինչև ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկը, որից հետո ավանդների ծավալը կտրուկ ավելացել է: Մասնավորապես զգալիորեն աճել են ոչ ռեզիդենտների արտարժույթային ավանդները, ինչպես նաև ռեզիդենտների ընդհանուր ցպահանջ ավանդները: Ոչ

ռեզիդենտների արտարժույթային ավանդները 2022 թ-ի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ գրեթե կրկնապատկվել են, իսկ ռեզիդենտների ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) ավելացել են 49%-ով: Ընդհանուր առմամբ, ոչ ռեզիդենտների դրամային և արտարժույթային ավանդները կազմում են Հայաստանի առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների շուրջ 24%-ը: Ավելին, բանկային համակարգում ամսական կտրվածքով առկա են զգալի դրամական ներհոսքեր տրանսֆերտների և այլ փոխանցումների տեսքով, ընդ որում ամենամեծ ներհոսքը Ռուսաստանից է: Մասնավորապես, 2024 թ-ի հունվար-սեպտեմբերին Ռուսաստանից ստացված դրամական փոխանցումները կազմում էին բանկային համակարգի միջոցով արտերկրից դրամական փոխանցումների ներհոսքի 65%-ը: Եթե այս հոսքերը փոխեն իրենց ուղղությունը, օրինակ, եթե Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցները մեղմացվեն, սա կարող է լուրջ ազդեցություն ունենալ բանկային հատվածի վրա:

Գծապատկեր 14. ՀՀ առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրամադրված վարկերը, 2004-2023 թթ. տարեվերջի դրությամբ



Աղբյուր՝ ԱՄՀ, ՀՀ ԿԲ

Ավանդների աճին զուգահեռ վերջին մեկուկես տասնամյակում Հայաստանում գրանցվել է տնային տնտեսությունների վարկավորման զգալի աճ, ընդ որում վերջին վեց տարվա ընթացքում հատկապես աճել է հիփոթեքային վարկավորումը (

): Ինչպես երևում է

-ից, 2017-2023 թթ-ին հիփոթեքային վարկավորումն աճել է 414%-ով, ընդ որում 2023 թ-ին նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 26%: 2023 թ-ի տարեվերջի դրությամբ բանկերի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալը կազմել է 1,073.8 միլիարդ դրամ: Համեմատության համար նշենք, որ արդյունաբերության ճյուղին

տրամադրված վարկերի առավելագույն ցուցանիշը 2007 թ-ից ի վեր կազմել է 655.7 մլրդ դրամ (2020 թ), որից հետո նվազել է 2023 թ-ին կազմելով 508.9 մլրդ դրամ (-22%): Նույն թվականին սպառողական վարկերը կազմել են 1,085 միլիարդ դրամ կամ ՀՀ բանկերի կողմից տրամադրված ընդհանուր վարկերի գրեթե 23%-ը: Առևտուրը և շինարարությունը վարկավորման այլ հիմնական շահառու ոլորտներից են: Ավելին՝ շինարարության ոլորտի վարկավորումը 2019-2023 թթ-ին աճել է 158%-ով:

Վարկավորման այս աճը գուզորդվել է ՀՀ բանկերի շահութաբերության աճով, թեպետ վերջինիս մի զգալի մաս պայմանավորված էր ռուսական կապիտալի մեծ ներհոսքով և բանկերի ոչ տոկոսային եկամտի աճով: Օրինակ, 2022 թ-ին Էվոկաբանկի շահույթը նախորդ տարվա համեմատ աճել էր 401%-ով, ԱՄԻՕ բանկինը՝ 211%-ով, շահույթի ամենաբարձր աճ գրանցած բանկերի եռյակը եզրափակում էր Արդշինբանկը՝ 201% աճով (Fitch, 2023): ՀՀ բանկային ոլորտի կապիտալի եկամտաբերությունը (անգլերեն համարժեք եզրույթը՝ return on equity) 2022 թ-ին կազմում էր 28%՝ 2011-2021 թթ-ի 8% միջին ցուցանիշի համեմատ, իսկ 2023 թ-ին չնայած նվազել էր նախորդ տարվա համեմատ, բայց դեռևս բավականին բարձր էր՝ 17%: Ըստ Fitch միջազգային վարկանիշային գործակալության կանխատումների՝ 2024 թ-ին այն կկազմի 15%: Բանկերից Արդշինբանկի դեպքում 2023 թ-ին կապիտալի միջին եկամտաբերությունը կազմել էր 37.2%, որը, թեև ցածր է 2022 թ-ի աննախադեպ 50% արդյունքից, բայց, այնուամենայնիվ, շատ տպավորիչ ցուցանիշ է (Banks.am, 2024):

ՀՀ բանկերի շահութաբերության աճին զուգահեռ նվազել է չաշխատող ակտիվների ծավալը, որը ֆինանսական հատվածի խոցելիությունը բնութագրող հիմնական ցուցանիշներից է: ՔՈՎԻԴ-19 համավարակի և դրանով պայմանավորված միջոցառումների ավարտի հետ մեկտեղ՝ 2021 թ-ի վերջում, ՀՀ-ում չաշխատող ակտիվների կշիռն ընդհանուր ակտիվների մեջ նվազել է 5.31%-ից մինչև 2.66% (2021 թ-ի օգոստոսից սեպտեմբեր) և այդուհետ տատանվել 2-2.5% սահմաններում: Ավելին, 2023 թ-ի ընթացքում ռեզիդենտների չաշխատող ակտիվների կշիռը տատանվել է 1.4%-ի շուրջ, իսկ ոչ ռեզիդենտների դեպքում կազմել է շուրջ 1%, ինչը նշանակում է, որ չաշխատող ակտիվների հետ կապված բանկերի ռիսկը իսկապես բավականին ցածր է (պայմանավորված նաև ակտիվների աճով): Չաշխատող ակտիվների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է շինարարության ոլորտում՝ ընդհանուր ակտիվների 0.27%, ընդ որում 2023 թ-ի ընթացքում այն աճել է, բայց դեռևս ցածր է 2015 թ-ի սկզբում գրանցված ռեկորդային ցուցանիշից (1.12%), երբ Ռուսաստանի նկատմամբ սկսեցին կիրառվել պատժամիջոցներ:¹³

Ամփոփելով նշենք, որ, թեպետ ՀՀ բանկային հատվածում արձանագրվել է թե՛ ավանդների, թե՛ տնային տնտեսությունների վարկավորման աճ, ներկայումս այս

¹³ CBA monthly statistical overviews, <https://bit.ly/3AGKswv>

հատվածը պատրաստ է իր առջև ծառայող՝ հիմնականում դրական, զարգացումներին արձագանքելու համար:

4.2 Ոչ բանկային ֆինանսական կազմակերպություններ

ՀՀ բանկային հատվածի համեմատ ոչ բանկային ֆինանսական հատվածը (ներառյալ ապահովագրական ընկերությունները, ներդրումային և կենսաթոշակային հիմնադրամները, միկրոֆինանսավորման կազմակերպությունները, ինչպես նաև կապիտալի շուկաները) չափազանց փոքր է: Համապատասխանաբար, նշված կազմակերպությունների՝ ֆինանսական կայունության վրա ազդող պոտենցիալ ռիսկերը ևս փոքր են բանկային հատվածի ռիսկերի համեմատ, և բանկային հատվածը շատ ավելի կարևոր դեր է խաղում ՀՀ տնտեսության համար: Օրինակ՝ ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվները 2023 թ-ին կազմել են մոտ 89 մլրդ դրամ, որը ՀՀ բանկերում ավանդների ընդամենը 1.6%-ն է: Ներդրումային ընկերությունների ակտիվները համեմատաբար ավելի մեծ են՝ 157 մլրդ դրամ (ավանդների մոտ 2.8%-ը), բայց մյուս կողմից՝ նրանց պարտավորությունները ևս շատ ավելի մեծ են, քան ապահովագրական ընկերություններինը, ինչի արդյունքում՝ ընդհանուր կապիտալը կազմում է ընդամենը մոտ 36 մլրդ դրամ: Ոչ բանկային ֆինանսական կազմակերպություններից միայն կուտակային կենսաթոշակային հիմնադրամները կարող են հավակնել բանկերի հետ մրցակցելուն: Կուտակային կենսաթոշակային հիմնադրամների ակտիվները 2023 թ-ին կազմում էին 800 մլրդ դրամ, իսկ պարտավորությունները՝ 388 մլն դրամ (ապահովում է ֆինանսական համակարգի ակտիվների 5.7%-ը՝ ըստ ԿԲ-ի): Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ անգամ այս գործիքն է նպաստել Հայաստանում բանկերի գերակայության ամրապնդմանը, քանի որ այդ ակտիվների շուրջ 22%-ը ներդրված է կանխիկ դրամական միջոցներում և ավանդային հաշիվներում, 43%-ը՝ ցածր եկամտաբերությամբ պետական պարտատոմսերում (Avetian, 2024):


Ինչպես նշվել է ներածությունում, ՀՀ կապիտալի շուկաները նույնպես դեռ փոքր են և թերզարգացած՝ որպես ընկերությունների համար ներդրումների աղբյուր: 2001 թ-ին հիմնադրվելուց հետո Հայաստանի ֆոնդային բորսան փոխել է սեփականատերերին. 2007 թ-ին այն ձեռք բերվեց NASDAQ OMX խմբի կողմից, իսկ 2020 թ-ին բաժնեմասերի 65%-ը վաճառվեց Վարշավայի ֆոնդային բորսային: Չնայած բորսայի նկատմամբ միջազգային հետաքրքրվածությանը, 2024 թ-ի հոկտեմբերի վերջի դրությամբ Հայաստանի ֆոնդային բորսայում ցուցակված են եղել (առևտրին թույլատրված) ընդամենը 11 թողարկողի բաժնետոմս և 23 թողարկողի պարտատոմս (ընդամենը 149 արժեթուղթ): Այս քանակը տարիների ընթացքում նշանակալի փոփոխությունների չի ենթարկվել, օրինակ 2020 թ-ի տարեվերջին բորսայում ցուցակված են եղել 30 թողարկող: Ծավալի առումով (

) շուկայում արձանագրվել է հետևողական աճ, որը, սակայն, հիմնականում պայմանավորված է եղել պետական պարտատոմսերի, այլ ոչ թե մասնավոր հատվածում ներդրումների աճով: Չնայած կորպորատիվ և պետական պարտատոմսերի մասով 2018-2023 թվականներին դիտվել է միջին տարեկան միանման աճի տեմպ (տարեկան միջինում շուրջ 32%), այնուամենայնիվ 2023 թ-ի տվյալներով պետական պարտատոմսերի շրջանառության մեջ եղած ծավալը շուրջ հինգ անգամ գերազանցում է կորպորատիվ պարտատոմսերին: Ընդ որում, ինչպես նշվեց, կենսաթոշակային ֆոնդերը ներդրումներ են իրականացնում հիմնականում պետական պարտքային գործիքներում:

Ընդհանուր առմամբ, ՀՀ ներդրողների պաշտպանությանը վերաբերող օրենքներն ու իրավական ակտերը, ներառյալ երկկողմ ներդրումային համաձայնագրերը, լավ են կիրառվում, սակայն կոռուպցիան դեռևս խնդիր է (թեև առկա է նվազման միտում):¹⁴ Ընդհանուր բարենպաստ միջավայրը, այնուամենայնիվ, կարող է բավարար չլինել կապիտալի շուկաների զարգացման համար, մասնավորապես Հայաստանի մասնավոր հատվածում կորպորատիվ կառավարման խնդիրների պատճառով: Սա բազմիցս նշվել է որպես խնդիր, որն իր հերթին հանգեցնում է խնդիրների կապիտալի շուկայում, քանի որ ոչ թափանցիկ ընկերությունները չեն կարողանում ապահովել համապատասխանությունը ֆոնդային բորսայում ցուցակվելու պահանջներին: ՀՀ կորպորատիվ կառավարման բարեփոխումները կօգնեն այլ ընկերություններին ևս օգտվել կապիտալի շուկաներից, բայց սա երկարաժամկետ ծրագիր է, իսկ ներկայումս ՀՀ ֆինանսական կայունության՝ կապիտալի շուկաներին վերաբերող միակ խնդիրը թերևս ֆոնդային բորսայում պետական պարտատոմսերի գերակայությունն է, որը կարող է խնդիրներ ստեղծել, եթե պետական ֆինանսները թուլանան կամ անկայունություն դրսևորեն: Միաժամանակ, բորսայի ծառայությունների ոչ բավարար օգտագործումն ընդհանուր առմամբ նշանակում է, որ բիզնեսի համար այդ ազդեցությունը չնչին կլինի:

¹⁴ Heritage Index of Economic Freedom, October 2023, <https://is.gd/zzA8ir>

Գծապատկեր 15. ՀՀ ֆոնդային բորսայի հիմնական ցուցանիշները, 2018-2023թթ.



Աղբյուր՝ Հայաստանի ֆոնդային բորսա

4.3 Ֆինանսական վերահսկողություն

ՀՀ ամբողջ ֆինանսական հատվածը և դրա գործունեությունը վերոնշյալ բոլոր ոլորտներում վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: Պետական գերատեսչությունների շրջանում ԿԲ-ն միշտ դիտվել է որպես բանիմաց և հեռատես հաստատություն և աստիճանաբար վերանայել է իր մոտեցումը ֆինանսական հատվածի կանոնակարգման նկատմամբ՝ 2005 թ-ին անցնելով վերահսկողության ռիսկահենք մոտեցման և 2007-2008 թթ-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի տարիներին սահմանելով բանկային գործունեության նորմատիվներ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգի շրջանակում (Hovanessian, Nurbekyan, 2018): Այլ երկրների կենտրոնական բանկերի պես ՀՀ ԿԲ-ն ևս այժմ մշտադիտարկում է մակրոպրոդեցիալ ռիսկերը և հրապարակում ֆինանսական կայունության մասին տարեկան հաշվետվություն՝ արձանագրելով երկրում տեղի ունեցող զարգացումները և կոնկրետ ռիսկերի դեմ պայքարելու համար ԿԲ-ի ձեռնարկած գործողությունները:

Ընդհանուր առմամբ, համաշխարհային ֆինանսական ճգնաժամից և 2014 թ-ի Ուկրաինա առաջին ներխուժմամբ պայմանավորված՝ Ռուսաստանից եկող ցնցումներից հետո ԿԲ-ն շատ ավելի գործուն մոտեցում է ցուցաբերել ֆինանսական կայունության նկատմամբ, այդ թվում վերանայել է պահուստավորման պահանջները և բարձրացրել բանկերի համար կապիտալի հակացիկլիկ բուֆերի չափը: ԱՄՆ-ն բազմիցս նշել է, որ ՀՀ ԿԲ-ն համապատասխանում է ռիսկերի վերահսկման Բազելյան կանոններին, և որ ՀՀ ԿԲ-ի՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցումը համապատասխանում

Է միջազգային լավագույն փորձին (IMF, 2019): Ֆինանսական կայունության հաշվետվություններ և ՀՀ ԿԲ-ի վերկայքում պարբերաբար թարմացումներ հրապարակելով՝ ֆինանսական համակարգի կարգավորող մարմինը պահպանում է թափանցիկության միջազգային չափանիշները: Թերևս կարելի է նկատել, որ կարգավորող մարմնի՝ ֆինանսական հատվածի նկատմամբ մոտեցումը կարելի է բնութագրել որպես «պահպանողական»՝ Հայաստանի ներքին և արտաքին ռիսկերի գիտակցմամբ:

4.4 Ֆինանսական խոցելիության և ռիսկերի հիմնական աղբյուրները

ՀՀ ֆինանսական հատվածը, որտեղ գերակշռում են բանկերը, անցել է խոշորացման և աճի տպավորիչ շրջան, որի ընթացքում ավելացել է օտարերկրյա ներդրողների ներկայացվածությունը: Ընդհանուր առմամբ, այսօր ֆինանսական հատվածը շատ ավելի ուժեղ է, քան համաշխարհային ֆինանսական ճգնաժամի նախօրեին, ինչը դրսևորվել է նաև Ուկրաինա ռուսական ներխուժման հետևանքներին ֆինանսական հատվածի դիմակայելու մեջ: Այդուհանդերձ, ինչպես տարածաշրջանի մյուս երկրների դեպքում, պատերազմն ինքնին մնում է բանկային հատվածի ամենամեծ սպառնալիքը. օրինակ՝ պատժամիջոցների հետևանքով առաջացած ավանդների ակտիվ ներհոքսը կարող է ապակայունացնել բանկային համակարգը, հատկապես, եթե տեղի ունենա այդ ավանդների լայնածավալ դուրսբերում: Բանկերը պետք է հաշվի առնեն, որ այդ փողերը ինչ-որ առումով «թեժ» են, քանի որ մեծապես կախված են աշխարհաքաղաքական իրադարձություններից և կարող են շատ արագ փոխել հոսքերի ուղղությունը: Որոշ առումով հայկական բանկերն արդեն իսկ պատրաստվել են դրան՝ ներդնելով այդ ավանդներն օտարերկրյա իրացվելի ակտիվներում և ապահովելով դրանք ըստ պահանջի կանխիկի վերածելու հնարավորությունը (տե՛ս Գլուխ 5):

Մինևույն ժամանակ, հիփոթեքի և շինարարության ոլորտներում վարկավորման աճը պահանջում է ոլորտների մշտադիտարկում՝ «փուչիկի» առաջացման վտանգից խուսափելու համար: Այս վտանգը մեծացել է 2023 թ-ի հունիսից դրամավարկային քաղաքականության մեղմացման և տնտեսության մեջ սկսված գնանկման պայմաններում¹⁵, հատկապես եթե հաշվի առնենք, որ տնային տնտեսություններն էլ ավելի ինտենսիվորեն են սկսում հիփոթեքային վարկեր վերցնել:

Ընդհանուր առմամբ, ՀՀ ֆինանսական հատվածն ունի նախանձելի դիրք՝ զգալի ծավալի ավանդներով և բարենպաստ մակրոտնտեսական միջավայրով: Հիմնական

¹⁵ 2024թ. ՀՀ տնտեսությունում արձանագրվել է գնանկում ինչպես նախորդ տարվա համեմատ՝ հունվարից հունիս յուրաքանչյուր ամսվա համար, այնպես էլ կուտակային առումով. տոկոսային փոփոխությունը տարեսկզբից մինչև օգոստոս (և դրանից առաջ) համեմատվում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ:

վտանգը մնում է աշխարհաքաղաքական իրավիճակը՝ պայմանավորված ինչպես Ուկրաինա ռուսական ներխուժմամբ, այնպես էլ տարածաշրջանում լարված իրավիճակով: Նշված գործոններից երկուսն էլ կարող են լրջորեն ազդել ՀՀ տնտեսության աճի և հետևաբար նաև ֆինանսական հատվածի վրա:

5. Արտաքին տնտեսական հարաբերություններ

5.1 Արտաքին առևտրային հարաբերությունների դերը ՀՀ տնտեսական կյանքում. հիմնական ցուցանիշներ

ՀՀ-ն վարում է բաց առևտրային քաղաքականություն և ակտիվորեն ներգրավված է միջազգային առևտրում: 2003 թ-ից ի վեր երկիրն Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ է և հետևում է խտրականության բացառման սկզբունքին, որը հայտնի է որպես ազգերի առավել բարենպաստության ռեժիմ (անգլերեն համարժեք եզրույթը՝ Most Favorable Nation clause): Այնուամենայնիվ, Հայաստանը նաև անդամակցում է ԵԱՏՄ-ին, ինչը նշանակում է, որ երկիրը կիրառում է ազգերի առավել բարենպաստության սկզբունքը ԵԱՏՄ և երրորդ երկրների միջև կնքված միջազգային համաձայնագրերով, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների և երրորդ երկրների միջև կնքված միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և պայմաններում:¹⁶ ԵԱՏՄ-ն տնտեսական միություն է Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի Դաշնության միջև: ԵԱՏՄ անդամ երկրների միջև առևտուրն ազատված է մաքսատուրքից, իսկ երրորդ երկրների հետ առևտրային հարաբերություններում անդամ երկրները կիրառում են ընդհանուր առևտրային քաղաքականություն: 2015 թ-ին ԵԱՏՄ հինգերորդ անդամը դառնալուց հետո Հայաստանը կարող է երրորդ երկրի հետ ազատ առևտուր հաստատել բացառապես ԵԱՏՄ-ի և այդ երկրի միջև ազատ առևտրի համաձայնագրի հիման վրա, իսկ մինչև 2015 թ-ը կնքված ազատ առևտրի երկկողմ համաձայնագրերը կարող են ուժի մեջ մնալ՝ պայմանով, որ չեն հակասում ԵԱՏՄ կանոնակարգերին: Ներկայումս Հայաստանն ունի ազատ առևտրի մի քանի երկկողմ համաձայնագրեր, այդ թվում՝ Վրաստանի, Տաջիկստանի, Մոլդովայի, Թուրքմենստանի և Ուկրաինայի հետ:¹⁷ ԵԱՏՄ-Հայաստան երկկողմ առևտրային հարաբերությունները կարգավորվում են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (անգլերեն համարժեք եզրույթը՝ Comprehensive and Enhanced Partnership Agreement, CEPA), որը կնքվել է 2017 թ-ի նոյեմբերին և ամբողջությամբ ուժի մեջ մտել 2021 թ-ի մարտի 1-ից (European Commission, 2021): Մինչև 2022 թ-ը Հայաստանը նաև օգտվում էր ԵՄ Արտոնությունների ընդհանրացված համակարգից (անգլերեն համարժեք եզրույթը՝ Generalised Scheme of Preferences, GSP), որով սահմանվում էր անմաքս ռեժիմ կամ իջեցված մաքսատուրքեր Հայաստանից ԵՄ երկրներ արտահանվող ապրանքների լայն շրջանակի համար: Սակայն ԵՄ GSP ծրագրի կանոնակարգի համաձայն, Հայաստանը, երեք տարի անընդմեջ Համաշխարհային բանկի կողմից դասակարգվելով որպես միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր, դուրս է մնացել


¹⁶ EAEU, “Treaty on the Eurasian Economic Union” adopted on May 29, 2014, <https://bit.ly/4c9xCnn>

¹⁷ World Trade Organization (WTO), Regional Trade Agreement Database, հասանելի է 2024 թ-ի հուլիսի 2-ի դրությամբ, <https://bit.ly/480PVtc>

արտոնյալ ռեժիմից, բայց շարունակում է օգտվել դրանից ԱՄՆ-ի, Կանադայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի և Նորվեգիայի հետ առևտրում և որոշակի ապրանքների համար դեռևս ունի անմաքս ռեժիմ կամ իջեցված մաքսատուրքեր:

Հայաստանը փակ սահմաններ ունի իր չորս հարևաններից երկուսի հետ, և երկրի աշխարհագրական դիրքը որոշակիորեն սահմանափակում է ներգրավվածությունը համաաշխարհային առևտրային հարաբերություններում: Այդուհանդերձ, առևտրի և ՀՆԱ-ի կայուն բարձր հարաբերակցությունը վկայում է այն մասին, որ երկիրը բաց է առևտրի նկատմամբ: 2007-2017 թթ-ին Հայաստանի առևտուր/ՀՆԱ հարաբերակցությունը 63.5%-ից հասել է 87.3%-ի: 2018-2023 թթ-ին այս ցուցանիշը պահպանել է աճի միտումը (2023 թ-ին կազմելով 117.3%՝ 2018 թ-ի 93.2%-ի համեմատ), բացառությամբ 2020 թ-ի, երբ ՔՈՎԻԴ-19-ը մեծապես խաթարեց միջազգային առևտուրը: Միաժամանակ կարևոր է նշել, որ արտաքին առևտրի աճը և առևտուր/ՀՆԱ բարձր հարաբերակցությունը պայմանավորված են ոչ միայն հայկական ծագման ապրանքների արտահանման աճով, այլև էապես վերաարտահանմամբ: Վերջինիս զգալի դերն սկսեցին 2018-2019 և 2022-2023 թթ-ին: 2015 թ-ին ԵԱՏՄ անդամ դառնալուց հետո Հայաստանն ազատ մուտք է ստացել ԵԱՏՄ շուկա և պարտավորվել է մինչև 2020 թ-ը համապատասխանեցնել իր ներկրման մաքսատուրքերը ԵԱՏՄ մաքսատուրքերին: Օրինակ՝ տրանսպորտային միջոցների մասով ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներից ներմուծման մաքսատուրքերը 2020 թ-ին պետք է բարձրացվեին 10%-ից մինչև 20%: Քանի որ Հայաստանին շնորհվել էին անցումային արտոնյալ պայմաններ, և նոր սակագները պետք է ուժի մեջ մտնեին միայն 2020 թ-ից, շատերն սկսեցին օգտվել մինչև այդ ներմուծման ցածր մաքսատուրքերով ԵԱՏՄ շուկա ազատ մուտք գործելու հնարավորություններից՝ հատկապես տրանսպորտային միջոցների ներմուծման և դեպի ԵԱՏՄ երկրներ հետագա վերաարտահանման առումով: Արտահանողներն սկսեցին տրանսպորտային միջոցներ ներմուծել ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներից՝ ներմուծման ցածր մաքսատուրքերով, և վերաարտահանել դրանք ԵԱՏՄ երկրներ մինչև արտոնյալ ռեժիմի ավարտը և ներմուծման մաքսատուրքերի բարձրացումը: 2018 և 2019 թվականներին ավտոմեքենաների ներմուծումը կազմել է համապատասխանաբար 235 մլն ԱՄՆ դոլար (64,000 ավտոմեքենա) և 559 մլն ԱՄՆ դոլար (189,000 ավտոմեքենա), որոնք հիմնականում վերաարտահանվել են դեպի Ռուսաստան և Ղազախստան (Chervyakov et al, 2023): 2022 և 2023 թթ-ին՝ ուկրաինական պատերազմի բռնկումից հետո, Ռուսաստանի նկատմամբ կիրառված արևմտյան տնտեսական պատժամիջոցները նոր հնարավորություններ բացեցին հայ արտահանողների համար, ինչը հանգեցրեց ինչպես ՀՀ արտաքին, այնպես էլ ներքին արտահանման աճին դեպի Ռուսաստան:

Գծապատկեր 16. ՀՀ ապրանքների և ծառայությունների առևտրաշրջանառությունը ՀՆԱ-ի նկատմամբ, 2007-2023 թթ .




Աղբյուր՝ ՀՀ ԿԲ, Արմստատ

Հայաստանը հիմնականում արտահանում և ներմուծում է ապրանքներ, ոչ թե ծառայություններ: 2007-2023 թթ-ին ապրանքների մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ կազմել է միջինում 56.2%, ներմուծման մեջ՝ 71.6%: Չնայած ապրանքային առևտրի գերակայմանը, հարկ է նշել, որ ծառայությունների արտահանման տեսակարար կշիռը Հայաստանում համեմատաբար ավելի բարձր է, քան շատ երկրներում: Օրինակ, ԵՄ երկրներում ապրանքների արտահանման տեսակարար կշիռը ավելի քան երկու անգամ գերազանցում է ծառայությունների տեսակարար կշիռը:

2000-ականներին ծառայությունների մասնաբաժինը արտահանման մեջ աստիճանաբար աճել է՝ 2009 թ-ին կազմելով 50%՝ 2007թ-ի 39%-ի համեմատ: Հաջորդ հինգ տարվա ընթացքում այն համեմատաբար կայուն էր (տարեկան միջինում 48%), սակայն 2016 թ-ից սկսած՝ զգալիորեն նվազել է: 2022թ-ին Ռուսաստանի քաղաքացիների և Ռուսաստանում գրանցված ընկերությունների ներհոսքի շնորհիվ, հատկապես SS ոլորտում, ծառայությունների արտահանումն ավելացավ՝ պայմանավորված ճամփորդական և զբոսաշրջային, ինչպես նաև S2S ծառայությունների արտահանմամբ: 2023 թ-ին արտահանման մեջ ծառայությունների տեսակարար կշիռը կազմել է 39.8%, ներմուծման մեջ՝ 23.3%:

Գծապատկեր 17. ՀՀ ծառայությունների մասնաբաժինը արտահանման և ներմուծման մեջ, 2007-2023 թթ.




Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, ՀՀ ԿԲ

2008 թ-ին ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդն արտահանման վրա ազդող արտաքին ցնցումների հետևանքով վատթարացել է և հասել ՀՆԱ-ի 14.2%-ի, սակայն հաջորդող տարիներին աստիճանաբար կրճատվեց և 2017 թ-ին կազմում էր -1.3%: 2018-2019 թթ-ին պակասուրդը կրկին վատթարացել էր և հասել շուրջ -7%-ի՝ պայմանավորված բարձր ներմուծմամբ և արտահանման դանդաղ աճով: 2022 թ-ին ընթացիկ հաշիվը հավելուրդային էր (ՀՆԱ-ի 0.8%) ի հաշիվ դեպի Ռուսաստան վերաարտահանման և տրանսֆերտների ներհոսքի, սակայն հաջորդ տարի այս գործոնների ազդեցությունը թուլացավ, և հաշվեկշիռը վերադարձավ պակասուրդի՝ ՀՆԱ-ի -2.3% չափով (տե՛ս Բաժին 3.2):

Հայաստանն ավելի շատ ներմուծում, քան արտահանում է ապրանքներ, ինչի արդյունքում երկրի վճարային հաշվեկշռի ապրանքային արտահանման հաշվեկշիռը ավանդաբար եղել է բացասական: Վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում ՀՀ ապրանքների արտահանման հաշվեկշիռը տատանվել է մի շարք արտաքին ցնցումների հետևանքով: 2008 թ-ի վատթարացումից հետո (ֆինանսական ճգնաժամի հետևանքով) հաջորդ հինգ տարվա ընթացքում ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կայունացել է շուրջ -2 մլրդ ԱՄՆ դոլարի սահմաններում, իսկ 2016 թ-ին կրճատվել մինչև -977 մլն ԱՄՆ դոլար՝ պայմանավորված ներմուծման համեմատ արտահանման ավելի արագ աճով: 2016 թ-ի արտահանման աճի խթաններից մեկը թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանումն էր: Վերջին տարիներին ընդհանուր միտումը եղել է դեպի ապրանքների հաշվեկշռի պակասուրդի խորացում: 2022 թ-ին

պակասությունը կազմել է 1,866 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի -9.6%), 2023թ.՝ 2,515 մլն ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի -10.4%):


Գծապատկեր 18. ՀՀ ապրանքների առևտրի հաշվեկշիռը, 2007-2023 թթ .



Աղբյուր՝ ՀԲ, ԱՄՀ, ՀՀ ԿԲ, Արմստատ

Վերջին տասնամյակներում Հայաստանից ծառայությունների արտահանումն աստիճանաբար աճում էր, դրան զուգահեռ բարելավվում էր ծառայությունների առևտրի հաշվեկշիռը: Եթե 2007 թ-ին ծառայությունների առևտրի հաշվեկշիռի պակասությունը կազմում էր 190 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 2%, ապա 2021 թ-ին արձանագրվել է հավելուրդ՝ 397 մլն ԱՄՆ դոլարի կամ ՀՆԱ-ի 3%-ի չափով: Ծառայությունների արտահանման աճը պայմանավորված էր ՏՀՏ և զբոսաշրջության ոլորտների աճով: 2022 թ-ին ճամփորդական, զբոսաշրջային և ՏՀՏ ծառայությունների արտահանման աճին նպաստեց Ռուսաստանի քաղաքացիների և Ռուսաստանում գրանցված ՏՏ ընկերությունների ներհոսքը: Արդյունքում հավելուրդը հասավ 1,719 մլն ԱՄՆ դոլարի (ՀՆԱ-ի 8.8%), իսկ 2023թ.՝ արդեն 2,321 մլն ԱՄՆ դոլարի կամ ՀՆԱ-ի 9.6%-ի:


Գծապատկեր 19. ՀՀ ծառայությունների առևտրի հաշվեկշիռ, 2007-2023 թթ.



Աղբյուր՝ ՀԲ, ԱՄՀ, Արմստատ

2008-2020 թթ-ին Հայաստանում արձանագրվում էր ՕՈՒՆ-ի գուտ ներհոսքի նվազման միտում, թեպետ որոշակի տատանումներով: Նախքան ՔՈՎԻԴ-19-ը (2019թ.) ՕՈՒՆ-ի գուտ ներհոսքը կազմում էր շուրջ 100 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 0.5%՝ 2008թ-ի 944 մլն ԱՄՆ դոլարի կամ ՀՆԱ-ի 8%-ի համեմատ: 2022թ-ին, մասամբ ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորման շնորհիվ, որը 2022 թ-ին կազմել էր 13.5% 2021թ-ի համեմատ, ՕՈՒՆ-ի գուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ ավելացել է 2.7 անգամ և կազմել գրեթե 1 մլրդ ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 5%: ՀՀ դրամի ուժեղ և արագ արժևորմանը նպաստել էր ռուս ՏՏ մասնագետների և զբոսաշրջիկների մեծ ներհոսքը, որի արդյունքում զգալիորեն աճել է ինչպես ծառայությունների արտահանումը, այնպես էլ մասնավոր տրանսպորտների հոսքը դեպի ՀՀ:


Գծապատկեր 20. ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ-ի գուտ ներհոսքը, 2007-2023 թթ. .



Աղբյուր՝ ՀԲ, ՀՀ ԿԲ, Արմաստատ

Ընդհանուր առմամբ, Հայաստանի տնտեսությունում առկա է օտարերկրյա զգալի կապիտալ: ՕՈՒՆ-ի պաշարների առավելագույն ցուցանիշը՝ ՀՆԱ-ի շուրջ 50%, գրանցվել է 2012-2013 թթ-ին, իսկ դրանից ի վեր տարեկան միջինում կազմել է 40.6%: 2023 թ-ի վերջի դրությամբ երկրի տնտեսությունում իրականացված ՕՈՒՆ-ի պաշարը կազմում էր 7.5 մլրդ ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 31%՝ 2022 թ-ի 7.1 մլրդ ԱՄՆ դոլարի (ՀՆԱ-ի 36.5%) և 2007 թ-ի 2.6 մլրդ ԱՄՆ դոլարի (ՀՆԱ-ի 26%) համեմատ: 2023 թ-ի տարեվերջին մեկ շնչի հաշվով ՕՈՒՆ-ի պաշարները կազմում էին 2,507 ԱՄՆ դոլար՝ 2007 թ-ի 861 ԱՄՆ դոլարի համեմատ:

Գծապատկեր 21. ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ-ի պաշարները, 2007-2023 թթ. տարեվերջի դրությամբ




Աղբյուր՝ ՀԲ, ՀՀ ԿԲ

ՀՀ տնտեսությունը տարիներ շարունակ կախված է եղել եկամտի արտաքին աղբյուրներից, ինչպիսիք են մասնավոր տրանսֆերտները: 2021 թ-ին տնային տնտեսությունների կողմից ստացված տրանսֆերտները կազմել են շուրջ 1,557 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 11.2%-ը: Միաժամանակ, 2007 թ-ից ի վեր կախվածությունը տրանսֆերտներից նվազել է: 2007 թ-ին տրանսֆերտները կազմում էին ՀՆԱ-ի 18%-ը, իսկ 2022 թ-ին՝ ռուս-ուկրաինական պատերազմի բռնկումից հետո, Ռուսաստանի քաղաքացիների ներհոսքի հետևանքով Հայաստան մտնող տրանսֆերտներն ավելացան 30.7%-ով՝ կազմելով 2,035 մլն ԱՄՆ դոլար: 2023 թ-ին տրանսֆերտները 2022 թ-ի համեմատ նվազել են 29.1%-ով և կազմել 1,442 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 6%:

Հայաստանյան տնային տնտեսությունների համար մասնավոր տրանսֆերտները հաճախ ծառայում են որպես եկամտի կարևոր աղբյուր: 2007-2023 թթ-ին մեկ շնչի հաշվով տրանսֆերտները միջինում կազմել են 578 ԱՄՆ դոլար կամ նույն ժամանակահատվածի մեկ շնչի հաշվով միջին տարեկան ՀՆԱ-ի 13.4%:

Գծապատկեր 22. ՀՀ ստացած տրանսֆերտները, 2007-2023 թթ .



Աղբյուր՝ ՀԲ, ՀՀ ԿԲ

5.2 Ապրանքային առևտրի խոցելիությունը


Չնայած Հայաստանն ակտիվորեն ներգրավված է միջազգային առևտրում, երկրի արտահանման և ներմուծման կառուցվածքն ինչպես ըստ երկրների այնպես էլ ըստ ապրանքների ու ծառայությունների տեսակի խիստ կենտրոնացված է: 2023 թ-ին Հայաստանից ապրանքների արտահանման հիմնական ուղղությունը Ռուսաստանն էր 40.4% մասնաբաժնով, որի հաջորդում էր ԱՄԷ (26.6%): 2023 թ-ին Հայաստանից ԱՄԷ արտահանումը կազմել է 2,223 մլն ԱՄՆ դոլար, ինչը 4.2 անգամ ավելի է, քան նախորդ

տարի: Արտահանման այս կտրուկ աճը մեծապես պայմանավորված էր չմշակված ոսկու և ոսկերչական իրերի արտահանման աճով:

Վերջին տասնամյակում Հայաստանի արտահանման ուղղությունները որոշ չափով փոխվել են: 2013 թ-ին Հայաստանի արտահանման հիմնական շուկան ԵՄ-ն էր՝ 33.6% մասնաբաժնով, որին հետևում էր Ռուսաստանը՝ 22.6% մասնաբաժնով: Այնուամենայնիվ վերջին տարիների ընթացքում ԵՄ մասնաբաժինը կրճատվել է մինչքովիդյան 2019-ին հասնելով 22.1%, իսկ 2022-ին՝ 14.6%: 2023 թ-ին Հայաստանից ԵՄ արտահանումը կազմել է շուրջ 709 միլիոն դոլար կամ ամբողջ ՀՀ արտահանման 8.5%-ը: Դեպի Ռուսաստան արտահանման ծավալը և մասնաբաժինը, ընդհակառակը, աճել է: 2013-2023 թթ. -ին Հայաստանից Ռուսաստան արտահանումը աճել է 10 անգամ, իսկ Ռուսաստանի մասնաբաժինը Հայաստանի արտահանման մեջ կրկնապատկվել է՝ 22.6%-ից հասնելով 40.4%: Պետք է նշել, որ 2022 և 2023 թվականների բացառիկ աճը (նախորդ տարվա համեմատ մոտ 3 անգամ 2022 թ-ին, 1.4 անգամ 2023 թ-ին) կայուն չէ քանի որ պայմանավորված է արտաքին գործոններով: Մասնավորապես, ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները հայաստանյան արտահանողների համար Հայաստանից Ռուսաստան արտահանման, և որ ավելի կարևոր է՝ վերարտահանման, մեծ հնարավորություններ ստեղծեցին:

Այլ գործընկերների առումով՝ Հայաստանից Չինաստան արտահանումը աճի միտում ունի՝ չնայած որոշակի տատանումներով: 2023 թ-ին Հայաստանից Չինաստան ապրանքային արտահանումը կազմել է 425 մլն ԱՄՆ դոլար, ինչը 6 անգամ գերազանցում է 2013 թ-ի ցուցանիշը:

Գծապատկեր 23. ՀՀ արտահանման ուղղությունները, 2013-2023 թթ.




Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Ռուսաստանը ոչ միայն Հայաստանի հիմնական արտահանման ուղղությունն է, այլ նաև հիմնական ներմուծողը: Հայաստանի ներմուծման շուրջ կեսը բաժին է ընկնում Ռուսաստանին և ԵՄ-ին: Վերջին 10 տարիների ընթացքում Ռուսաստանի մասնաբաժինը Հայաստանի ներմուծման մեջ միջինում կազմել է 30%, իսկ ԵՄ-ինը՝ 20%: Ավելին, 2013-2023 թթ.-ին Ռուսաստանի մասնաբաժինը աճել է՝ 26.0%-ից հասնելով 32.3%-ի, մինչդեռ ԵՄ մասնաբաժինը կրճատվել է 23.4%-ից մինչև 15.1%:

Հայաստանի այլ խոշոր ներմուծողներից է Չինաստանը: 2013-2023 թթ.-ին Չինաստանից ներմուծումը աճել է 4 անգամ, իսկ մասնաբաժինը Հայաստանի ներմուծման մեջ 9.0%-ից հասել է 13.5%-ի:


Գծապատկեր 24. ՀՀ ներմուծումն ըստ երկրների, 2013-2023 թթ .



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Հայաստանի արտահանման և ներմուծման մեջ գերակշռում են մշակված և կիսամշակված ապրանքները (անգլերեն համարժեք եզրույթները՝ processed and semi-processed goods): 2023 թ-ին, Հայաստանի ներմուծման 42%-ը կազմել են մշակված իսկ 36%-ը՝ կիսամշակված ապրանքները: 1997 թ-ից ի վեր հումքի ներմուծման մասնաբաժինը կրճատվել է 36%-ից հասնելով 2023 թ-ին 22%-ի, մինչդեռ կիսամշակված ապրանքների ներմուծման մասնաբաժինը աճել է՝ 16%-ից հասնելով 36%: Այս ժամանակահատվածում մշակված ապրանքների տեսակարար կշիռը ընդհանուր ներմուծման մեջ տատանվել է 40-50%-ի սահմաններում: Չնայած հումքի ներմուծման մասնաբաժինը ընդհանուրի մեջ նվազել է, ներմուծման ծավալը աճել է (7 անգամ 1997-2023 թթ.-ին), չնայած ոչ այնքան արագ, ինչքան կիսամշակված ապրանքների դեպքում (27 անգամ): Հայաստանը հանդիսանում է նավթ և գազ ներմուծող երկիր, ինչն էլ կազմում է նրա հումքային ապրանքների ներմուծման մեծ մասը:


Գծապատկեր 25. ՀՀ ներմուծումն ըստ ապրանքների մշակման մակարդակի, 1997-2023 թթ.



Աղբյուր՝ ՄԱԿ

2023 թ-ին Հայաստանից արտահանվող ապրանքների 42%-ը կազմել են կիսամշակված ապրանքները, մինչդեռ մշակված ապրանքներին բաժին է հասել արտահանման 30%-ը, իսկ հումքային ապրանքներին՝ 28%-ը: 1997 թ-ից ի վեր հումքի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ կրճատվել է՝ 39%-ից 2023 թ-ին հասնելով 28%-ի, մինչդեռ մշակված ապրանքների մասնաբաժինը աճել է 24%-ից մինչև 30%, իսկ կիսամշակված ապրանքների արտահանման մասնաբաժինը՝ 38%-ից 42%: Պետք է նշել, որ կիսամշակված ապրանքների կշիռը սկսել է նվազել 2007 թ-ից (2022 թ-ին կազմել է 24%՝ 2007 թ-ի 52%-ի համեմատ), սակայն 2023թ-ին զգալիորեն աճել է Հայաստանից վերարտահանման աճի շնորհիվ:


Գծապատկեր 26. ՀՀ արտահանումն ըստ ապրանքների մշակման մակարդակի, 1997-2023 թթ.



Աղբյուր՝ ՄԱԿ

Հայաստանը հիմնականում արտահանում է միջանկյալ սպառման (անգլերեն համարժեք եզրույթը՝ intermediate goods) և սպառման ապրանքներ (անգլերեն համարժեք եզրույթը՝ household consumption goods): 2013-2021 թթ-ին միջանկյալ սպառման ապրանքների մասնաբաժինն ընդհանուր արտահանման մեջ միջինում կազմել է 49.4%, մինչդեռ սպառման ապրանքների մասնաբաժինը՝ 35.5%: Միջանկյալ սպառման ապրանքների մասնաբաժնի մեծությունը պայմանավորված է հանքային արտադրատեսակների արտահանմամբ, իսկ սպառման ապրանքների դեպքում՝ մեծապես սննդամթերքի և խմիչքի արտահանմամբ:


Գծապատկեր 27. ՀՀ արտահանումն ըստ ապրանքների վերջնական օգտագործման, 2013-2021 թթ.



Աղբյուր՝ ՏՀԶԿ

Նման պատկեր է նաև ներմուծման պարագայում. Հայաստանի ներմուծման կառուցվածքում ևս գերակշռում են միջանկյալ սպառման և սպառման ապրանքները: 2013-2021 թթ. -ին միջանկյալ սպառման ապրանքների ներմուծումը միջինում կազմել է ընդհանուր ներմուծման 46.7%-ը, իսկ սպառման ապրանքները միջինում կազմել են 22.9%: Միջանկյալ սպառման ապրանքների գերակշռումը կարող է բացատրվել բնական զգալի ներմուծման ծավալներով: 2013-2021 թթ. -ին սպառման ապրանքների մասնաբաժինը Հայաստանի ներմուծման կառուցվածքում 21.1%-ից աճել է մինչև 24.3%, մինչդեռ միջանկյալ օգտագործման ապրանքների մասնաբաժինը նվազել է՝ 47.0%-ից հասնելով 44.9%:

Գծապատկեր 28. ՀՀ ներմուծումն ըստ ապրանքների վերջնական օգտագործման, 2013-2021 թթ.




Աղբյուր՝ ՏՀԶԿ

Հայաստանի արտահանման դիվերսիֆիկացիան սահմանափակ է: 2013-2021 թթ.-ին ապրանքային արտահանման միջինում 41%-ը բաժին է հասել ընդամենը երեք ապրանքի. պղնձի հանքաքար ու խտանյութ, խմիչք և ծխախոտ: Այլ ապրանքների գծով զգալի աճը 2022 և 2023 թվականներին պայմանավորված է Հայաստանից Ռուսաստան ավտոմեքենաների, մեքենաների և սարքավորումների վերարտահանման ծավալների կտրուկ աճով:

Ավելին, արտահանման տեսանկյունից Հայաստանը շատ խոցելի է, քանի որ արտահանման ծավալով ամենախոշոր ապրանքներից յուրաքանչյուրը հիմնականում արտահանվում է մեկ երկիր: Օրինակ, 2023 թ-ին պղնձի հանքաքարի և խտանյութի 71.2%-ը արտահանվել է Չինաստան, կոնյակի 82.0%-ը՝ Ռուսաստան, ծխախոտը հիմնականում արտահանվել է Իրաք (46.2%) և ԱՄԷ (30.2%), ֆերոմոլիբդենը՝ Նիդեռլանդներ (73.7%), իսկ կիսամշակված ոսկին՝ ԱՄԷ (60.2%) և Հնդկաստան (37.8%):

Այլ ապրանքների հետ կապված՝ 2023թ-ին Հայաստանը արտահանել է մեծ ծավալով ավտոմեքենա (ԱՏԳ ԱԱ 87) և մեքենաներ ու սարքավորումներ (ԱՏԳ ԱԱ 84): Այս ապրանքատեսակներից յուրաքանչյուրի ավելի քան 80%-ն ուղղվել է Ռուսաստան:


Գծապատկեր 29. ՀՀ ապրանքային արտահանումն ըստ ապրանքների, 2013-2023 թթ.



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Արտահանման կառուցվածքում այս փոփոխությունների արդյունքում, ՀՀ-ն, որը չափում է շուկայի կենտրոնացվածությունը, բարելավել է 2022 թ-ին կազմելով 375՝ 2021 թ-ի 922-ի փոխարեն, իսկ 2023 թ-ին կազմել է 636՝ ինչը վկայում է կենտրոնացվածության ցածր մակարդակի մասին: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ ՀՀ այս փոփոխությունը չի արտացոլում տեղական արտահանման կենտրոնացվածության իրական պատկերը, քանի որ այն ներառում է նաև վերարտահանումը: Ինչ վերաբերում է ներմուծմանը՝ Հայաստանը ներմուծում է բազմազան ապրանքներ, ինչն էլ արտացոլվում է տարիների ընթացքում ներմուծման ցածր կենտրոնացվածության մեջ: Հանքային վառելիքը (բնական գազ, նավթ, նավթամթերք և այլն) ունի ամենամեծ մասնաբաժինը Հայաստանի ապրանքային ներմուծման մեջ, որին հաջորդում են տարբեր տեսակի մեքենաները և սարքավորումները: 2013-2021 թթ.-ին հանքային վառելիքը միջինում կազմել է ապրանքային ներմուծման տարեկան 18%-ը: Հաշվի առնելով, որ ավտոմեքենաների, մեքենաների ու սարքավորումների ներմուծումը վերաարտահանման նպատակով 2022 և 2023 թվականներին աճել է, վառելիքի մասնաբաժինը ներմուծման մեջ կրճատվել է՝ 2022 թ-ին կազմելով 13%, իսկ 2023 թ-ին՝ 9%:


Գծապատկեր 30. ՀՀ արտահանման և ներմուծման կենտրոնացվածությունը (ՀՀԻ) ըստ ապրանքների, 2013-2023 թթ.



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Հայաստանի և այլ երկրների միջև առևտրի համատեղելիության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի արտահանման կառուցվածքը հիմնականում քիչ ընդհանրություններ ունի այլ երկրների ներմուծման կառուցվածքի հետ: Մասնավորապես, դիտարկված 100 երկրներից 94-ի դեպքում Հայաստանի առևտրի համատեղելիության ինդեքսը (ԱՀԻ, անգլերեն համարժեք եզրույթը՝ Trade Compatibility Index, TCI) չափավոր է (25-50), և միայն 6 երկրների դեպքում՝ բարձր (50-75): Սա խոսում է այն մասին, որ չնայած Հայաստանի արտահանման և այլ երկրների ներմուծման կառուցվածքների միջև առկա է որոշակի նմանություն, արտահանվող և ներմուծվող ապրանքատեսակները զգալիորեն տարբերվում են: Հայաստանի արտահանումը մեծապես համընկնում է ԱՄԷ (ԱՀԻ-ն կազմում է 55.3), Բահրեյնի (54.2), Ռումինիայի (52.2), Շվեյցարիայի (50.7) և Բոտսվանայի (50.3) ներմուծման կառուցվածքի հետ: Հայաստանի արտահանման և ԵՄ ներմուծման կառուցվածքների միջև ընդհանրությունները չափավոր են (41.2): ԵՄ առանձին երկրների ներմուծման և Հայաստանի արտահանման համատեղելիությունը համեմատաբար բարձր է Ռումինիայի (52.2), Բուլղարիայի (46.8) և Ավստրիայի (46.8) դեպքում:


Գծապատկեր 31. ՀՀ արտահանման համատեղելիությունը այլ երկրների ներմուծման հետ, 2022 թ.



Աղբյուր՝ հեղինակների հաշվարկներ՝ Համաշխարհային բանկի WITS վիճակագրական շտեմարանի հիման վրա

Պատկերը փոքր-ինչ տարբեր է Հայաստանի ներմուծման պարագայում: Հայաստանի ներմուծման և դիտարկված 100 երկրներից 90-ի արտահանման նկարագրերի միջև ընդհանրությունները նշանակալի են (50-75), մնացած 10-ի դեպքում՝ չափավոր (25-50): Մասնավորապես, Հայաստանի ներմուծման կառուցվածքը մեծապես համընկնում է Լեհաստանի (74.0), Ռումինիայի (72.6), ԱՄՆ (72.2), Ֆրանսիայի (70.9), Խորվաթիայի (70.6), Բուլղարիայի (70.3), Թուրքիայի (70.2), և այլ երկրների արտահանման կառուցվածքների հետ:

Գծապատկեր 32. ՀՀ ներմուծման համատեղելիությունը այլ երկրների արտահանման հետ, 2022 թ.




Աղբյուր՝ հեղինակների հաշվարկներ՝ Համաշխարհային բանկի WITS վիճակագրական շտեմարանի հիման վրա

Ընդհանուր առմամբ, Հայաստանի արտահանումը՝ թե՛ աշխարհագրական, թե՛ ապրանքային կառուցվածքների տեսանկյունից, շատ քիչ նմանություն ունի դիտարկված երկրների արտահանման կառուցվածքների հետ: Համեմատաբար մեծ

նմանություն կա Հայաստանի ու Ղրղզստանի (արտահանման նմանության ինդեքսը (ԱՆԻ) կազմում է 61.9), Ղազախստանի (33.8), Ուզբեկստանի (32.2), Թուրքիայի (28.7) և Լիբանանի (28.4) առևտրային գործընկերների միջև, այնուամենայնիվ, Հայաստանից ու այս երկրներից արտահանվող ապրանքների միջև նմանությունը շատ քիչ է (համապատասխանաբար 16.8, 9.8, 10.2, 17.6, 19.2): Հայաստանը, Ղազախստանը և Ղրղզստանը ԵՄՏՄ անդամ են, ինչով էլ հավանաբար պայմանավորված են նրանց առևտրային գործընկերների միջև նմանությունները: Արտահանվող ապրանքների տեսանկյունից Հայաստանը համեմատաբար զգալի նմանություն ունի Չեխիայի Հանրապետության հետ (ԱՆԻ 23.7), բայց երկու երկրների արտահանման ուղղությունները շատ տարբեր են (ԱՆԻ 16.5): Դիտարկված երկրներից Պերուն է, որ և՛ արտահանման ուղղությունների (ԱՆԻ 23.1), և՛ արտահանվող ապրանքների (25.2) տեսանկյունից համեմատաբար մեծ նմանություն ունի Հայաստանի հետ: Պերուի հետ նմանությունը հավանաբար պայմանավորված է նրանով, որ երկու երկրներն էլ պղնձի արտահանողներ են:


Գծապատկեր 33. Հայաստանի և այլ երկրների արտահանման նմանությունը, 2022 թ .



Աղբյուր՝ հեղինակների հաշվարկներ՝ Համաշխարհային բանկի WITS վիճակագրական շտեմարանի հիման վրա

Հումքային ապրանքները¹⁸ ավանդաբար գերակշռել են Հայաստանի արտահանման մեջ: 2013-2023 թթ. -ին հումքային ապրանքների արտահանումը միջինում կազմել է տարեկան ապրանքային արտահանման 56%-ը: 2022 թ-ին՝ ավտոմեքենաների, մեքենաների ու սարքավորումների վերաարտահանման աճի հետևանքով, հումքային ապրանքների արտահանման մասնաբաժինը նախորդ տարվա համեմատ կրճատվել է՝ 56.3%-ից հասնելով 46.3%: 2023 թ-ին հումքի արտահանումը վերադարձել է նախկին մակարդակին մեծապես շնորհիվ ոսկերչական իրերի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանման աճի (նախորդ տարվա համեմատ աճել է 3 անգամ): Ոսկերչական իրերի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանման մեծ մասը հավանաբար կազմում է վերաարտահանումը: Դրա մասին է խոսում նաև այս ապրանքների ներմուծման աճը, ինչի արդյունքում հումքային ապրանքների մասնաբաժինը ներմուծման մեջ 2023 թ-ին աճել է 2022 թ-ի (27.2%) համեմատ՝ կազմելով 32.1%: Հայաստանը հիմնականում ներմուծում է վերջնական սպառման ապրանքներ: 2013-2023 թթ. -ին վերջնական սպառման ապրանքների ներմուծումը միջինում կազմել է տարեկան ներմուծման 71%-ը:

Գծապատկեր 34. Հումքային ապրանքների մասնաբաժինը Հայաստանի արտահանման և ներմուծման մեջ, 2013-2023 թթ.



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանից վերաարտահանումը աճել է շուրջ 2.6 անգամ: ՄԱԿ-ի տվյալները փաստում են, որ 2023 թ-ին վերաարտահանումը կազմել է 280 միլիոն դոլար, այնինչ 2013 թ-ին կազմում էր 109 միլիոն դոլար: Համաձայն ՄԱԿ-ի վիճակագրական տվյալների՝ 2023 թ-ին Հայաստանից վերաարտահանված

¹⁸ Հումքային ապրանքներ են համարվել ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման հետևյալ խմբերը՝ 25-29, 71, 72, 74-76, 78-81


ապրանքների 59.7%-ը ուղղվել է ԵՄ երկրներ: Այնուամենայնիվ, մի շարք պատճառներով այս տվյալները չեն արտացոլում Հայաստանից վերարտահանման ամբողջական պատկերը: Մասնավորապես, Ռուսաստանը (Հայաստանի հիմնական առևտրային գործընկերը) ներառված չէ այս տվյալների մեջ, ինչպես և ֆիզիկական անձանց կողմից իրականացված վերարտահանումը: Ինչ վերաբերում է Հայաստանից Ռուսաստան վերաարտահանմանը՝ ԵԱՏՄ անդամ երկրները միմյանց հետ առևտրում չեն տարբերակում տեղական արտադրության ապրանքների և երրորդ երկրներում արտադրված ապրանքների արտահանման հոսքերը և երկու հոսքերն էլ ներկայացնում են որպես տեղական արտահանում (անգլերեն համարժեք եզրույթները՝ domestic exports): Այդ իսկ պատճառով, համաձայն ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարանի՝ 2018 թ-ից ի վեր Հայաստանից ԵԱՏՄ երկրներ վերարտահանում չի եղել: Սակայն իրականում Հայաստանից Ռուսաստան արտահանման մի մասը վերարտահանում է: Օրինակ, 2023 թ-ին Հայաստանը Ռուսաստան է արտահանել մոտ 378 միլիոն դոլար ընդհանուր արժեքով 17,684 ավտոմեքենա (USԳ ԱԱ 8703)¹⁹, ինչը վերարտահանում է՝ հաշվի առնելով, որ Հայաստանը ավտոմեքենաներ չի արտադրում:

Ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները մտավախություն են առաջացրել, որ Հայաստանում տնտեսական գործունեության մի շարք տեսակներ կարող են ներգրավված լինել Ռուսաստան վերահսկվող ապրանքների վերաարտահանման մեջ: Հայաստանի իշխանությունները հանձն են առել հավատարիմ լինել ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ԵՄ-ի կողմից սահմանված պատժամիջոցներին և տարբեր միջոցներ են ձեռնարկել պատժամիջոցներով արգելված ապրանքների վերաարտահանումը Ռուսաստան կանխելու համար: Օրինակ, 2023 թ-ի մայիսին ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում 93 զգայուն ապրանքների արտահանման և տարանցման խիստ վերահսկողության վերաբերյալ: Այս ցանկի մեջ ներառված են նաև ԱՄՆ և ԵՄ կողմից սահմանված բարձր առաջնահերթություն ունեցող ռազմական նշանակության ապրանքներ (անգլերեն համարժեք եզրույթ՝ High Priority Battlefield Items) (ITA, 2023).²⁰ 2024 թ-ին այս ցանկը թարմացվել է և ապրանքների քանակը հասել է 98-ի:

¹⁹ UN Comtrade Database, accessed May 15, 2024, <https://is.gd/oq1ZCj>

²⁰ ARLIS, the Decision of the RA Government N 808-N of May 25, 2023, հասանելի է 2024թ-ի մայիսի 15-ի դրությամբ <https://is.gd/8gijjO>


Գծապատկեր 35. ՀՀ վերարտադրողական ըստ ուղղությունների, 2013-2023 թթ.



Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

2023 թ-ին ծխախոտը Հայաստանից վերարտադրանվող առաջատար ապրանքն էր (առանց ԵԱՏՄ երկրներ վերարտադրանումը հաշվի առնելու)՝ 12.2% մասնաբաժնով (34.2 ԱՄՆ դոլար), որին հաջորդում էին տղաների և տղամարդկանց համար հագուստը (11.3%) և ադամանդը (10.8%): 2013-2023 թթ.-ին վերարտադրանմանը կառուցվածքը ենթարկվել է զգալի փոփոխության. Հայաստանը սկսել է վերարտադրանել ավելի բազմազան ապրանքներ: Այս ժամանակահատվածում ադամանդները շարունակում էին մնալ Հայաստանից վերարտադրանվող երեք ամենախոշոր ապրանքների շարքում, սակայն դրանց մասնաբաժինը կրճատվում էր՝ այլ ապրանքների վերարտադրանման աճի հետևանքով: Վերջին 10 տարիներին զգալիորեն աճել են տարբեր տեսակի հագուստի, ներառյալ վերարկուներ, տաբատներ, և ոսկերչական իրերի վերարտադրանումը:

Գծապատկեր 36. ՀՀ վերարտահանումն ըստ ապրանքների, 2013-2023 թթ.



Նշում՝ (1) Ապրանքները խմբավորված են ըստ ԱՏԳ ԱԱ 6-նիշ դասակարգչի; (2) մեթոդաբանական փոփոխությունների պատճառով Հայաստանից ԵԱՏՄ երկրներ վերարտահանումը ներառված չէ 2013-2023 թթ. տվյալներում
Աղբյուր՝ ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարան

Հայաստանի՝ դեպի ծով ելք չունենալը, չորս հարևաններից երկուսի հետ փակ սահմանները թույլ զարգացած ենթակառուցվածքների և կապուղիների հետ միասին բացասաբար են ազդում արտաքին շուկաներում երկրի մրցունակության վրա: Օրինակ, Համաշխարհային բանկի Լոգիստիկ կատարողականի ինդեքսով (անգլերեն համարժեք եզրույթ՝ Logistics Performance Index) Հայաստանը՝ 2.5 միավորով, 139 երկրների շարքում զբաղեցնում է 97-րդ տեղը: Սա նշանակում է, որ երկրի լոգիստիկ ենթակառուցվածքները զգալի խնդիրներ ունեն, որոնք կարող են ազդել ապրանքների արդյունավետ տեղափոխման և համաշխարհային առևտրին արդյունավետ մասնակցության վրա:²¹ Հայաստանի սահմանները Ադրբեջանի և Թուրքիայի հետ փակ են՝ առևտրի և փոխադրումների համար հասանելի թողնելով միայն Վրաստանի հետ հյուսիսային և Իրանի հետ հարավային սահմանները: Սակայն Իրանի հետ հաղորդակցությունը սահմանափակ է երկրի նկատմամբ սահմանված միջազգային պատժամիջոցների պատճառով: Առևտրի համար հասանելի էմիայն բեռնատարներով փոխադրումների տարբերակը և հիմնականում մեկ ուղղությամբ. բեռնատարները ապրանքներ են փոխադրում Իրանից Հայաստան կամ Հայաստանի տարածքով այլ երկրներ: Արդյունքում, Հայաստանի միջազգային առևտուրը զգալի չափով հենվում է

²¹ The World Bank, 2023 Logistics Performance Index (LPI), <https://is.gd/RPZG28>

հյուսիսային հարևան Վրաստանով անցնող բեռնափոխադրումների միջանցքների վրա: Երկիր մուտք գործող և երկրից դուրս եկող բեռների հիմնական մասը տարանցվում է Վրաստանի տարածքով՝ ավտոմոբիլային ճանապարհով կամ Սև ծովի ափին գտնվող Փոթի նավահանգստով: Պետք է նշել, որ վերջին շրջանում խոսվում է Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային սահմանը երրորդ երկրների քաղաքացիների և դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար բացելու մասին, ինչն ըստ տարբեր միջազգային կառույցների կարող է դրական ազդեցություն ունենալ Հայաստանի կապակցվածության վրա (Hurer, 2024): Օդային բեռնափոխադրումն ապրանքներ փոխադրելու ևս մեկ տարբերակ է, սակայն այն սահմանափակ է բարձր արժեքի պատճառով: Մասնավորապես, օդային բեռնափոխադրումների արժեքը 4-5 անգամ բարձր է ավտոմոբիլային տրանսպորտից և 12-16 անգամ՝ ծովայինից (EBRD et al. 2023): Օդային ճանապարհով փոխադրվող ապրանքները որպես կանոն ունեն բարձր արժեք մեկ միավորի համար կամ շատ զգայուն են ժամանակի նկատմամբ, օրինակ՝ փաստաթղթերը, դեղագործական ապրանքները, նորաձևության հագուստները, արտադրության նմուշները, էլեկտրոնիկան, ինչպես նաև փչացող գյուղատնտեսական ապրանքներն ու ծովամթերքը:

5.3 Ծառայությունների առևտրի խոցելիությունը

Հայաստանից ծառայությունների արտահանումը վերջին տասնամյակներին զգալիորեն կենտրոնացված է: 2007-2023 թթ.-ին ճանապարհորդությանը միջինում բաժին էր հասնում ծառայությունների տարեկան արտահանման 57.3%-ը, որին հաջորդում են տրանսպորտը և SS ծառայությունները: Այս կենտրոնացվածությունը նշանակում է, որ Հայաստանից ծառայությունների արտահանումը խիստ խոցելի է արտաքին ցնցումների նկատմամբ: Օրինակ, 2020թ-ին ՔՈՎԻԴ-19 համավարակի պատճառով հայտարարված սահմանափակումներով պայմանավորված ճանապարհորդության շուրջ կենտրոնացած Հայաստանի ծառայությունների արտահանումը նշանակալիորեն կրճատվել էր (54.8%), մինչդեռ 2022 թ-ին Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Ռուսաստանից SS ոլորտի մասնագետների ներհոսքով պայմանավորված՝ աճել 2.5 անգամ:


2020 թ-ին SS ծառայությունների արտահանումը գերազանցել է տրանսպորտային ծառայությունների արտահանմանը՝ դառնալով Հայաստանից արտահանվող երկրորդ խոշոր ծառայությունների տեսակը: Այդ տարվանից ի վեր SS ծառայությունները կայուն պահպանել են այս դիրքը՝ մնալով երկրի ծառայությունների արտահանման երկրորդ ամենախոշոր ոլորտը:

2023 թ-ին Հայաստանի ծառայությունների արտահանումը շարունակել է աճել՝ 2022 թ-ի համեմատ աճելով 30%-ով և կազմելով 5,619 մլն ԱՄՆ դոլար: Այս աճը հիմնականում պայմանավորված էր ճանապարհորդության (23.4%), տրանսպորտի (53.1%) և SS

(51.0%) ոլորտների աճով: 2023 թ-ին ճանապարհորդության ոլորտի ծառայությունների արտահանումը կազմել է 3,009 մլն ԱՄՆ դոլար կամ ծառայությունների ընդհանուր արտահանման 53.6%-ը: SS ոլորտի ծառայությունների արտահանումը կազմել է 1,074 մլն ԱՄՆ դոլար կամ 19.1%, իսկ տրանսպորտային ծառայությունները կազմել են 896 մլն ԱՄՆ դոլար կամ 15.9%:

2022 և 2023 թթ.-ին Ռուսաստանից Հայաստան մարդկանց մեծ ներհոսքով և նրանց կողմից ֆինանսական ծառայությունների սպառմամբ պայմանավորված՝ ֆինանսական ծառայությունների արտահանումը Հայաստանից նշանակալիորեն աճել է՝ նպաստելով ծառայությունների արտահանման կառուցվածքում այս ոլորտի մասնաբաժնի զգալի աճին: Օրինակ՝ 2022 թ-ին ֆինանսական ծառայությունների արտահանումը նախորդ տարվա համեմատ աճել է 14 անգամ, իսկ մասնաբաժինը ծառայությունների ընդհանուր արտահանման մեջ կազմել է 4.6%՝ 2021 թվականի 0.8%-ի դիմաց:


Գծապատկեր 37. ՀՀ ծառայությունների արտահանումը, 2007-2023 թթ.



Աղբյուր՝ ՀԲ, ՀՀ ԿԲ

ՀՀ ծառայությունների ներմուծման մեջ գերակշռում են ճանապարհորդությունը և տրանսպորտային ծառայությունները: 2007-2023 թթ.-ին այս երկու ոլորտները միասին միջինում կազմել են ծառայությունների ընդհանուր ներմուծման տարեկան 81.3%-ը: 2023 թ-ին ճանապարհորդությունների մասով ներմուծումը կազմել է 1,642 մլն ԱՄՆ դոլար՝ 2022 թ-ի համեմատ աճելով 26.6%-ով: Տրանսպորտային ծառայությունների ներմուծումը կազմել է 1,050 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 31.5%-ով:

Գծապատկեր 38. ՀՀ ծառայությունների ներմուծումը, 2007-2023 թթ.



Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, ՀՀ ԿԲ

Հայաստանի ծառայությունների ներմուծման երրորդ խոշոր ոլորտը «Այլ գործնական ծառայություններն են», որի մեջ են մտնում մասնագիտական և կառավարման խորհրդատվական ծառայությունները, ներառյալ իրավաբանական, հաշվապահական ծառայությունները, կառավարման խորհրդատվությունը, հասարակայնության հետ կապերին առնչվող ծառայությունները, գովազդը և շուկայի հետազոտությունները, ինչպես նաև տեխնիկական, առևտրի հետ կապված և այլ գործնական ծառայությունները, ներառյալ ճարտարապետական, ինժեներական և գիտական ծառայությունները: Այս տեսակի ծառայությունների ներմուծումը 2023 թ-ի կազմել է 162 մլն ԱՄՆ դոլար կամ երկրի ծառայությունների ընդհանուր ներմուծման 4.9%-ը:


5.4 Օտարերկրյա ներդրումների խոցելիությունը

Չնայած ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացմանը, Հայաստանը շարունակում է դժվարություններ ունենալ օտարերկրյա ներդրումներ ներգրավելու հարցում: 2007 թ-ից սկսած ՕՈՒՆ-ների ներհոսքը Հայաստանում աստիճանաբար կրճատվել է: 2008-2020 թվականներին Հայաստանի ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքը 944 մլն ԱՄՆ դոլարից նվազել է մինչև 59 միլիոն դոլար: ՔՈՎԻԴ-19 համավարակի և 2020 թ-ին Լեռնային Ղարաբաղում պատերազմի հետևանքով զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ նվազել է 41.6%-ով: Հայաստանում իրականացվող օտարերկրյա ներդրումները հիմնականում խիստ զգայուն են արտաքին ցնցումների նկատմամբ՝ լինեն դրանք դրական, թե բացասական: Օրինակ, 2022թ-ին կտրուկ աճը մասամբ պայմանավորված էր դրամի արժևորմամբ և ռուս-ուկրաինական պատերազմի բռնկումից և Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցների սահմանումից հետո դիտված ռուսական կապիտալի

ներհոսքով: 2023 թ-ին ՕՈԻՆ-ների զուտ ներհոսքը դանդաղել է, այն գրեթե 56%-ով ցածր է եղել 2022 թ-ի համեմատ, ինչը մասամբ պայմանավորված էր 2022 թ-ին գրանցված ՕՈԻՆ-ների զուտ ներհոսքի զգալիորեն բարձր մակարդակով:

Ներդրումների արտահոսքը ավանդաբար ցածր է եղել՝ մի քանի տասնամյակներով վերջին տասնամյակներին:


Գծապատկեր 39. ՀՀ ՕՈԻՆ-ների զուտ ներհոսքերի և արտահոսքերի ծավալները, 2007-2023 թթ.



Աղբյուր՝ ՀԲ

ՕՈԻՆ-ների ներհոսքի ծավալով Հայաստանը զիջում է համանման շատ երկրների: Թեև 2007-2022 թթ.-ին մեկ շնչին ընկնող ՕՈԻՆ-ների պաշարն աճել է մոտ երեք անգամ և հասել 2,562 ԱՄՆ դոլարի, վերջին տարիներին այն Հայաստանում ավելի ցածր էր, քան համանման երկրներում: Օրինակ՝ 2022 թ-ին հարևան Վրաստանի մեկ շնչի հաշվով ՕՈԻՆ-ների պաշարները 2.3 անգամ գերազանցել են Հայաստանին: Նույն ցուցանիշը Էստոնիայում նույնիսկ ավելի բարձր էր. մոտ 9 անգամ ավելի, քան Հայաստանում: Համանման երկրներից Հայաստանը միայն առաջ է Մոլդովայից, որտեղ մեկ շնչի հաշվով ՕՈԻՆ-ների պաշարը կազմել է 1,497 ԱՄՆ դոլար: Կան մի քանի գործոններ, որոնցով պայմանավորված Հայաստանը զիջում է ընտրված երկրներին: Այդ գործոններից է աշխարհաքաղաքական իրավիճակը, որը ներդրողների համար ստեղծում է անորոշություն և ռիսկ: Բացի այդ, Հայաստանի աշխարհագրական դիրքը սահմանափակում է մուտքը արտաքին շուկաներ՝ ստեղծելով լրացուցիչ խոչընդոտներ ներդրումների համար: Մեկ այլ խոչընդոտ ենթերգարգացած ենթակառուցվածքները և դրանց բարելավմանն ուղղվող անբավարար ներդրումները:


Գծապատկեր 40. ՀՀ մեկ շնչի հաշվով ՕՈՒՆ-ների պաշարներն այլ երկրների համեմատ, 2007-2022 թթ.



Աղբյուր՝ ՄԱԱԶՀ

2023 թ-ի դրությամբ երեք երկրներ՝ Ռուսաստան, Կիպրոս և Շվեյցարիա, ապահովել են Հայաստանում ՕՈՒՆ-ների պաշարների 46%-ը: Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի տնտեսության հիմնական օտարերկրյա ներդրողը: 2023 թ-ին Ռուսաստանին բաժին է հասել Հայաստանի տնտեսության իրական հատված ՕՈՒՆ-ների ներհոսքի մոտ 63%-ը (871 մլն ԱՄՆ դոլար): Ռուսական ներդրումներն ավանդաբար ուղղվում են էլեկտրաէներգիայի, գազի մատակարարման և հեռահաղորդակցության ոլորտներ: Կիպրոսի մասնաբաժինը Հայաստանի ՕՈՒՆ-ների պաշարներում նախորդ տարվա համեմատ կրճատվել է 2 տոկոսային կետով և 2023 թ-ի վերջին կազմել է 10%: Ինչ վերաբերում է Շվեյցարիային, ապա այս երկրի կողմից Հայաստանում իրականացված ՕՈՒՆ-ների պաշարներն 2023 թ-ի վերջին 2021 թ-ի համեմատ աճել են 3.7 անգամ, իսկ 2022 թ-ի համեմատ 26%-ով: Շվեյցարիայի ասնաբաժինը հասնել է 7.5%-ի, ինչը 5.2 տոկոսային կետով ավելի է, քան 2021 թ-ի վերջի դրությամբ: 2023 թ-ին Շվեյցարիայի ՕՈՒՆ-ներն ուղղվել են մեծաձախ առևտրի և շինարարության ոլորտներ:

Գծապատկեր 41. ՀՀ ՕՈՒՆ-ների մաքուր պաշարներն ըստ երկրների, 2021-2023 թթ. տարեվերջի դրությամբ




Աղբյուր՝ Արմատատ

2023 թ-ի վերջի դրությամբ ՕՈՒՆ-ների պաշարների 65%-ը բաժին է հասել հետևյալ ոլորտներին՝ ֆինանսական միջնորդություն, էլեկտրականության և գազի մատակարարում, մետաղական հանքաքարի արդյունահանում և հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն: Ֆինանսական միջնորդության գործունեությանը՝ բացի ապահովագրությունից և կենսաթոշակային ապահովությունից, բաժին է ընկել Հայաստանում իրականացված ՕՈՒՆ-ների պաշարների 32.4%-ը (1,001 մլրդ դրամ կամ մոտ 2.5 մլրդ ԱՄՆ դոլար): Այս ոլորտում իրականացվող օտարերկրյա ներդրումների մեծ մասը ուղղվում է բանկային հատված: Հայաստանում գործող 18 բանկերի մեծ մասը ինչ-որ չափով ունեն օտարերկրյա մասնակցություն:

Ինչ վերաբերում է վերջին տարիներին իրականացված ներդրումների ուղղություններին, ապա 2023 թ-ին ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքը ֆինանսական միջնորդության ոլորտում գլխավորել է ՕՈՒՆ-ների ներհոսքի ոլորտային բաշխումը՝ 33% մասնաբաժնով: ՕՈՒՆ-ների ներհոսքի մեկ այլ հիմնական ուղղություն է էլեկտրականության և գազի մատակարարումը, որին բաժին է հասել է ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքի 12%-ը:


Գծապատկեր 42. ՀՀ ՕՈՒՆ-ների մաքուր պաշարներն ըստ ոլորտների, 2021-2023 թթ. տարեվերջի դրությամբ



Աղբյուր՝ Արմատատ

Ինչպես երևում է ՕՈՒՆ-ների կառուցվածքից՝ Հայաստանում իրականացված օտարերկրյա ներդրումների մեծ մասն ուղղված է ներքին շուկա, մասնավորապես՝ բանկային ոլորտ և ենթակառուցվածքներ: Այս ոլորտներն առաջին հերթին սպասարկում են տեղի բնակչության պահանջմունքները: Այնինչ հանքարդյունաբերության ոլորտում իրականացված ներդրումները վճռորոշ դեր ունեն Հայաստանի արտահանման համար, քանի որ պղնձի հանքաքարը և ոսկին երկրից արտահանվող առաջնային ապրանքներից են: Հանքարդյունաբերության ոլորտում ներդրումների մեծ մասը կենտրոնացած է ոսկու արդյունահանման ծրագրերում (Լիդիան Արմենիա), որոնք վերջին տարիներին բողոքի ակցիաների առարկա էին դարձել՝ հանգեցնելով բնակչության և բնապահպան ակտիվիստների կողմից տարածքների շրջափակման, տնտեսական գործունեության դադարեցման և հետևաբար՝ ներդրումների կրճատման: Այնուամենայնիվ, այս խնդիրը լուծվեց 2023 թ-ին, երբ Հայաստանի կառավարությունը հայտարարեց Լիդիան Արմենիայի և Եվրասիական զարգացման բանկի հետ եռակողմ հուշագրի ստորագրման մասին, որի նպատակն էր վերագործարկել Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը (Hetq, 2023):


Գծապատկեր 43. ՀՀ իրականացրած ՕՈՒՆ-ների պաշարները, 2007-2023 թթ. տարեվերջի դրությամբ



Աղբյուր՝ ՄԱԱԶՀ

ՕՈՒՆ-ները Հայաստանում ավելի տարածված ներդրումային գործիք են, քան պորտֆելային ներդրումները՝ թե՛ երկրում իրականացված, թե՛ երկրի իրականացրած ներդրումների տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, 2007 թ-ից ի վեր պորտֆելային ներդրումների և՛ գուտ ներհոսքը, և՛ գուտ արտահոսքը ՀՆԱ-ի նկատմամբ միջինում կազմել է 0.1%: 2007-2023 թթ.-ներին պորտֆելային ներդրումների գուտ ներհոսքը կտրուկ աճել է՝ հատկապես բարձր ցուցանիշ գրանցելով 2013 թ-ին (695 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 6.2%-ը), 2015 թ-ին (255 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 2.4%-ը) և 2021 թ-ին (726 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 5.2%-ը): Պետական պարտքային արժեթղթերում ներդրումները կազմում են պորտֆելային ներդրումների ներհոսքի գրեթե ամբողջ մասը: 2013 թ-ին արձանագրված գուտ ներհոսքի 356-անգամյա աճը պայմանավորված էր 2013 թ-ի սեպտեմբերին կապիտալի միջազգային շուկայում Հայաստանի 700 մլն ԱՄՆ դոլարի ծավալով արտարժույթային պետական պարտատոմսերի (եվրապարտատոմսերի) դեբյուտային թողարկմամբ (Radio Azatutyun, 2013b): Նմանապես, 2015 և 2021 թվականների կտրուկ աճերը պայմանավորված էին նոր եվրապարտատոմսերի թողարկումներով:


Գծապատկեր 44. ՀՀ-ում իրականացված պորտֆելային ներդրումների զուտ ներհոսքը, 2007-2023 թթ .



Աղբյուր՝ ԱՄՀ

Ինչ վերաբերում է պորտֆելային ներդրումների զուտ արտահոսքին, ապա այն 2015 թ-ից աստիճանաբար աճել է: 2015 թ-ին պորտֆելային ներդրումների զուտ արտահոսքը կազմել է 19 մլն ԱՄՆ դոլար, ինչը երեք անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը, իսկ 2021 թ-ին հասել է 54 մլն ԱՄՆ դոլարի: Այս ժամանակահատվածում Հայաստանի ռեզիդենտները հիմնականում օտարերկրյա պորտֆելային ներդրումներ են կատարել բաժնետիրական գործիքներում: 2022 թ-ին զուտ արտահոսքը կազմել է 1,356 մլն ԱՄՆ դոլար, ինչը 19 անգամ ավելի է, քան նախորդ տարի: Այս կտրուկ աճը պայմանավորված էր ավանդատու կազմակերպությունների (բացի Կենտրոնական բանկից) կողմից պարտքի արժեթղթերում ներդրումների աճով (903 մլն ԱՄՆ դոլար), ինչը իր հերթին պայմանավորված էր ՌԴ քաղաքացիների և ռուսական կապիտալի զգալի ներհոսքով: Մասնավորապես, Ուկրաինայում պատերազմի սկսվելուց ի վեր Ռուսաստանից Հայաստան մարդկանց մեծ ներհոսքը հանգեցրել է ՀՀ բանկային համակարգում ավանդների, միջնորդավճարների ու այլ վճարների գծով եկամուտների կտրուկ աճի, և իրենց ակտիվները արդյունավետ կառավարելու նպատակով բանկերը ավելացրել են իրենց ներդրումները պարտքային գործիքներում, ինչը արտացոլվել է պորտֆելային ներդրումների աճի մեջ:

Գծապատկեր 45. ՀՀ իրականացրած պորտֆելային ներդրումների զուտ արտահոսքը, 2007-2023 թթ.




Աղբյուր՝ ԱՄՀ

5.5 Բնակչության շարժունակության հետ կապված խոցելիությունը

2007-2023 թթ. -ի միգրացիոն միտումները ցույց են տալիս, որ Հայաստանից ավելի շատ մարդ է արտագաղթել, քան ներգաղթել, թեև վերջին տարիներին խզվածքը կրճատվում է՝ Հայաստան մարդկանց ներհոսքի աճով պայմանավորված: 2022 և 2023 թթ-ին զուտ միջազգային միգրացիան կազմել է -5,000 (ընդհանուր բնակչության 0.2%-ը)՝ համեմատած 2007 թ-ի -31,530-ի հետ (ընդհանուր բնակչության 1.0%-ը):

Գծապատկեր 46. ՀՀ միգրացիայի մնացորդը, 2007-2023 թթ.




Աղբյուր՝ ՀԲ, Արմաստատ

2021 թ-ին, ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), Հայաստանից արտագնա աշխատողների թիվը կազմել է 37,913, ինչը կազմում է ընդհանուր բնակչության 1.4%-ը: Աշխատանքի նպատակով երկիրը լքած անձանց թիվը 2021 թ-ին նվազել է 2017 թ-ի (86,837 կամ բնակչության 3.0%) և 2018 թ-ի (68,141 կամ բնակչության 2.4%) համեմատ: 2021 թ-ին ներգաղթած աշխատողների թիվը կազմել է 2,545 կամ բնակչության 0.1%-ը, ինչը աճ է 2018 թ-ի համեմատ (615 անձ կամ բնակչության 0.02%): Սակայն պետք է նշել, որ այս թվերը չեն արտացոլում Հայաստանի աշխատանքային միգրացիայի ամբողջական և ճշգրիտ պատկերը՝ ոլորտի վիճակագրության սահմանափակումների պատճառով:

Տարիներ շարունակ մեծ թվով ՀՀ քաղաքացիներ աշխատանքի նպատակով մեկնում են երկրից, հիմնականում սեզոնային աշխատանքի նպատակով՝ Ռուսաստան: Օրինակ, 2017-2022 թթ.-ին միջինում տարեկան 240 հազար Հայաստանի քաղաքացիներ աշխատանքի նպատակով մեկնել են Ռուսաստան, ինչը միջինում կազմում է բնակչության մոտ 8%-ը: 2020 թ-ին, ԲՈՎԻԴ-19 համավարակի պատճառով, Ռուսաստան մեկնած աշխատանքային միգրանտների թիվը նվազել է և կազմել 69 հազար: 2022 թ-ին 332 հազար մարդ աշխատանքի նպատակով մեկնել է Ռուսաստան, ինչը կազմել է բնակչության 12.0%-ը:

Գծապատկեր 47. Հայաստանից Ռուսաստան արտագնա աշխատանքային միգրացիան, 2017-2022 թթ.



Աղբյուր՝ ՌԴ ներքին գործերի նախարարություն


Ընդհանուր առմամբ, Ռուսաստանը Հայաստանից աշխատանքային միգրացիայի հիմնական ուղղությունն է: Ըստ ԱՄԿ-ի՝ 2021 թ-ին Հայաստանից մեկնող աշխատանքային միգրանտների մոտ 96.0%-ը մեկնել է Ռուսաստան: Նույն կերպ, Հայաստան ժամանած աշխատանքային միգրանտների մեծամասնությունը (2018 թ-ին 67.2%-ը) ժամանել են Ռուսաստանից:

2022 թ-ին, ռուս-ուկրաինական պատերազմի սկսվելուց հետո, ՌԴ շատ քաղաքացիներ տեղափոխվել են Հայաստան, այդ թվում՝ աշխատանքի նպատակով: Համաձայն Հայաստանի պետական պաշտոնյաների՝ 2022 թ-ին Հայաստան է տեղափոխվել մոտ 108-110 հազար ռուսաստանցի, գրանցվել է 2,500 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ՝ ռուս մասնակիցներով, ինչպես նաև 4,000 անհատ ձեռնարկատեր: 2022 թ-ի վերջի դրությամբ, Հայաստանի SS ոլորտում աշխատող Ռուսաստանի քաղաքացիների թիվը կազմել է 7,215, ինչը 25 անգամ ավելի էր, քան տարեսկզբին (Modex, 2024): 2023 թ-ի վերջին SS ոլորտում աշխատող Ռուսաստանի քաղաքացիների թիվը հասել է 8,262-ի: Այս ոլորտը Հայաստանում բարձր վարձատրվողներից է, և ոլորտում գործատուների աճը նպաստեց բնակչության սպառման, հարկատուների վճարած հարկերի աճին և այլն: Հարկ է նշել, որ հաշվի առնելով Հայաստան ժամանող աշխատանքային միգրանտների ցածր թիվը, նրանց ազդեցությունը աշխատուժի առաջարկի վրա էական չէ: Ինչ վերաբերում է Ռուսաստանի քաղաքացիների հոսքին, օրինակ՝ Հայաստանի SS ոլորտ, նրանց մեծամասնությունը աշխատում է ռելյուկացված ընկերություններում, ընդ որում՝ այդ ընկերություններից շատերը, որպես կանոն, քիչ են ներգրավում Հայաստանի քաղաքացիներին և գործում են Հայաստանի SS համայնքից մեկուսի (Modex, 2024):

Աշխատանքային միգրանտների արտերկրից ուղարկված դրամական փոխանցումները երկար տարիներ եղել են տեղի բնակչության եկամուտների կարևոր աղբյուր: 2022 թ-ին Հայաստանի ռեզիդենտները ստացել են 2,035 մլն ԱՄՆ դոլարի չափով անձնական դրամական փոխանցումներ, ինչը կազմել է ՀՆԱ-ի 10.4%-ը: Այնուամենայնիվ, 2007 թ-ի համեմատ դրամական փոխանցումներից կախվածությունը նվազել է: Մասնավորապես, 2007 թ-ին անձնական դրամական փոխանցումները կազմում էին ՀՆԱ-ի 18.0%-ը: Հաշվի առնելով, որ Հայաստանի աշխատանքային միգրանտների մեծ մասը որպես ուղղություն ընտրում է Ռուսաստանը, Ռուսաստանին է բաժին ընկնում նաև Հայաստանի ստացած տրանսֆերտների մեծ մասը:

Ամեն տարի ԿԲ-ն հրապարակում է ՀՀ առևտրային բանկերի միջոցով արտերկրից ստացված և արտերկիր ուղարկված ոչ առևտրային դրամական փոխանցումների մասին տեղեկատվություն: Թեև ամբողջ գումարը վերագրելի չէ տրանսֆերտներին, թերևս այն ներկայացնում է տրանսֆերտների դինամիկայի և կառուցվածքի պատկերը: Հայաստան ուղարկվող ոչ առևտրային դրամական փոխանցումների մեծ մասը բաժին է ընկնում Ռուսաստանին, թեև տարիների ընթացքում նրա մասնաբաժինը նվազել է: 2023 թ-ին բանկերի միջոցով Ռուսաստանից Հայաստան ոչ առևտրային դրամական փոխանցումները կազմել են 735 մլն ԱՄՆ դոլար՝ 2013 թ-ի 1,607 մլն ԱՄՆ դոլարի դիմաց, իսկ Ռուսաստանի բաժինը նույն ժամանակահատվածում նվազել է 85.9%-ից մինչև 55.8%: Ի տարբերություն Ռուսաստանի, ԱՄՆ-ի բաժինը աճել է:

Գծապատկեր 48. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անուևով արտերկրից մուտք եղած ոչ առևտրային փոխանցումները, 2013-2023 թթ.



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Ընդհանուր առմամբ, վերջին տասնամյակում Հայաստանի կողմից ստացվող ոչ առևտրային դրամական փոխանցումների ծավալը նվազել է, 2022 թ-ին կտրուկ աճել է այդ տարի ՌԴ քաղաքացիների ներհոսքի և, հետևաբար, Ռուսաստանից նրանց


ուղարկվող դրամական փոխանցումների պատճառով: Պետք է նշել, որ դրամական փոխանցումները դեպի Հայաստան շատ զգայուն են արտաքին ցնցումների նկատմամբ, հատկապես Ռուսաստանում: Եթե 2022 թ-ի ցնցումը դրականորեն է ազդել Հայաստանի տնտեսության վրա տրանսֆերտների մասով, ապա 2015 թ-ին Ռուսաստանի տնտեսության մեջ առկա էական մարտահրավերների պատճառով (նավթի գների անկում, արևմտյան պատժամիջոցներ և այլն) ոչ առևտրային դրամական փոխանցումները դեպի Հայաստան նվազել էին 29.6%-ով:

6. ՀՀ էներգետիկայի ոլորտը . ընդհանուր նկարագիր, կախվածություն և հեռանկարներ

6.1 Երկրի էներգետիկ պատկերը

Առաջնային էներգիայի մատակարարման ընդհանուր ծավալը Հայաստանում 2022 թ-ին կազմել է 4,003.3 հազար տոննա նավթային համարժեք (հազար տ ն . հ.): Քանի որ Հայաստանն ունի սահմանափակ էներգետիկ ռեսուրսներ, ինքնուրույն կարող է բավարարել պահանջարկի միայն մի փոքր մասը (27.0%) և մեծապես կախված է ներմուծվող ռեսուրսներից, ինչպիսին են նավթն ու բնական գազը (Armstat, 2024): Հայաստանում էներգիայի մատակարարման մեծ մասի աղբյուրը բնական գազն է: 2022 թ-ին գազը ապահովել է Հայաստանում էներգիայի մատակարարման ընդհանուր ծավալի 60.6%-ը, որին հետևում է միջուկային էներգիան (18.5%) և նավթը (14.9%) (տե՛ս՝ Գծապատկեր 49):

Գծապատկեր 49. ՀՀ-ում էներգիայի մատակարարումն ըստ աղբյուրների, 2022թ .




Աղբյուր՝ էներգիայի միջազգային գործակալություն

2010-2022 թթ-ին էներգիայի ընդհանուր մատակարարման մեջ բնական գազի մասնաբաժինը աճել է 8.6 տոկոսային կետով՝ 2022 թ-ին հասնելով 60.6%-ի, մինչդեռ միջուկային էներգիայի մասնաբաժինը նվազել է 7.6 տոկոսային կետով՝ հասնելով 18.5%-ի (տե՛ս՝ Գծապատկեր 50):

Հայաստանի էներգետիկ քաղաքականությունը վերջին տարիներին ուղղված է եղել էներգիայի ներքին աղբյուրների՝ հիմնականում վերականգնվողների զարգացմանը, ինչպիսիք են արևը և քամին: 2022 թ-ին արևային, հողմային և այլ վերականգնվող էներգակիրները (բացի ջրայինից) ապահովել են էներգիայի ընդհանուր

մատակարարման 1.5%-ը (62 հազար տ ն . հ .): Չնայած սա զգալի ծավալ չէ, սակայն այն զգալիորեն բարելավվել է 2007 թվականի համեմատ, երբ այս աղբյուրների մասնաբաժինը կազմում էր 0.01% (0.23 հազար տ ն . հ .):


Գծապատկեր 50. Էներգիայի մատակարարման դինամիկան ըստ աղբյուրների, 2010-2022 թթ.



Աղբյուր՝ Էներգիայի միջազգային գործակալություն

Էներգիայի ինտենսիվության մակարդակը, որը ցույց է տալիս, թե որքան էներգիա է ծախսվում մեկ միավոր տնտեսական արդյունք արտադրելու համար, փոքր ինչ բարելավվել է 2010-2021 թթ.-ի ընթացքում: 2021 թ-ին առաջնային էներգիայի մատակարարման և գնողունակության համարժեքով արտահայտված ՀՆԱ-ի հարաբերակցությունը կազմել է 3.9՝ նվազելով 2010 թ-ի 4.2 ցուցանիշից (տե՛ս՝ Գծապատկեր 51): Այնուամենայնիվ, Հայաստանի հետ համադրելի որոշ երկրներ, ինչպես օրինակ՝ Ալբանիան և Մոլդովան, էներգիայի արտադրողականությունը բարելավել են ավելի մեծ տեմպով (համապատասխանաբար 25.5% և 21.3%, մինչդեռ Հայաստանի դեպքում այդ ցուցանիշը 6.9% է): Էստոնիան, որը համարվում է Հայաստանի համար ուղենիշշային երկիր (անզլերեն համարժեք եզրույթը՝ aspirational peer), այդ տարիների ընթացքում նույնպես զգալիորեն բարելավել է էներգիայի ինտենսիվության մակարդակը: Եթե, օրինակ 2007 թ-ին, Էստոնիան էներգիայի ինտենսիվության ավելի բարձր մակարդակ ուներ (6.3), քան Հայաստանը (4.2), 2021 թ-ին վերջինս գերազանցել է Հայաստանին էներգիայի արդյունավետ օգտագործման տեսանկյունից:

Գծապատկեր 51. Էներգիայի ինտենսիվության մակարդակը Հայաստանում և ընտրված երկրներում, 2010-2021 թթ.



Աղբյուրը՝ ՀԲ

Բնական գազի տեղափոխումը և բաշխումը Հայաստանում կատարվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից, որը պատկանում է ռուսական Գազպրոմին: Գազպրոմ Արմենիան հանդիսանում է Հայաստանում բոլոր գազային ենթակառուցվածքների սեփականատերը և ունի գազ ներմուծելու, տեղափոխելու և սպառողներին բաշխելու բացառիկ իրավունք: Ընկերությունն ունի գազամատակարարման 15 մասնաձյուղ, ինչպես նաև 5 դուստր ընկերություն, այդ թվում՝ «Տրանսգազ» ՍՊԸ-ն, որը շահագործում է գազափոխադրման համակարգը և Աբովյանի ստորգետնյա գազամբարը:²² Գազափոխադրման համակարգում ընկերության կողմից սպասարկվող գազատարերի և գազատար-ձյուղավորումների ընդհանուր երկարությունը 1,841.2 կմ է:²³ Հայաստանի գազափոխադրման համակարգը կապված է Վրաստանի և Իրանի գազափոխադրման համակարգերին: Քանի որ Հայաստանը սահման չունի Ռուսաստանի հետ, գազը տեղափոխվում է Վրաստանի «Հյուսիս-Հարավ» մայր գազատարով:

Իրանի գազատարը շահագործման է հանձնվել փուլերով 2007-2009 թթ-ին՝ հատելով Հայաստանի սահմանը Մեդրի քաղաքում տարեկան 2.3 խորանարդ մետր տարողությամբ խողովակով, ինչը նշանակում է, որ Իրանը տեսականորեն կարող է

²² Gazprom Armenia, “About us”, Gazprom Armenia official website, Հասանելի է 2024 թ-ի ապրիլի 29-ի դրությամբ, <https://is.gd/iSgLPx>
²³ Former Ministry of Energy Infrastructures and Natural Resources of the RA, “Power system: Companies of the system” (web page), Official website, Հասանելի է 2024 թ-ի ապրիլի 29-ի դրությամբ, <https://is.gd/ZNbKbc>

բավարարել Հյաստանում գազի ներմուծման կարիքների մեծ մասը, եթե ոչ բոլորը (IEA, 2022): Սկզբնապես, գազատարի տրամագիծը նախատեսվել էր 1,500 մմ, սակայն, ըստ տեղեկությունների, ՀՀ կառավարությունը համաձայնել է այն նվազեցնել մինչև 710 մմ՝ ռուսական կողմի ճնշման ազդեցությամբ, որը վախենում էր կորցնել տարածաշրջանի հիմնական գազամատակարարի իր կարգավիճակը: Արդյունքում՝ գազատարի թողունակությունը նվազեցվեց և փաստացի ներմուծման ծավալը բավարար եղավ միայն ծածկելու Հայաստանի և Իրանի միջև «Գազ էլեկտրաէներգիայի դիմաց» փոխանակման համաձայնագրի կարիքները: 2009 թ-ից սկսած Հայաստանը Իրանից ներմուծում է բնական գազ, տեղական ջերմաէլեկտրակայանում այն վերածում էլեկտրաէներգիայի և վերադարձնում Իրանին:

Բացի այդ, 2016 թ-ին Իրանի պաշտոնական ներկայացուցիչը հայտարարել է, որ Իրանը պատրաստվում է եռապատկել Հայաստան մատակարարվող գազի ծավալները, ինչպես նաև Հայաստանի տարածքով գազ արտահանել դեպի այլ երկրներ (Armenpress, 2016): 2016 թ-ի օգոստոսի 4-ին որոշում կայացվեց հիմնել 100% պետական մասնակցությամբ «ԷՆԵՐԳԱԻՄՊԵՔՍ» ՓԲԸ-ն, որն իրավունք կունենար գնելու գազ և էլեկտրաէներգիա Իրանից և փոխադրելու այն այլ երկրներ (Former RA MEINR, 2016): Ըստ լուրերի՝ այդ նախագիծը չիրագործվեց Ռուսաստանի կողմից միջամտության պատճառով:

Այն հանգամանքը, որ Գազպրոմին են պատկանում պարսկական գազը Հայաստանին մատակարարող գազատարի հայկական հատվածը և առհասարակ բոլոր գազային ենթակառուցվածքները Հայաստանում, կարող է բարդացնել գազամատակարարումը դիվերսիֆիկացնելու Հայաստանի ջանքերը (Kramer, 2006):

Էլեկտրաէներգիան Հայաստանում փոխադրվում և բաշխվում է Հայաստանի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» (ԲԷՑ) և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀԷՑ) ՓԲԸ-ների կողմից: Հայաստանի էլեկտրաէներգիայի բաշխման ենթակառուցվածքների մեծ մասը, ներառյալ էլեկտրահաղորդման գծերը և ենթակայանները, մաշվել են և արդիականացման կարիք ունեն: Տեխնիկական կորուստները փոխանցման և բաշխման ընթացքում համեմատաբար բարձր են: 2022 թ-ին այդ կորուստները կազմել են 605,6 մլն կՎտ/ժ, ինչը 10 %-ով ավել է 2021 թ-ի համեմատ (RA SRIE, 2024):

Հայաստանում էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգը սպասարկում է ԲԷՑ-ը, որը պետական սեփականությամբ ընկերություն է: Վերջինս ունի տասնհինգ ենթակայան՝ 220 կՎ և 110 կՎ լարումներով (2,561 ՄՎտ ընդհանուր հզորությամբ), և 1,914.7 կմ երկարությամբ օդային հաղորդման գծեր:²⁴ Հաղորդման համակարգի

²⁴ High Voltage Electric Networks of Armenia (HVEN), “About us”, HVEN official website, Հասանելի է 2024թ-ի մայիսի 2-ի դրությամբ, <https://is.gd/6YfXgM>

հիմնական խնդիրները մաշվածությունն ու արդիականացման անհրաժեշտությունն են:

Էլեկտրաէներգիայի բաշխումն ու իրացումը Հայաստանում կատարվում է ՀԷՑ-ի կողմից: Ցանցերի ընդհանուր երկարությունը կազմում է 36 հազար կմ, որով ՀԷՑ-ը սպասարկում է ավելի քան 1 մլն սպառողի:²⁵ Ընկերությունը ստեղծվել է էլեկտրաէներգիայի բաշխման պետական տարածաշրջանային չորս ընկերությունների միաձուլման արդյունքում («Երևանի էլեկտրական ցանցեր», «Հյուսիսային էլեկտրական ցանցեր», «Հարավային էլեկտրական ցանցեր» և «Կենտրոնական էլեկտրական ցանցեր»): Այն ամբողջապես մասնավորեցվել է 2002 թ-ին և հետագայում՝ 2006-ին վաճառվել ռուսական «Ինտեր ՌՍՕ» ընկերությանը: 2015 թվականի սեպտեմբերին «Լիորմանդ Հոլդինգ Լիմիթեդ» ընկերությունը գնել է ՀԷՑ-ը: 2017 թ-ի ապրիլի 14-ից սկսած ՀԷՑ-ի բաժնետերերն են «Տաշիր կապիտալը» (70%) և «Լիորմանդ Հոլդինգ Լիմիթեդ»-ը (30%): Այժմ ՀԷՑ-ը իրականացնում է 2016-2027 թթ. ներդրումային ծրագիրը, որը նպատակ ունի արդիականացնել և վերականգնել էլեկտրաէներգիայի բաշխման ցանցը: Ընկերությունը ծրագրի համար պլանավորել է ծախսել 416.2 մլրդ դրամ (ավելի քան 1 մլրդ ԱՄՆ դոլար²⁶), որը ֆինանսավորվում է ԱԶԲ-ի, ՎԶԵԲ-ի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) վարկերով, ինչպես նաև սեփական միջոցներով (ENA, 2022): 2023 թ-ի հունիսի 30-ի դրությամբ փաստացի ներդրումներն արդեն կազմել են 223.5 մլրդ դրամ (559 մլն ԱՄՆ դոլար), այսինքն՝ ընդհանուր բյուջեի 48.9%-ը: Ծրագրի շրջանակներում ՀԷՑ-ը ներդրել է էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգ, որը յուրաքանչյուր կես ժամը մեկ հավաքագրում է տեղեկատվություն տարբեր պարամետրերի վերաբերյալ, այդ թվում՝ փոքր ՀԷԿ-երից և 5 ՄՎտ-ից հզոր արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայաններից, որոնք միացված են ցանցին: Այնուամենայնիվ, ավտոմատացման ավելացումը կառավարության համար նաև մտահոգություններ է առաջացնում կիրառանվտանգության հետ կապված (IEA, 2022):

Հարկ է նշել, որ 2022 թ-ին ընկերությունը ստիպված էր ֆինանսավորման համար ավելի շատ օգտվել տեղական բանկերի տրամադրած վարկերից (իհարկե առավելապես կարճաժամկետ), քանի որ տարածաշրջանում աճող աշխարհաքաղաքական ռիսկերի պատճառով միջազգային բանկերը կասեցնում էին ՀԷՑ-ի հետ ցանկացած նոր գործարք: Այս քայլը որպես ժամանակավոր լուծում դրական է ընդունվել ՀԷՑ-ի հիմնական վարկատուների, այդ թվում՝ ՄՖԿ-ի, ԱԶԲ-ի և ՎԶԵԲ-ի կողմից, և ընկերությունը պլանավորում է առկա բոլոր տեղական վարկերը վերաֆինանսավորել միջազգային երկարաժամկետ նոր վարկերով: Այնուամենայնիվ, ըստ Moody's-ի՝

²⁵ Electric Networks of Armenia (ENA), “About us”, ENA official website, Հասանելի է 2024 թ-ի մայիսի 2-ի դրությամբ, <https://is.gd/6VTUGL>

²⁶ ՀՀ դրամի արժեքը հաշվարկվել է դրամ/դոլար 400 փոխարժեքով, ինչպես ՀԷՑ 2022-2031 ծրագրային ազդագրի բոլոր կանխատեսումներում:

միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ հարաբերությունները վերականգնելու ՀԷՑ-ի կարողությունը շարունակում է անորոշ մնալ (Moody's, 2023): Բացի այդ, 2023 թ-ին ՀԷՑ-ը տեղական ֆոնդային բորսայում ցուցակել է պարտատոմսեր՝ 32 մլրդ դրամ ընդհանուր ծավալով (ավելի քան 80 մլն ԱՄՆ դոլար):

Ավելին, թեպետ «Տաշիր Գրուպը»՝ ՀԷՑ-ի սեփականատերն ու ռուսական խոշոր կոնցլոմերատը, որն ի վերջո վերահսկվում է Սամվել Կարապետյանի կողմից, ուղղակի ազդեցություն չի կրել արևմտյան պատժամիջոցներից, սակայն ռուս-ուկրաինական պատերազմի ընդլայնումն ու Ռուսաստանի նկատմամբ հսկայական տնտեսական պատժամիջոցները շարունակում են պոտենցիալ ռիսկեր ներկայացնել ընկերության համար:

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն պատասխանատու է ՀՀ էներգետիկական համակարգի ռազմավարական գործունեության համար: Ընկերությունն ունի էներգահամակարգի տեխնոլոգիական գործընթացների գործառնական և տնտեսական հսկողության, ապա արտադրության, ներմուծման, արտահանման և տարանցման պլանավորման, համակարգման, ինչպես նաև ՀՀ էներգահամակարգի՝ տարածաշրջանային էներգահամակարգերի հետ փոխկապակցված շահագործման և այլ գործառույթների բացառիկ իրավունք:

Էներգիայի տեղական արտադրության հիմնական աղբյուրներն են միջուկային էներգիան և հիդրոէներգիան: Միջուկային էներգիան կարևոր դեր ունի ՀՀ էներգետիկ անկախության ապահովման համար: 2022 թ-ին միջուկային էներգիայի մասնաբաժինը էներգիայի տեղական արտադրության մեջ կազմել է 68.6% (RA SRIE, 2024): Հայաստանում կա մի ատոմակայան (Հայաստանի ատոմային էլեկտրակայան (ՀԱԷԿ)), որն ընդ որում միակն է Կովկասում: ՀԱԷԿ-ը տեղակայված է մայրաքաղաք Երևանից 28 կմ դեպի արևմուտք և թուրքական սահմանից 16 կմ հեռավորության վրա, կազմված է երկու էներգաբլոկներից՝ ընդհանուր 407.5 ՄՎտ դրվածքային դոզորությամբ:²⁷ Այժմ էներգաբլոկներից մեկը գտնվում է երկարատև կանգի ռեժիմում: 2021 թ-ին երկրորդ էներգաբլոկի ծառայության ժամկետը երկարացվել է մինչև 2026 թ.՝ հետագայում այն ևս 10 տարով երկարաձգելու պլանով: Գնահատումների համաձայն՝ էներգաբլոկի աշխատանքը 2026-2036 թթ. երկարաձգելու ծրագիրը կարժենա 160 մլն ԱՄՆ դոլար:²⁸ Բացի այդ, ՀՀ կառավարությունը նախատեսում է կառուցել նոր

²⁷ ANPP, “History”, ANPP CJSC official website, հասանելի է 2024թ-ի ապրիլի 29-ի դրությամբ, <https://is.gd/j7Aymx>

²⁸ The decision N ԱԺՈ-005-N of the National Assembly of the RA of June 13, 2024, on the approving the execution of the state budget for 2024 [in Armenian], Հասանելի է 2024 թ-ի մայիսի 1-ի դրությամբ, <https://bit.ly/4felSCz>

Էներգաբլոկ 2036 թ-ից հետո №2 Էներգաբլոկը փոխարինելու համար:²⁹ Հարկ է նաև նշել, որ ՀԱԷԿ-ը միջուկային վառելիք ստանում է Ռուսաստանից:

Հիդրոէներգիան վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից ամենազարգացածն է Հայաստանում: Երկրում կան երկու խոշոր հիդրոէլեկտրակայաններ (ՀԷԿ-եր), որոնք պատկանում են «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Քոնթուր գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ներին, ինչպես նաև մի քանի փոքր ՀԷԿ-եր: «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ին պատկանող ՀԷԿ-երի ընդհանուր դրվածքային հզորությունը՝ 561.4 ՄՎտ է, իսկ «Քոնթուր գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ին պատկանող ՀԷԿ-երինը՝ 404.2 ՄՎտ: Բացի խոշորներից, 2022 թ-ի դրությամբ Հայաստանում գործում է 189 փոքր ՀԷԿ՝ ընդհանուր 409 ՄՎտ դրվածքային հզորությամբ (RA SRIE, 2024):

Բացի ատոմակայանից ու հիդրոէլեկտրակայաններից, Հայաստանը էլեկտրաէներգիա է գեներացնում նաև չորս խոշոր ջերմաէլեկտրակայանների միջոցով («Արմփատեր» ՓԲԸ, Երևան ՋԷԿ, Հրազդան ՋԷԿ և Հրազդան-5), թեպետ պետք է նշել, որ ՋԷԿ-երը կախված են ներմուծվող գազից: 2023 թ-ին «Արմփատեր» ՓԲԸ-ն ապահովել է էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրության 22.8%-ը (ներքին սպառման համար): Նրան հետևում են Երևան ՋԷԿ-ը (7%) և Հրազդան ՋԷԿ-ը (0.04%), իսկ Հրազդան 5-ը, որը պատկանում է ռուսական Գազպրոմին, 2023 թ-ին չի աշխատել (PSRC, 2024):

Հայաստանը քայլեր է ձեռնարկում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը դիվերսիֆիկացնելու ուղղությամբ՝ կենտրոնանալով արևային ՖՎ կայանների հզորության էական ընդլայնման վրա: ՀՀ կառավարությունը նպատակադրել է մինչև 2030 թ-ն ավելացնել արևային էներգիայի արտադրության տեսակարար կշիռը առնվազն 15%-ով կամ 1.8 մլրդ կՎտժ-ով: Այդ նպատակով նախատեսվում է կառուցել 1000 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայաններ՝ ներառյալ ինքնավար կայանները:³⁰ Արևային էներգիայի դրվածքային հզորության ընդլայնումը զգալի օգուտներ կբերի Հայաստանին, բայց նաև առաջ կբերի մարտահրավերներ՝ մասնավորապես ծախսերը հոգալու, ինչպես նաև պահանջարկն ու առաջարկը հավասարակշռելու հետ կապված: Անհրաժեշտ կլինի ներդնել պահեստավորման լուծումներ էներգիայի արտադրության փոփոխականությունը կառավարելու համար: Բացի այդ, ցանցային ենթակառուցվածքը պետք է ունակ լինի դիմանալու էներգիայի արտադրության կտրուկ փոփոխություններին, ինչը կպանաջի ներդրումներ կատարել «խելացի» ցանցային տեխնոլոգիաներում էներգիայի արդյունավետ մատակարարման և կայունության պահպանման համար: Այս ամենը կարող է հանգեցնել ծախսերի աճի ու երկրում ցանցային կառավարման բարդության,

²⁹ The Decision of the RA Government N- 48-L of January 14, 2021, Հասանելի է 2024թ-ի ապրիլի 29-ի դրությամբ <https://is.gd/aOZnL5>

³⁰ The Decision of the RA Government N- 48-L of January 14, 2021, Հասանելի է 2024թ-ի ապրիլի 29-ի դրությամբ, <https://is.gd/aOZnL5>


ինչի համար անհրաժեշտ կլինի զգուշորեն պլանավորել և կատարել ներդրումներ՝ ապահովելու էներգիայի հուսալի մատակարարում:

2022 թ-ին լիցենզավորված արևային ՖՎ կայանների ընդհանուր դրվածքային հզորությունը հասել է 204.8 ՄՎտ-ի (RA SRIE, 2024): Բացի այդ, այս պահին կառուցվում են երկու խոշոր արևային կայաններ (Մասրիկ-1 և Այգ-1): Այդ երկուսը միասին ունենալու են 255 ՄՎտ հզորություն: Ավելին, բաշխման ցանցին են միացել 19,397 ինքնավար արտադրողներ՝ ընդհանուր 290.7 ՄՎտ դրվածքային հզորությամբ, իսկ ևս 224-ը 9.9 ՄՎտ հզորությամբ գտնվում են միացման գործընթացում (AEA, 2024):

6.2 Էներգիայի սպառումը

Հայաստանում էներգիայի պահանջարկը 2022թ-ին կազմել է 2,938.4 հազար տ ն.հ.՝ 63.9%-ով ավելի, քան 2010 թ-ին: Բնական գազը և նավթն ապահովում են պահանջարկի մեծ մասը՝ էներգիայի ընդհանուր վերջնական սպառման 75.1%-ը: Հողմային և արևային էներգիայի օգտագործումն ունի 1%-ից էլ պակաս կշիռ (0.6% 2022 թ-ին): Ավելի քան տասը տարվա ընթացքում էներգիայի սպառման կառուցվածքը Հայաստանում գրեթե չի փոխվել, թեպետ բիովառելիքի և թափոնների սպառումը ավելացել է 2010 թ-ի 8 հազար տ ն. հ. -ից՝ 2022 թ-ին հասնելով 121 հազար տ ն. հ. -ի, իսկ մասնաբաժինը 0.5%-ից մինչև 4.2%-ի: Այս աճը ունի տարբեր պատճառներ, օրինակ, գազի սակագների բարձրանալով պայմանավորված գյուղական բնակավայրերում սպառողները հավանաբար ավելի մատչելի են համարել անցնել էներգիայի այս աղբյուրին: Վերջին տարիներին արևային և հողմային էներգիայի սպառումը ևս մի փոքր աճ է արձանագրել: Հայաստանում էներգիայի սպառումը պակաս դիվերսիֆիկացված է, քան համադրելի երկրներում (տե՛ս՝ Գծապատկեր 52): Օրինակ՝ 2022 թ-ին հարևան Վրաստանում, որտեղ նույնպես էներգիայի հիմնական աղբյուրները բնական գազը, նավթը և էլեկտրականությունն են, գազի մասնաբաժինը ընդհանուր սպառման կառուցվածքում կազմել է 41.8%, մինչդեռ Հայաստանում էներգիայի առաջատար աղբյուրը ունեցել է 54.9% մասնաբաժին: Այս տարբերությունը վկայում է էներգիայի մի աղբյուրից Հայաստանի լուրջ կախվածության մասին: Նմանատիպ պատկեր է նաև Բոսնիա և Հերցեգովինայի, Մոլդովայի և Էստոնիայի պարագայում:


Գծապատկեր 52. ՀՀ էներգիայի վերջնական սպառումը ըստ աղբյուրների Հայաստանում և ընտրված երկրներում, 2022թ.



Աղբյուր՝ Էներգիայի միջազգային գործակալություն

2022 թ-ին էներգիայի ամենաշատ սպառում ունեցող ոլորտները եղել են բնակելի շենքերը և տրանսպորտը՝ միասին ապահովելով Հայաստանում էներգիայի վերջնական սպառման 64.1%-ը (տե՛ս՝ Գծապատկեր 53): Ավելին, այդ ոլորտներում էներգիայի սպառումը 2010-ից 2022 թվականներին գրեթե կրկնապատկվել է. տրանսպորտն ու բնակելի շենքերը դարձել են ընդհանուր էներգիայի սպառման աճի հիմնական շարժիչ ուժերը: Այս երևույթը կարելի է բացատրել բնակարանաշինության և ավտոմեքենաների քանակի աճով: Հայաստանում տնային տնտեսությունները հիմնականում սպառում են բնական գազ և էլեկտրականություն, իսկ տրանսպորտի ոլորտը՝ բնական գազ և նավթամթերք:


Գծապատկեր 53. Էներգիայի ընդհանուր վերջնական սպառումը ըստ հաճախորդների Հայաստանում և ընտրված երկրներում, 2022թ.



Աղբյուրը՝ Էներգիայի միջազգային գործակալություն

2010 թ-ից ի վեր Հայաստանի գուտ ներմուծման կախվածությունն աճել է (տե՛ս՝ Գծապատկեր 54)։ 2022 թ-ին Էներգիայի գուտ ներմուծումը կազմել է 3,078 հազար տ ն . հ . , որը 81.2%-ով ավելի է 2010 թ-ի համեմատ։ Նույն ժամանակահատվածում ներքին Էներգիայի արտադրությունը տատանվել է և 2022 թ-ին կազմել 925 հազար տ ն . հ .՝ 24.9%-ով ավելի 2010 թ-ի համեմատ։ Ներմուծման կախվածության աճը հիմնականում պայմանավորված է եղել բնական գազի ներմուծման աճով։


Գծապատկեր 54. ՀՀ էներգիայի մատակարարումը, ներքին արտադրությունը և զուտ ներմուծումը, 2010-2022 թթ.



Աղբյուրը՝ Էներգիայի միջազգային գործակալություն

Հայաստանը էլեկտրաէներգիայի զուտ արտահանող է, սակայն դրա մեծ մասը փոխանակվում է Իրանի հետ գազի դիմաց: 2022 թ-ին Հայաստանը արտադրել է 9,187 ԳՎտ/ժ էներգիա, որի 42.2%-ը (3,878 ԳՎտ/ժ) արտադրվել է բնական գազի, 26.8%-ը՝ հիդրոէներգիայի և վերականգնվող այլ աղբյուրների (2,463 հազար տ ն . հ .), և ընդամենը 31%-ը (2,846 ԳՎտ/ժ)՝ միջուկային էներգիայի հաշվին (տե՛ս՝ Գծապատկեր 55): 2010 թ-ից սկսած բնական գազի կշիռը զգալիորեն աճել է, իսկ հիդրո և միջուկային էներգիայի աղբյուրների մասնաբաժինները նվազել են: Վերջին տասնամյակում Հայաստանը սկսել է էլեկտրաէներգիա արտադրել արևային էներգիայից: 2022 թ-ին արևային էներգիայից էլեկտրաէներգիայի արտադրությունը հասել է 523 ԳՎտ/ժ-ի՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.8 անգամ: Հատկանշական է, որ էներգիայի այս աղբյուրը մեկ տասնամյակ առաջ ընդհանրապես չէր օգտագործվում:

Գծապատկեր 55. ՀՀ էլեկտրաէներգիայի ներքին արտադրությունն ըստ աղբյուրների, 2010-2022 թթ.




Աղբյուր՝ Էներգիայի միջազգային գործակալություն

Հայաստանում սպառվող հանածո վառելիքի բոլոր տեսակները ներմուծվում են, ընդ որում՝ Հայաստանի էներգակիրների ներմուծման 76.3%-ը (2022 թ-ին 2,450.6 հազար տ. ն. հ.՝ ընդամենը 3,213.8 հազար տ. ն. հ.-ից) կազմում է բնական գազը, որին հաջորդում են նավթամթերքները (22.6% կամ 727.0 հազար տ. ն. հ. 2022 թ-ին) (տե՛ս Գծապատկեր 56):

2022 թ-ին Հայաստանում էներգիայի զուտ ներմուծումը կազմել է 3,078.0 հազար տ. ն. հ.՝ 1.8 անգամ ավելի, քան 2010 թ-ին: Աճի մեծ մասը պայմանավորված էր բնական գազի ներմուծման աճով: Ընդհանուր առմամբ, 2010-2022 թթ-ին բնական գազի ներմուծումը գրեթե կրկնապատկվել է:


Գծապատկեր 56. ՀՀ էներգիայի զուտ ներմուծումը ըստ աղբյուրների, 2010-2022թթ.



Աղբյուր՝ Էներգիայի միջազգային գործակալություն

Էներգիայի իր կարիքների համար Հայաստանը զգալի կախվածություն ունի օտարերկրյա աղբյուրներից, ընդ որում՝ վերջին տարիներին այդ կախվածությունն աճել է: 2022 թ-ին էներգիայի զուտ ներմուծումը կազմել է Հայաստանում էներգակիրների ընդհանուր մատակարարման 76.9%-ը (3,077.9 հազար տ ն.հ. 4,003.3 հազար տ ն.հ.-ից), ինչը 7.2 տոկոսային կետով աճել է 2010 թ-ի համեմատ (տե՛ս՝ Գծապատկեր 57):


Գծապատկեր 57. ՀՀ էներգիայի զուտ ներմուծման մասնաբաժինը էներգիայի ընդհանուր մատակարարման մեջ, 2010-2022թթ.



Աղբյուր՝ էներգիայի միջազգային գործակալություն

Ռուսաստանը Հայաստանի էներգակիրների ամենախոշոր մատակարարն է (տե՛ս՝ Գծապատկեր 58): 2022 թ-ին Հայաստանի էներգակիրների ներմուծման ավելի քան 76%-ը իրականացվել է Ռուսաստանից, իսկ 13.8%-ը՝ Իրանից: 2010-2022 թթ-ին Ռուսաստանի մասնաբաժինը Հայաստանի էներգակիրների ներմուծման մեջ աճել է 46 .9%-ից հասնելով 76.6%-ի՝ Հայաստանն ավելի խոցելի դարձնելով քաղաքական հարցերով, բնական աղետներով կամ այլ չնախատեսված իրադարձություններով պայմանավորված մատակարարման խափանումների առաջ: Մինչ Ռուսաստանի մասնաբաժինը Հայաստանի էներգակիրների ներմուծման մեջ աճել է, մյուս գործընկերների, օրինակ՝ Բուլղարիայի և Ռումինիայի մասնաբաժինը նվազել է: 2022 թ-ին Բուլղարիայի և Ռումինիայի տեսակարար կշիռը Հայաստանի էներգակիրների ներմուծման մեջ գրեթե զրոյական է եղել՝ 2010 թ-ի համապատասխանաբար 13.6%-ի և 11.2%-ի համեմատ: ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից հետո Ռուսաստանը նվազեցրել է էներգակիրների գները Հայաստանի համար, իսկ 2015 թ-ին չեղարկվեցին մաքսատուրքերը, որին հաջորդեցին այլ արտոնություններ: Այս բարենպաստ պայմանները նպաստեցին Հայաստանի էներգետիկ կառուցվածքում ռուսական էներգակիրների ներմուծման մասնաբաժնի ավելացմանը:

Գծապատկեր 58. ՀՀ էներգիայի ներմուծումը ըստ գործընկեր երկրների, 2010-2022 թթ




Աղբյուրը՝ ՀՖ WITS վիճակագրական շտեմարան

6.3 Վերականգնվող էներգիա. զարգացումը և ներուժը

Հայաստանն ունի ածխածնային ինտենսիվության չափավոր մակարդակ, որը վերջին տասնամյակում հարաբերականորեն կայուն է մնացել: 2010-2022 թթ-ին մեկ միավոր ՀՆԱ-ի արտադրության համար արտանետվել է միջինում 0.17 կգ ածխաթթու գազ (CO₂), 2022 թ-ին այս ցուցանիշը, մասնավորապես, կազմել է 0.18 կգ (տե՛ս Գծապատկեր 59): Հայաստանում ածխածնային ինտենսիվության մակարդակը ավելի բարենպաստ է, քան համադրելի շատ երկրներում, օրինակ՝ Բոսնիա և Հերցեգովինայում (2022 թ-ին՝ 0.4), Մոլդովայում (0.25), Էստոնիայում (0.21), և մոտավորապես նույնական է Վրաստանի (0.17) հետ: Այնուամենայնիվ, Վրաստանում CO₂-ի արտանետումները ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով ավելացել են 2010 թ-ից (0.14) հետո, մինչդեռ Էստոնիան գրանցել է զգալի առաջընթաց և շարունակում է բարելավել իր դիրքերը՝ նվազեցնելով ցուցանիշի մակարդակը 0.56-ից մինչև 0.21 2010-2022 թթ-ի ընթացքում:


Գծապատկեր 59. CO₂ արտանետումները ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով Հայաստանում և ընտրված երկրներում, 2010-2022 թթ.



Աղբյուր՝ Էներգիայի միջազգային գործակալություն

2022 թ-ին Հայաստանը արտադրել է 9,187 ԳՎտ/ժ էլեկտրականություն, որի 42.2%-ի աղբյուրը հանածո վառելիքն է, մասնավորապես՝ բնական գազը, 31.0%-ինը՝ ցածր ածխածնային համարվող միջուկային էներգիան, և 26.8%-ինը՝ վերականգնվող աղբյուրները, որոնց գրեթե ամբողջ մասը ապահովել է հիդրոէներգիան: 2007-2022 թթ-ին բնական գազի մասնաբաժինը աճել է 1.7 անգամ, մինչդեռ միջուկային էներգիայի և վերականգնվող էներգիայի մասնաբաժինները էներգիայի արտադրության մեջ նվազել են համապատասխանաբար 12.3 և 4.7 տոկոսային կետով (տե՛ս՝ Գծապատկեր 60):


Գծապատկեր 60. Վերականգնվող, ցածր ածխածնային աղբյուրների և հանածո վառելիքի մասնաբաժինները ՀՀ էլեկտրականության արտադրության մեջ, 2007-2022 թթ .



Աղբյուրը՝ Էներգիայի միջազգային գործակալություն
Նշում՝ Այստեղ Հանածո վառելիքի մեջ մտնում է բնական գազը, Վերականգնվող աղբյուրներն են հիդրո, արևային և հողմային էներգիաները, իսկ Ցածր ածխածնային աղբյուրները ներառում են միայն միջուկային էներգիան:

2021 թ-ին վերականգնվող էներգիայի մասնաբաժինը Հայաստանի ընդհանուր վերջնական սպառման կառուցվածքում կազմել է 9.1%, որը զգալիորեն ցածր է որոշ համադրելի երկրներից, ինչպիսիք են Վրաստանը (25.2%), Մոլդովան (21.4%), Բոսնիա և Հերցեգովինան (36.6%), Ալբանիան (41.9%), ինչպես նաև Էստոնիան (38.0%): 2010-2020 թթ-ին Հայաստանում էներգիայի սպառման մեջ վերականգնվող էներգիայի տեսակարար կշիռը իր առավելագույն մակարդակին է հասել 2016 թ-ին՝ կազմելով 13.2%, սակայն հաջորդ տարիներին նվազել է՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ մոտավորապես հասնելով 2010 թ-ի մակարդակին (տե՛ս՝ Գծապատկեր 61):

Գծապատկեր 61. Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը (առանց կենսազանգվածի) էներգիայի ընդհանուր վերջնական սպառման մեջ, 2010-2021 թթ.



Աղբյուր՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով

Հիդրոէներգիան վերականգնվող էներգիայի ամենազարգացած աղբյուրն է Հայաստանում: 2022 թ-ի դրությամբ երկրում կա երկու խոշոր և 189 փոքր ՀԷԿ՝ ընդհանուր 1,374.6 ՄՎտ դրվածքային հզորությամբ (SRIE, 2024): Հայաստանն ունի արևային էներգիայի զարգացման զգալի ներուժ: Հորիզոնական մակերեսի մեկ քառակուսի մետրի վրա արևային էներգիայի միջին տարեկան արտադրությունը կազմում է 1,720 կՎտ/մ², ընդ որում՝ երկրի մոտ մեկ քառորդը տարեկան ստանում է մինչև 1,850 կՎտ/մ²:³¹ Սակայն արևային ՖՎ հզորությունը ներկայումս ցածր է: 2022 թ-ին արևային ՖՎ լիցենզավորված կայանների ընդհանուր դրվածքային հզորությունը 204.8 ՄՎտ է: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Հայաստանի 2021 թ-ի էներգետիկ ռազմավարությունը նախատեսում է մինչև 2030 թ-ը ունենալ մինչև 1,000 ՄՎտ արևային ՖՎ հզորություն: Հայաստանն ունի նաև հողմային էներգիայի զգալի ներուժ: Ընդհանուր հզորությունը 450 ՄՎտ է՝ էլեկտրականության 1.26 մլրդ կՎտ/ժ տարեկան արտադրանքով:³² 2022 թ-ին գործող հողմակայանների ընդհանուր դրվածքային հզորությունը կազմել է 4.2 ՄՎտ (SRIE, 2024): 2021 թ-ի տվյալներով Հայաստանում առկա հզորությունների շահագործման ցուցանիշները կազմել են 19% արևային էներգիայի համար, 19% հիդրոէներգիայի և 6% հողմային էներգիայի համար (IRENA, 2023):

6.4 Էներգետիկ քաղաքականություն և հեռանկարներ

2021 թ-ին ՀՀ կառավարությունը ընդունել է «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչև 2040 թվականը)» (Էներգետիկայի ռազմավարություն) և «Հայաստանի Հանրապետության

³¹ AEA (Armenian Energy Agency), “Solar Energy of Armenia”, AEA official website, Հասանելի է 2024 թ-ի ապրիլի 29-ի դրությամբ, <https://is.gd/IGVKiW>

³² AEA, “Wind energy of Armenia”, AEA official website, Հասանելի է 2024 թ-ի ապրիլի 29-ի դրությամբ, <https://is.gd/07Qb3C>

Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցը», որոնք հանդիսանում են Հայաստանում ոլորտի հիմնական փաստաթղթերը:³³ Դրանք փոխարինել են Էներգետիկայի բնագավառի զարգացման նախորդ ռազմավարություններին, այդ թվում՝ 2013 թ-ի Էներգետիկայի ազգային անվտանգության հայեցակարգին և դրա իրականացման 2014-2020թթ. գործողությունների ծրագրին:

Հայաստանի Էներգետիկ ռազմավարությունը սահմանում է մինչև 2040 թ-ն ՀՀ Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական ուղղությունները՝ հատկապես կարևորելով վերականգնվող էներգետիկ պաշարների արդյունավետ օգտագործումը, էներգախնայողության բարձրացումը և էլեկտրաէներգիայի ներքին շուկայի աստիճանական ազատականացումը: Ռազմավարությունը անդրադառնում է նաև նոր ատոմակայանի կառուցման և Հայաստանի ու նրա հարևանների, մասնավորապես՝ Վրաստանի և Իրանի միջև էլեկտրահաղորդման կապերի ընդլայնման հարցերին, և սահմանում է կոնկրետ նպատակներ, որոնց պետք է հասնել մինչև 2040 թ: Օրինակ՝ կառավարությունը նպատակ ունի մինչև 2030 թ-ն արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ հասցնել առնվազն 15%-ի, ունենալ 12 մլրդ կՎտ/ժ արտադրանք, որից շուրջ 5.0 մլրդ կՎտ/ժ արտահանում և այլն:

Հարկ է նշել, որ վերականգնվող աղբյուրները զարգացնելու ուղղությամբ Հայաստանը սկսել է քայլեր ձեռնարկել դեռևս 2000-ականներին: 2004 թ-ին ՀՀ կառավարությունը ընդունել է օրենք Հայաստանում էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին, որով սահմանվում էին էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացման պետական քաղաքականության սկզբունքները և դրանց իրագործման մեխանիզմները:³⁴ Դրան հաջորդել են 2005 թ-ին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (R2E2 հիմնադրամ) հիմնումը, որի նպատակն է նպաստել երկրում վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտի զարգացմանը, ինչպես նաև Հայաստանի վերականգնվող էներգետիկայի ճանապարհային քարտեզի (2011), Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի Հայաստանի Ներդրումային պլանի (2014) և այլ փաստաթղթերի մշակումը, որոնք ներկայացնում են երկրի վերականգնվող էներգետիկայի ներուժը, սահմանում են ոլորտի զարգացման նպատակները և խնդիրները:

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) պատասխանատու է էլեկտրաէներգիայի սակագների սահմանման համար: Հայաստանում էլեկտրաէներգիայի սակագները տարբերակվում են ըստ ցանցի

³³ The Decision of the RA Government N- 48-L of January 14, 2021, Հասանելի է 2024թ-ի ապրիլի 29-ի դրությամբ, <https://is.gd/aOZnL5>

³⁴ RA Law on Energy Efficiency and Renewable Energy of November 9, 2004, Հասանելի է 2024թ-ի ապրիլի 29-ի դրությամբ, <https://is.gd/hokQwa>

լարման մակարդակների: Ներկայումս լարման յուրաքանչյուր մակարդակի համար կա երկու հիմնական սակագին՝ ցերեկային և գիշերային, որոնք արտացոլում են սպառման պիկային և ոչ պիկային ժամերը՝ խրախուսելով սպառողներին էլեկտրաէներգիայի սպառումը տեղափոխել ոչ պիկային ժամերի: Գործում է նաև հատուկ սակագին անապահով ընտանիքների համար: Վերականգնվող էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ ավելացնելու նպատակով նաև կիրառվում են արտոնյալ սակագներ, զուտ հաշվառման մեխանիզմ (անգլերեն համարժեք եզրույթը՝ net metering) և հարկային արտոնություններ՝ վերականգնվող աղբյուրներում ներդրումները խրախուսելու նպատակով: Սակագները որպես կանոն վերանայվում և ճշգրտվում են ամեն տարի՝ էներգիայի ծախսերի, գնաձի և այլ տնտեսական գործոնների փոփոխությունները հաշվի առնելու համար:

Հարկ է նշել, որ Հայաստանում վերջնական սպառողներին մատակարարվող էլեկտրաէներգիայի միջին սակագները բարձր են համաշխարհային միջինից, բարձր են նաև Ռուսաստանի միջինից, սակայն մոտ են հարևան Վրաստանի սակագներին (IEA, 2022):

Երկրում բնական գազի գները որոշվում են ոչ թե շուկայական մեխանիզմներով, այլ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև 2013 թ-ին ստորագրված համաձայնագրով: 2019 թ-ի հունվարի 1-ից սկսած ռուսական գազի գինը Հայաստանի և Վրաստանի սահմանին չի փոխվել և կազմում է 165 ԱՄՆ դոլար 1,000 խմ-ի դիմաց. նախկինում այն 150 ԱՄՆ դոլար էր: Ըստ հայաստանյան կողմի՝ սահմանին գազի սակագինը չի փոխվի առնվազն մինչև 2031 թ-ը (IAE, 2022): Տարիներ շարունակ արտոնյալ սակագներ են գործում սպառողների տարբեր խմբերի՝ ցածր եկամուտ ունեցող բաժանորդների, գյուղատնտեսության ոլորտում գործող ջերմոցային տնտեսությունների, գյուղատնտեսության ոլորտում վերամշակող արտադրությամբ զբաղվողների համար: 2022 թ-ին «Գազպրոմ Արմենիան» առաջարկել է միասնական սակագին սահմանել բոլոր սպառողների համար, սակայն, ի վերջո, ՀՕԿՀ-ն որոշեց անփոփոխ թողնել սակագները անապահով ընտանիքների համար և բարձրացնել մնացած խմբերի համար (Radio Azatutyun, 2022):

Միննույն ժամանակ հարկ է նշել, որ ԵԱՏՄ անդամ երկրները նախատեսում են ստեղծել գազի ընդհանուր շուկա: Արդեն ընդունվել են ընդհանուր շուկայի ձևավորման հայեցակարգը և դրա իրականացման ծրագիրը: Ի սկզբանե նախատեսվում էր ընդհանուր շուկան գործարկել 2025 թ-ին, սակայն գազի գնի շուրջ կոնսենսուսի բացակայության պատճառով որոշում է կայացվել շուկայի գործարկումը հետաձգել (Armenpress, 2024):

Հայաստանի էներգետիկ ռազմավարության հիմնական բաղադրիչներից է տարածաշրջանային էներգետիկ համագործակցության զարգացումը: Հայաստանը իր երկու հարևան երկրների հետ ունի քաղաքական հակասություններ, մյուս

հարևանների՝ Վրաստանի և Իրանի էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ կապը ենթարկվում է տարբեր տեխնիկական բնույթի սահմանափակումների: Կառավարությունը պլանավորում է էլեկտրահաղորդման գծերի և ենթակայանների կառուցում, որոնք հնարավորություն կտան Իրանի և Հայաստանի էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 350 ՄՎտ-ից հասցնել 1,200 ՄՎտ-ի, իսկ Վրաստանի հետ զուգահեռ աշխատանքի թողունակությունը ներկայիս 200 ՄՎտ-ից՝ 350 ՄՎտ-ի: Նախադրյալներ կստեղծվեն Հայաստանի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի կանոնավոր առևտրի իրականացման համար՝ հնարավորինս հենվելով ԵՄ դիրեկտիվների պահանջների վրա: Կառավարությունը նախատեսում է նաև լրացուցիչ միջոցառումներ իրականացնել՝ ուղղված Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության ընդլայնմանը (USAID, 2021):

Վերջին տարիներին Հայաստանի՝ էներգետիկ անկախությունը բարձրացնելու, վերականգնվող և կանաչ էներգիայի աղբյուրները զարգացնելու նկատմամբ ուշադրությունը նաև հետաքրքրություն է առաջ բերել ջրածնային էներգետիկայի ոլորտի նկատմամբ: Մասնավորապես, ներկայումս Հայաստանի կառավարությունը համագործակցում է Գերմանիայի հետ Հայաստանում կանաչ ջրածնի արտադրության ծախսերը, ներքին սպառման ներուժը, ինչպես նաև արտահանման հնարավորությունները գնահատելու համար (GET, 2023):

7. Խոցելիության աղբյուրները և ռիսկի գործոնները

Մակրոտնտեսական իրավիճակ

2022 և 2023 թվականներին ՀՀ տնտեսությունը զգալի աճ է գրանցել (12.6% և 8.3%) մի կողմից ռուսաստանցիների ներհոսքի արդյունքում ապրանքների ու ծառայությունների սպառման կտրուկ ընդլայմամբ, իսկ մյուս կողմից՝ դեպի ՌԴ վերաարտահանման արդյունքում արտահանման երկնիշ աճով պայմանավորված: Այս արտաքին շուկի արդյունքում 2022 թ-ին Հայաստանի ընթացիկ և ֆինանսական հաշիվների հետևողականորեն բացասական հաշվեկշիռները փոխվեցին հավելուրդի, իսկ հարկային եկամուտները 2022 և 2023 թվականներին ավելացան ավելի բարձր տեմպերով՝ հիմնականում արտացոլելով ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտահարկի աճը, ինչը նույնպես մասամբ պայմանավորված էր դեպի Ռուսաստան վերաարտահանման աճով և Ռուսաստանից միգրացիոն ներհոսքով:

Ռուս-ուկրաինական պատերազմին հաջորդած այս զարգացումները զգալիորեն խթանեցին տնտեսական աճը Հայաստանում և, ընդհանուր առմամբ, դրական ազդեցություն ունեցան տնտեսության վրա: Մակայն դրանք նաև բացահայտեցին, որ տնտեսությունը շատ խոցելի է արտաքին ցնցումների նկատմամբ: Քանի որ այս խթանները սկսել են թուլանալ 2023 թ-ին, տնտեսական աճն արդեն սկսել է դանդաղել, և վճարային հաշվեկշռի ընթացիկ և ֆինանսական հաշիվները վերադարձել են պակասուրդի:

Առաջիկա տարիներին ակնկալվում է, որ աճը կչափավորվի և կվերադառնա նախկին մոտ 5-6% ներուժին: Նվազող խթանների հնարավոր ազդեցության ամենավառ օրինակներից է Հայաստանից Ռուսաստան տրանսպորտային միջոցների վերաարտահանման դադարեցումը: 2023 թ-ին տնտեսական աճի և պետական բյուջեի եկամուտների հիմնական շարժիչներից մեկը Վրաստանի տարածքով Հայաստանից Ռուսաստան ավտոմեքենաների վերաարտահանումն էր: Ըստ որոշ գնահատականների՝ ավտոմեքենաների արտահանման բիզնեսը 3.5% նպաստ է ունեցել Հայաստանի ՀՆԱ-ի նկատմամբ (Chervyakov et al, 2023): 2023 թ-ի հունվարին ԵՄ-ն և ԱՄՆ-ն ընդլայնել են ավտոմեքենաների արտահանման մասով Ռուսաստանի դեմ սահմանված տնտեսական պատժամիջոցները ու պատժամիջոցներ սահմանել նաև 1.9 լիտրից ավելի աշխատանքային ծավալ ունեցող շարժիչով նոր և օգտագործված ավտոմեքենաների, ինչպես նաև էլեկտրական և հիբրիդային ավտոմեքենաների համար: Հաջորդիվ, Վրաստանը արգելել է իր տարածքով եվրոպական (սկսած 2023 թ-ի սեպտեմբերից) և ամերիկյան (սկսած 2023 թ-ի օգոստոսից) արտադրության մեքենաների տեղափոխումը Ռուսաստան, որը Հայաստանից Ռուսաստան ավտոմեքենաների արտահանման հիմնական ուղին էր: Արդյունքում՝ 2023 թ-ի օգոստոսին Հայաստանից ավտոմեքենաների

վերաարտահանումը զգալիորեն նվազել է, և քանի որ ոլորտը չունի կայուն տնտեսական մոդել, դրա անկումը 2024 թ-ին արդեն էական բացասական ազդեցություն է ունեցել տնտեսության վրա: Այս խոցելիությունը ընդգծում է Հայաստանում արդյունավետ տնտեսական քաղաքականության և ռազմավարության անհրաժեշտությունը՝ ուղղված դիմակայության բարձրացմանը և ռիսկերի նվազեցմանը:

Հայաստանի մակրոտնտեսական իրավիճակի վրա որոշակիորեն ազդել է նաև Ադրբեջանի հետ ռազմական հակամարտությունը, որը հանգեցրել է 2023 թ-ի աշնանը մոտ 100,000 բռնի տեղահանվածների Լեռնային Ղարաբաղից՝ Հայաստանի տարբեր քաղաքներ և գյուղեր ներհոսքի: Նրանց սոցիալ-տնտեսական ինտեգրմանը աջակցելու համար Հայաստանի կառավարությունն իրականացնում է տարբեր ծրագրեր, այդ թվում՝ միանվագ դրամական աջակցություն, բնակարանների վարձակալության և կոմունալ ծառայությունների համար դրամական օգնություն, ուսման վարձերի փոխհատուցում և կենսաթոշակների տրամադրում: 2024 թ-ի պետական բյուջեի համաձայն՝ 2024 թ-ին տեղահանվածների աջակցության տարբեր ծրագրերի համար կհատկացվի շուրջ 49 մլրդ դրամ (122 մլն ԱՄՆ դոլար³⁵ կամ 2024 թ-ի կանխատեսվող ՀՆԱ-ի 0.5%-ը): Բացի այդ, Լեռնային Ղարաբաղի կառավարությունն ու այլ վարկառուներ ունեցել են 315 մլրդ դրամի (783 մլն ԱՄՆ դոլար) չափով պարտավորություններ Հայաստանի ֆինանսաբանկային համակարգի նկատմամբ և, Հայաստանի կառավարությունը կստանան այս պարտավորությունների 70%-ը (548 մլն ԱՄՆ դոլար կամ 2024 թ-ի կանխատեսվող ՀՆԱ-ի 2.1%-ը), իսկ 30%-ը կստանան ֆինանսական կազմակերպությունները:

Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների ներհոսքը կունենա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հետևանքներ՝ ազդելով պահանջարկի և առաջարկի, ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականության և պետական պարտքի վրա: Հարկաբյուջետային քաղաքականության առումով հարկ է նշել, որ բռնի տեղահանված բնակչությանն աջակցելու համար նախատեսված ծախսերը կկատարվեն Լեռնային Ղարաբաղի համար ի սկզբանե նախատեսված միջպետական վարկի միջոցների վերաբաշխմամբ: Հետևաբար, բյուջեի դեֆիցիտի աճը, որն ակնկալվում է 2024 թ-ին, տեխնիկապես չի ներկայացնում ծախսերի ավելացում, այլ ավելի շուտ՝ բյուջետային միջոցների վերաբաշխում վարկերից դեպի ընթացիկ ծախսեր:

ՀՀ ԿԲ-ն ակնկալում է, որ միջնաժամկետ հեռանկարում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչությունը դրական ազդեցություն կունենա ՀՀ տնտեսության ներուժի աճի վրա (մոտ 1%)՝ աշխատուժի ավելացման միջոցով (ՀՀ ԿԲ, 2024): Սակայն

³⁵ ԱՄՆ դոլարի արժեքը հաշվարկվել է դրամ/դոլար միջին տարեկան փոխարժեքով, որը նշված է 2024թ. պետական բյուջեում:

կարճաժամկետ հատվածում հնարավոր է գործազրկության մակարդակի որոշակի աճ: Եթե ենթադրենք, որ բռնի տեղահանված ամբողջ բնակչությունը կմնա Հայաստանում, ինչպես նաև հաշվի առնելով ԿԲ գնահատականները բռնի տեղահանված բնակչության կազմում աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ (շուրջ 43%), գործազրկության վրա նախնական ազդեցությունը գնահատվում է առավելագույնը 2.7%:

Ֆինանսական հատված

Հայաստանն ունի փոքր ֆինանսական հատված, որտեղ գերակշռում են հիմնականում բանկերը: Վերջին տարիներին երկրի ֆինանսական հատվածը բախվել է մի քանի ցնցումների, այդ թվում՝ ՔՈՎԻԴ-19-ը, Ռուսաստանի շարունակվող ներխուժումը Ուկրաինա և դրա հետ կապված պատժամիջոցները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսումը: 2022 թ-ին Ուկրաինա Ռուսաստանի ներխուժումից հետո հայկական բանկերի ավանդների աճը զգալիորեն արագացել է, քանի որ Ռուսաստանի շատ քաղաքացիներ, երկրի ֆինանսական հատվածի նկատմամբ կիրառվող արևմտյան պատժամիջոցների պատճառով սկսել են իրենց ակտիվները տեղափոխել հայաստանյան բանկեր: Նմանատիպ իրավիճակ է ստեղծվել նաև կապիտալի շուկաներում, որոնք ՏՀԶԿ-ի չափանիշների համեմատ թեև մնում են փոքր և թերկապիտալացված, սակայն Ուկրաինա ռուսական ներխուժումից հետո աճել են. 2023 թ-ին կապիտալիզացիան նախորդ տարվա համեմատ աճել է 50.5%-ով, իսկ 2022 թ-ին՝ 599% աճով:³⁶

Այնուամենայնիվ, բանկերը պետք է հաշվի առնեն, որ այդ փողերը ինչ-որ առումով «թեժ» են, քանի որ մեծապես կախված են աշխարհաքաղաքական իրադարձություններից և եթե դրանք հանկարծակի դուրս բերվեն հայաստանյան բանկերից, դա կարող է ապակայունացնել ֆինանսական հատվածը:

Ավանդների աճին զուգահեռ, վերջին մեկուկես տասնամյակում Հայաստանում գրանցվել է տնային տնտեսությունների վարկավորման զգալի աճ, ընդ որում վերջին վեց տարվա ընթացքում նկատվում է հստակ միտում դեպի հիփոթեքային վարկավորում: Տնտեսական գործունեության տեսակներից շինարարությունը եղել է հիմնական շահառու ոլորտներից մեկը (առևտրից հետո): Շինարարության ոլորտի վարկավորումը 2023թ-ին 2019 թ-ի համեմատ աճել է 158%-ով: Հիփոթեքի և շինարարության ոլորտներում վարկավորման աճը կարող է նաև խնդիրներ ստեղծել Հայաստանի համար, մասնավորապես, հանգեցնելով տնտեսական «փուչիկի»: Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է մշտադիտարկել ոլորտների ընթացիկ վիճակը:

³⁶ According to data from the World Federation of Exchanges, available at: <https://statistics.world-exchanges.org/>.

Այնուամենայնիվ, նաև պետք է նշել, որ ՀՀ բանկերի շահութաբերության աճին զուգահեռ նվազել է նաև չաշխատող ակտիվների ծավալը, որը ֆինանսական հատվածի խոցելիության չափման հիմնական ցուցանիշներից է: 2023 թ-ի ընթացքում ռեզիդենտների չաշխատող ակտիվների կշիռը տատանվել է 1.4%-ի շուրջ, իսկ որոշ դեպքերում եղել է շատ ավելի ցածր, իսկ ոչ ռեզիդենտների դեպքում չաշխատող ակտիվների կշիռը կազմել է շուրջ 1%, ինչը նշանակում է, որ չաշխատող ակտիվների հետ կապված բանկերի ռիսկերը իսկապես բավականին ցածր են (նաև բանկային ակտիվների աճի պատճառով): Չաշխատող ակտիվների ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է շինարարության ոլորտում (0.27%), ընդ որում 2023 թ-ի ընթացքում այն աճել է, բայց դեռևս ցածր է 2015 թ-ի սկզբում գրանցված ռեկորդային ցուցանիշից (1.12%):

Հայաստանի ֆինանսական հատվածում վերջին տարիներին տեղի ունեցած այլ կարևոր զարգացումների թվում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկի դուրս գալը հայկական շուկայից: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը երկրի ամենահին օտարերկրյա կապիտալով բանկն էր: 2024 թ-ի փետրվարին Արդշինբանկն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը ձեռք բերելու և վերջինիս հաճախորդների բազան իր անվան տակ ինտեգրելու պայմանագիր կնքեց, ինչի արդյունքում բարձրացավ Արդշինբանկի՝ որպես ամբողջությամբ հայկական սեփականություն հանդիսացող կազմակերպության դիրքը: Մյուս կողմից, 2024 թ-ի փետրվարին հայտարարվեց «Վրաստանի Բանկ Գրուպ» ՍՊԸՀԸ-ի (Bank of Georgia) կողմից Ամերիաբանկի ձեռքբերման մասին, որը Հայաստանի խոշորագույն բանկերից մեկն է: Այս զարգացումները կարող են ունենալ բազմակողմանի ազդեցություն Հայաստանի ֆինանսական հատվածի վրա: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ըստ Fitch միջազգային վարկանիշային գործակալության կանխատումների՝ հայկական բանկերի վարկային ցուցանիշները առնվազն 2024-2025 թթ-ին կշարունակեն մնալ պատմական միջին ցուցանիշներից բարձր, մասնավորապես շահութաբերության, կապիտալիզացման և իրացվելիության ցուցանիշները կկայունանան միջինից բարձր մակարդակներում՝ Ռուսաստանից ներգաղթով և կապիտալի ներհոսքով պայմանավորված 2022 թ-ի ուժեղ աճից հետո (Fitch, 2024):

Բացի այդ, ՀՀ ամբողջ ֆինանսական հատվածը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից, որը երկար տարիներ դիտվում է որպես բանիմաց և հեռատես հաստատություն և աստիճանաբար վերանայել է իր մոտեցումը ֆինանսական հատվածի կանոնակարգման նկատմամբ՝ 2005 թ-ից անցնելով վերահսկողության ռիսկահենք մոտեցման և 2007-2008 թթ-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի տարիներին սահմանելով բանկային գործունեության նորմատիվներ: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից և 2014 թ-ին Ուկրաինա Ռուսաստանի առաջին ներխուժմամբ պայմանավորված ցնցումներից հետո ԿԲ-ն շատ ավելի գործուն մոտեցում է ցուցաբերել ֆինանսական կայունության նկատմամբ, այդ թվում

վերանայել է պահուստավորման պահանջները և 2022 թ-ի ընթացքում երկու անգամ բարձրացրել բանկերի համար կապիտալի հակացիկլիկ բուֆերի չափը: ԱՄՆ-ն բազմիցս նշել է, որ ՀՀ ԿԲ-ն համապատասխանում է ռիսկերի վերահսկման Բազելյան կանոններին, և որ ՀՀ ԿԲ-ի՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցումը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին:

Արտաքին տնտեսական կապեր

Հայաստանի ներմուծման ծավալները ավանդաբար գերազանցել են արտահանման ծավալները: Բացառություն է 2022 թ-ը, երբ ՀՀ արտահանումը տպավորիչ աճ գրանցեց դեպի Ռուսաստան վերաարտահանման կտրուկ աճի շնորհիվ, և երկրի ընթացիկ հաշվի մշտապես բացասական հաշվեկշիռը փոխվեց հավելուրդի: Հայաստանի արտաքին առևտրի կարևորագույն բնութագրիչներից մեկը դրա կենտրոնացվածությունն է՝ ինչպես աշխարհագրական, այնպես էլ ապրանքային կառուցվածքի առումով: Ռուսաստանը Հայաստանի համար ոչ միայն հիմնական արտահանման շուկան է, այլև երկրի հիմնական մատակարարը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի ներմուծման շուրջ կեսը ապահովում են Ռուսաստանը և ԵՄ-ն: Ընդ որում՝ 2013-2023 թթ-ին Հայաստանի ներմուծման մեջ Ռուսաստանի մասնաբաժինը 26.0%-ից աճել է մինչև 32.3%, իսկ ԵՄ երկրների մասնաբաժինը 23.4%-ից նվազել է մինչև 15.1%: Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա այս առումով նույնպես դեպի Ռուսաստան արտահանումը աճել է ինչպես ծավալով, այդպես էլ մասնաբաժնով: Նույն ժամանակահատվածում Հայաստանից Ռուսաստան արտահանումը աճել է 10 անգամ, իսկ ընդհանուր արտահանման մեջ Ռուսաստանի մասնաբաժինը գրեթե կրկնապատկվել է՝ 22.6%-ից հասնելով 40.4%-ի:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ 2022 և 2023 թվականներին Հայաստանից Ռուսաստան արտահանման բացառիկ աճը (2022 թ-ին՝ մոտ 3 անգամ, իսկ 2023 թ-ին՝ 1.4 անգամ՝ նախորդ տարվա համեմատ), կայուն չէ, քանի որ դա արտաքին շուկի հետևանք է:

Հայաստանի արտահանումը բարձր կենտրոնացվածություն ունի նաև ապրանքային կառուցվածքի առումով: 2013-2021 թթ-ին երեք ապրանքախումբ՝ պղնձի հանքաքար և խտանյութ, ոգելից խմիչքներ և ծխախոտ, տարեկան կազմել են ապրանքային ընդհանուր արտահանման մոտավորապես 41%-ը: Արտահանման նման կառուցվածքը մարտահրավերներ է ստեղծում Հայաստանի համար, քանի որ տնտեսությունը խոցելի է դառնում մի քանի ապրանքախմբերի հետ կապված արտաքին ցնցումների, շուկայի տատանումների կամ կոնկրետ տարածաշրջաններում առկա անկայունությունների նկատմամբ:

Հայաստանի՝ դեպի ծով ելք չունեցող դիրքը, չորս հարևաններից երկուսի հետ փակ սահմանները, ենթակառուցվածքների հետ կապված խնդիրները ու լոգիստիկան

վնասում են արտաքին շուկաներում երկրի մրցունակությանը: Հայաստանի միջազգային առևտուրը հիմնականում հիմնված է հյուսիսային հարևան Վրաստանի տարածքով բեռնափոխադրումների վրա: Սակայն վերջերս շրջանառվում է երրորդ երկրների քաղաքացիների և դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց համար Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային սահմանի բացման հարցը, ինչը մի շարք միջազգային կազմակերպություններ դրական են գնահատում Հայաստանի համար:

Հայաստանի տնտեսության մեջ առկա է զգալի ծավալով օտարերկրյա կապիտալ: 2022 թ-ի դրությամբ միայն երեք երկիր՝ Ռուսաստանը, Կիպրոսը և Շվեյցարիան միասին ապահովել են երկրում օտարերկրյա ուղղակի ներդրումների պաշարների մոտ կեսը, ընդ որում՝ Ռուսաստանի գերակշռությամբ: Նույն կերպ՝ տնտեսության երեք ոլորտներ՝ ֆինանսական ծառայությունների գործունեությունը, էլեկտրաէներգիայի ու գազի մատակարարումը և մետաղական հանքաքարի արդյունահանումը, կազմել են երկրում իրականացված ՕՈՒՆ-երի պաշարների 60%-ը, ընդ որում՝ միայն ֆինանսական ծառայությունների գործունեության (առանց ապահովագրության ու կենսաթոշակային ֆինանսավորման) մասնաբաժինը կազմել է 32.7%: Ֆինանսական ծառայությունների ոլորտում կատարված ներդրումների մեծ մասը ուղղվում է բանկային հատված՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Հայաստանի ֆինանսական հատվածում գործող 18 բանկերը ունեն օտարերկրյա կապիտալի մասնակցություն:

Էներգետիկայի ոլորտ

Քանի որ Հայաստանն ունի սահմանափակ էներգետիկ ռեսուրսներ, երկիրը ինքնուրույնաբար կարող է բավարարել ներքին պահանջարկի միայն մի մասը (27.0%) և մեծապես կախված է ներկրվող էներգառեսուրսներից՝ հատկապես նավթից ու գազից, որոնց հիմնական մատակարարը Ռուսաստանն է: Ավելին, ռուսական Գազպրոմը տիրապետում է Հայաստանի բոլոր գազային ենթակառուցվածքներին և ունի գազ ներկրելու, փոխադրելու և սպառողներին բաշխելու բացառիկ իրավունք: Ենթակառուցվածքների վիճակը ևս մարտահրավեր է Հայաստանի էներգետիկայի ոլորտում. էլեկտրաէներգիայի բաշխման ենթակառուցվածքների մեծ մասը, ներառյալ էլեկտրահաղորդման գծերը և ենթակայանները, մաշվել են և ունեն արդիականացման կարիք:

Հայաստանում էներգիայի արտադրության առաջնային աղբյուրներն են ատոմային էներգիան և հիդրոէներգիան: Սակայն պետք է նշել, որ ատոմային վառելիքը նույնպես ներմուծվում է Ռուսաստանից: Այս խնդիրներով պայմանավորված՝ Հայաստանի էներգետիկ քաղաքականությունը վերջին տարիներին կենտրոնացած է ներքին աղբյուրների՝ հիմնականում վերականգնվող ռեսուրսների (այդ թվում՝ արևն ու քամին) զարգացման վրա՝ նպատակ հետապնդելով նվազեցնել էներգետիկ կախվածության մակարդակը: Այնուամենայնիվ, արևային կայանների դրվածքային

հզորության ավելացումը զգալի օգուտների հետ միասին նաև մարտահրավերներ կստեղծի Հայաստանի համար, մասնավորապես՝ առաջարկի և պահանջարկի միջև անհավասարակշռության, ինչպես նաև իրական ժամանակում սպառողների պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ ծախսերի հետ կապված: Երկրին անհրաժեշտ է ապահովել համարժեք պահուստային հզորություններ՝ էներգիայի արտադրության փոփոխականությունը կառավարելու համար: Բացի այդ, էլեկտրական ցանցերը պետք է կարողանան հաղթահարել արտադրության արագ փոփոխությունները, ինչը կարող է պահանջել ներդրումներ «խելացի» ցանցային տեխնոլոգիաների մեջ՝ էներգիայի արդյունավետ բաշխումն ու կայունությունը պահպանելու համար:

8. Առաջարկություններ

Մակրոտնտեսական քաղաքականություն

- 2024 թ-ի սկզբին ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա արդեն իսկ զգացվում էր վերջին երկու տարիների տնտեսական աճի խթանների թուլացման ազդեցությունը: Այս պարագայում առաջարկվում է ռազմավարականորեն կրճատել բյուջեի ընթացիկ ծախսերի աճի տեմպը: Դա թույլ կտա ապահովել հարկաբյուջետային կայունություն և ծախսերը վերաբաշխել ավելի առաջնահերթ այնպիսի ոլորտների ուղղությամբ, որոնք կարող են նպաստել տնտեսության երկարաժամկետ և կայուն աճին:
- Միջազգային դոնորների աջակցությամբ իրականացնել այնպիսի կապիտալ ներդրումներ, որոնք խթանում են ներառական և կայուն տնտեսական աճ: Օրինակ՝ ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և վերականգնվող էներգետիկայի բնագավառներում: Այս բնագավառներում ներդրումները կարող են բազմակողմանի օգուտներ ապահովել տարբեր սոցիալ-տնտեսական խմբերի համար, իսկ միջազգային դոնորների հետ համագործակցությունը թույլ կտա իրականացնել այնպիսի նախաձեռնություններ, որոնք չեն կարող ֆինանսավորվել միայն ներքին աղբյուրների հաշվին:
- Քանի որ ՀՀ ազգային արժույթով ներգրավված պետական պարտքի մասնաբաժինը գնալով մեծանում է՝ հիմնականում ներքին աղբյուրների հաշվին, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ներքին պարտքի ավելացման հետ կապված ռիսկերին արձագանքելու համար: Այդ նպատակով կառավարությանը առաջարկվում է փնտրել արտաքին աղբյուրներից ՀՀ ազգային արժույթով պարտքի ներգրավման հնարավորություններ:
- Հաշվի առնելով, որ գնաճը շարունակում է պահպանվել թիրախային միջակայքի ստորին շեմից ցածր մակարդակում, առաջարկվում է թուլացնել դրամավարկային պայմանները՝ աստիճանաբար իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Այս քաղաքականությունը կխթանի սպառումը ու ներդրումները, և հետևաբար կնպաստի ընդհանուր տնտեսական ակտիվության աճին: Միևնույն ժամանակ, նվազող տոկոսադրույքները կօգնեն միջնաժամկետ հորիզոնում գնաճը կայունացնել նպատակային ցուցանիշի շուրջ՝ խուսափելով երկարատև գնանկման հետ կապված ռիսկերից:

Միկրոտնտեսական և ոլորտային քաղաքականություն

- Հիփոթեքային վարկերի և շինարարության ոլորտում վարկավորման աճը պահանջում է մշտադիտարկել ոլորտը՝ «փուչիկի» ձևավորման վտանգից խուսափելու համար: Դրամավարկային պայմանների մեղմացման և

գնանկումային միջավայրի պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով հիփոթեքային վարկավորման աճը՝ շինարարության ոլորտում «փուչիկի» առաջացման վտանգը մեծանում է:

- Ռուս-ուկրաինական պատերազմին հաջորդած զարգացումները՝ ներառյալ Ռուսաստանից Հայաստան աշխատուժի և կապիտալի ներհոսքը, ինչպես նաև դեպի Ռուսաստան աճող վերաարտահանումը, ոչ միայն խթանել են տնտեսական աճը, այլև հանգեցրել տնտեսության կառուցվածքային փոփոխությունների: Այս պարագայում անհրաժեշտ է մշակել և իրականացնել տնտեսության առաջնահերթ ոլորտներում կայուն աճի ապահովման քաղաքականություններ, այդ թվում՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և արտահանմանն ուղղված ոլորտներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ծառայությունների ոլորտի վրա: Այս նպատակով առաջարկվում է մշակել արտահանման համապարփակ ռազմավարություն, որը հաշվի կառնի փոփոխվող տնտեսական միջավայրը և այդ զարգացումներից բխող նոր հնարավորությունները: Հարկ է նշել, որ այս ուղղությամբ արդեն որոշակի քայլեր են ձեռնարկվել:
- Հայաստանի կախվածությունը ներմուծվող գազից նվազեցնելու և ավելի դիմակայուն ու ինքնաբավ էներգետիկ ենթակառուցվածքներ ունենալու նպատակով՝ խթանել և արագացնել արևային էներգետիկայի զարգացումը: Մշակել այնպիսի համապարփակ մոտեցում, որը կլուծի ինչպես գործող էներգահամակարգում վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրման տեխնիկական մարտահրավերները, այնպես էլ վերականգնվող աղբյուրներին կայուն ու ծախսարդյունավետ անցման հետ կապված տնտեսական խնդիրները: Այդ առումով շատ կարևոր է Հայաստանում էլեկտրական էներգիայի հաղորդման և բաշխման ցանցի զարգացումը: Մասնավորապես, արևային կայանների կառուցմանը զուգընթաց, էլեկտրական էներգիայի հուսալի բաշխում և մատակարարում ապահովելու համար, անհրաժեշտ է նաև արդիականացնել ենթակառուցվածքները, ինչպես նաև ներդրումներ կատարել էներգիայի պահեստավորման համակարգերում՝ առաջարկն ու պահանջարկը արդյունավետորեն կառավարելու նպատակով:
- Տարածաշրջանային ինտեգրման խորացումը առանցքային նշանակություն ունի Հայաստանի էներգետիկ անկախության ապահովման համար: Դա կարևոր է ոչ միայն էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացման, այլ նաև երկրի էներգմատակարարման հուսալիությունը և անխափան մատակարարումը ապահովելու համար: Հայաստանը պետք է առանձնապես մեծ ուշադրություն դարձնի Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գծերի և ենթակառուցվածքների վերազինման վրա՝ բարձրացնելով էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքի հուսալիությունը, ինչպես նաև

քայլեր ձեռնարկի Իրանի հետ կապող ենթակառուցվածքների զարգացման ու արդիականացման ուղղությամբ:

Ինստիտուցիոնալ և իրավական փոփոխություններ

- Իրականացնել պետական կառավարման համակարգի համապարփակ բարեփոխումներ, որոնք կներառեն համակարգի կազմակերպական կառուցվածքի, ապակենտրոնացման, հանրային ֆինանսների, արդյունքամետության երաշխավորման և այլ բնույթի փոփոխություններ: Թեև վերջին տասնամյակների ընթացքում հանրային կառավարման բարեփոխումների ուղղությամբ առաջընթաց է գրանցվել, ոլորտում դեռևս կան բազմաթիվ անելիքներ: Անհրաժեշտ է նախարարությունների, այլ պետական մարմինների և գերատեսչությունների վերաբերյալ մանրամասն ուսումնասիրություն իրականացնել՝ դրանց համընկնող գործառույթները բացահայտելու, անարդյունավետությունները վերհանելու և միավորման ենթակա գործունեության ուղղությունները որոշելու նպատակով: Կարևոր է նաև բարձրացնել հանրային կառավարման թափանցիկությունը և խթանել քաղաքացիների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում:

Արտաքին տնտեսական և քաղաքական հարաբերություններ

- Գնահատել 2017 թ-ին Հայաստանի և ԵՄ-ի միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (անգլերեն համարժեք եզրույթը՝ Comprehensive and Enhanced Partnership Agreement, CEPA) շրջանակներում իրականացվող աշխատանքների առաջընթացը և ուսումնասիրել Հայաստանի ռազմավարական շահերին և ԵՄ-Հայաստան զարգացող գործընկերությանը համահունչ նոր նախաձեռնությունների հնարավորությունները:
- Հայաստանը, որպես ԵԱՏՄ անդամ, օգտվում է միության շրջանակներում մի շարք տնտեսական և առևտրային հնարավորություններից: Այնուամենայնիվ, տնտեսական աճը արագացնելու և առևտրային հարաբերությունները դիվերսիֆիկացնելու համար Հայաստանը պետք է հատուկ կարգավիճակ փնտրի ԵԱՏՄ-ում, ինչը հնարավորություն կտա ինքնուրույն բանակցել և առևտրային համաձայնագրեր հաստատել երրորդ երկրների հետ: Սա թույլ կտա ուժեղացնել Հայաստանի ներկայությունը միջազգային առևտրային հարաբերություններում՝ միաժամանակ պահպանելով իր պարտավորությունները ԵԱՏՄ-ի նկատմամբ:
- Խթանել արտաքին առևտուրը՝ օգտվելով ԱՀԿ-ի ճկունությունից և երկկողմ բանակցությունների հնարավորություններից: Առևտրային հարաբերությունները, հատկապես ԵՄ-ի հետ, ընդլայնելու և

դիվերսիֆիկացնելու Հայաստանի ձգտումը պահանջում է ուսումնասիրել առևտրի խթանման տարբեր մեխանիզմներ: Թեպետ ԱՀԿ-ն սահմանում է միջազգային առևտրային հարաբերությունների վարման հիմնական կանոնները և կարգը, սակայն կա նաև ճկունություն դրսևորելու որոշակի հնարավորություն, դրույթներ, որոնք հմտորեն օգտագործելու դեպքում կարող են օգնել Հայաստանին հասնել արտաքին առևտրի ոլորտում իր նպատակներին: Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել թույլատրելի սուբսիդիաների շրջանակը, օգտվել զարգացող երկրների համար սահմանված հատուկ դրույթներից, առևտրի բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով սկսել երկկողմ բանակցություններ: Մասնավորապես, Հայաստանը կարող է օգտվել ԱՀԿ-ի կանոնակարգերին համապատասխանող սուբսիդիաներից, իսկ դրա համար անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել ԱՀԿ-ի կանոնները, վերհանել թույլատրելի սուբսիդիաները և ակտիվորեն ներգրավվել երկկողմ բանակցություններում: Հայաստանը պետք է աշխատանք տանի այնպիսի համաձայնագրեր կնքելու ուղղությամբ, որոնք թույլատրելի են համարում երկրում որոշ սուբսիդիաների տրամադրումը, օրինակ՝ պայմանով, որ դրանք համապատասխանում են նախապես պայմանավորված չափանիշներին (թափանցիկ են, չեն խեղաթյուրում ԵՄ շուկաները և այլն): Առաջարկվում է բանակցությունների վարման և համապատասխանության վերաբերյալ հարցերում ակտիվորեն օգտվել ԱՀԿ-ի խորհրդատվական մարմինների կամ այլ միջազգային կազմակերպությունների տրամադրած ծառայություններից:

- Հայաստանի աշխարհագրական դիրքը միջազգային առևտրի համար ստեղծում է ինչպես մարտահրավերներ, այնպես էլ հնարավորություններ: Ապրանքների տարանցման և արտահանման համար Թուրքիայի տարածքից օգտվելը կարող է զգալիորեն բարձրացնել առևտրի արդյունավետությունը և արտաքին շուկաներ մուտքի հնարավորությունները: Այս հնարավորությունը օգտագործելու համար Հայաստանը պետք է Թուրքիայի հետ բանակցություններ վարի՝ արտահանման նպատակով (օրինակ՝ դեպի ԵՄ) թուրքական միջանցքը նպաստավոր պայմաններով օգտագործելու համար:
- Մերձավոր Արևելքը, առևտրի և տնտեսական համագործակցության տեսանկյունից, լայն հնարավորություններ ու մեծ ներուժ ունի Հայաստանի համար: Մերձավոր Արևելքի երկրների, օրինակ՝ Իրաքի, Սիրիայի, Լիբանանի և այլ պետությունների հետ տնտեսական հարաբերությունների հաստատումը և ընդլայնումը կարող են դիվերսիֆիկացնել Հայաստանի առևտրային գործընկերների կառուցվածքը, թույլ տալ մտնել նոր շուկաներ և խթանել տնտեսական աճը: Այդ հնարավորությունները օգտագործելու համար՝ Հայաստանը պետք է առաջնահերթություն տա տարածաշրջանի հետ ակտիվ համագործակցությունը:

- Ակտիվ աշխատանք տանել միջազգային գործընկերների հետ զարգացման պաշտոնական աջակցությունը ավելացնելու ուղղությամբ՝ հատկապես ուշադրության կենտրոնում ունենալով ռազմավարական նշանակության նախագծերի ֆինանսավորումը: Օրինակ՝ նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը ռազմավարական նշանակության կարևորագույն նախագիծ է, սակայն նման նախագծի ֆինանսական ու տեխնիկական պահանջները նշանակալի են և դրա իրագործման համար անհրաժեշտ է զգալի միջազգային աջակցություն և օգնություն: Այս համատեքստում նաև կարևոր է ապահովել համապատասխան կարգավորող շրջանակ և ինստիտուցիոնալ պատրաստվածություն՝ նոր միջուկային էներգաբլոկի մշակման և շահագործման աշխատանքների արդյունավետ կառավարման համար: Անհրաժեշտ է ներդրումներ կատարել կարողությունների զարգացման ծրագրերում, որպեսզի Հայաստանի համապատասխան մարմինները ու մասնագետները պատրաստ լինեն պատշաճ կերպով վերահսկել նախագծի իրականացումը, կարողանան ապահովել համապատասխանություն միջազգային չափանիշներին, ունենան անհրաժեշտ պատրաստվածություն թափոնների անվտանգ կառավարման և ընհանուր առմամբ միջուկային էներգաբլոկի կյանքի ցիկլի բոլոր փուլերի պատասխանատու կառավարումն ապահովելու համար:

Հղումներ

- Ilurer, 2024, “Opening of Armenia-Turkey border will be epoch-making event for our region: Prime Minister”, April 10, 2024, <https://is.gd/V69jiI>
- AEA, 2024, “Autonomous solar stations as April 1, 2024”, April 2, 2024, Armenian Energy Agency, <https://is.gd/MShrj1>
- ADB, 2024, “Asian Development Outlook April 2024”, April 2024, <https://bit.ly/3zZU5We>
- Armbanks, 2024, “Presence of international banks in Armenia important and desirable - UBA head,” February 20, 2024, <http://www.armbanks.am/en/2024/02/20/153315/>
- Armenpress, 2016, “Iran to triple gas exports to Armenia”, 26 July 2016, <https://is.gd/2Penqr>
- Armenpress, 2024, “It is not possible to reach an agreement on the price for the formation of the EAEU gas common market. Deputy Minister of MTAI”, March 11, 2024, [in Armenian] <https://is.gd/0bOECv>
- Armstat, 2023, “Statistical Yearbook of Armenia-2023”, <https://is.gd/CN5yuX>
- Armstat, 2024, “Socio-Economic Situation of RA, January-December 2023”, 2024, accessed April 25, 2024, <https://is.gd/dj2l42>
- ACSES, 2023, “In 2022, funding of the state budget from international donors was less than planned by more than half”, Armenian Center for Socio-Economic Studies, July 13, 2023, accessed July 3, 2024, <https://bit.ly/3xGevD8>
- Avetian, S., 2024 “The Need to Diversify Armenia’s Financial System”, January 16, 2024, <https://is.gd/Zh3Ttn>
- Banks.am, 2024, “Armenian banks recorded 586 mln USD net profit in 2023”, January 19, 2024, <https://is.gd/tUVtxE>
- BBC, 2014, “Putin signs economic union deal with ex-Soviet states”, May 29, 2014, <https://t.ly/Gw9tG>
- CBA, 2024, “Monetary policy report, 2024 Q1”, March 12, 2024, <https://is.gd/PAvAbL>
- CBA, 2016, “Financial stability report 2015”, 2016, <https://is.gd/WBWbsL>
- Chervyakov D., Fanyan H., Petrosyan A., 2023, “The Armenian vehicle re-export business: role for the economy and outlook”, GET, Modex, December 2023, <https://is.gd/nYQSkV>
- Civilnet, 2022, “Viva-MTS’ has been put up for sale. Who are the potential buyers?”, October 10, 2022, [in Armenian], <https://is.gd/eJba7h>

Cukierman, A., 1998, “Central Bank Strategy, Credibility and Independence; Theory and Evidence, MIT Press

EBRD, et al., 2023, “Analysis of main cargo & logistics routes of Armenia”, April 2023 <https://is.gd/hzUUnJ>

EBRD, 2023, “Transition Report 2023-24 Transitions Big and Small”, November 21, 2023, <https://bit.ly/4c1tqpG>

EDB, “Armenia: Outlook for the key macroeconomic indicators as of December 2023”, December 2023, accessed April 8, 2024, <https://is.gd/6G0h6B>

ENA, 2022, “Program prospectus”, <https://is.gd/2z0P2K>

European Commission, 2021, “The EU and Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement enters into force”, February 28, 2021, <https://bit.ly/47MVBXV>

Fitch, 2023, Fitch Ratings, “Armenian Banks Benefit from Large Russian Inflows”, March 28, 2023, <https://is.gd/IoLLrr>

Fitch, 2024, Fitch Ratings, “Armenian Bank Metrics to Outperform Historical Norms in 2024-2025”, February 12, 2024, <https://is.gd/0L0yBV>

Former RA MEINR, 2016, “Clarification Concerning the Establishment of the “Energaimpex” Closed Joint Stock Company”, Ministry of Energy Infrastructures and Natural Resources of the RA, 05 August 2016, accessed April 29, 2024 <https://is.gd/Rtb4Bn>

GET, 2023, “Green hydrogen in Armenia: opportunities and challenges”, German Economics Team, NL 11, May - June 2023, accessed April 29, 2024, <https://is.gd/HSz21z>

Grilli, V., Masciandaro, D., and Tabellini G., 1991, “Political and monetary institutions and public financial policies in the industrial countries”, *Economic Policy*, Vol. 6, Issue 13, 1 October 1991, pp. 341–392, accessed October 2, 2024, <https://doi.org/10.2307/1344630>

Hovanessian, N., Nurbekyan, A., 2018, “Financial inclusion, regulation, financial literacy, and financial education in Armenia”, Asian Development Bank Institute Working Paper, No. 843, May 2018, <https://is.gd/J52G7I>

IEA, 2022, (International Energy Agency), “Armenia 2022 energy policy review”, March 2022, <https://bit.ly/3JEQDC1>

IMF, 2022, “IMF Executive Board Approves New Stand-By Arrangement for Armenia”, The International Monetary Fund, December 12, 2022, <https://bit.ly/3WgN5xf>

IMF, 2019, “Republic of Armenia: Detailed Assessment of Observance of the Basel Core Principles for Effective Banking Supervision”, IMF Country Report 19/42, February 2019 <https://is.gd/XKN6NH>

IMF, 2023, “Republic of Armenia: 2023 article IV consultation and second review under the stand-by arrangement and request for modifications of performance criteria and monetary policy consultation clause—press release; staff report; and statement by the executive director”, IMF Country Report No. 23/416, December 2023

IMF, 2024, “IMF Executive Board Completes the Third Review Under the Stand-By Arrangement with Armenia”, June 17, 2024, <https://bit.ly/3VHIylM>

ITA, 2023, “Armenia - Country Commercial Guide: U.S. Export Controls”, International Trade Administration, last updated on November 30, 2023, accessed May 15, 2024, <https://is.gd/t3GXOS>

IRENA, 2023, “Energy profile: Armenia”, International Renewable Energy Agency), Last updated on 8th August 2023, accessed April 29, 2024 <https://is.gd/OWjHmq>

Hetq (2023), “A Bubble Worth US\$250 Million: Amulsar Gold Project Memorandum”, May 8, 2023, <https://is.gd/ffkYws>

Kramer Andrew, 2006, “Gazprom reaches deal with Armenia”, New York Times, April 6, 2006, <https://is.gd/Svetp4>

Modex, 2023, “FDI performance of Armenia 2022”, April 2023, <https://is.gd/NqWEWo>

Modex, 2024, “Information Technology Sector in Armenia 2023”, April 2024 <https://bit.ly/3VRZwiV>

MOODY's, 2023, “Moody's affirms ENA's Ba2 rating, maintains negative outlook”, June 23, 2023, <https://is.gd/XvLx6G>

Papoyan, G., 2023, “State budget of 2024 is biggest state budget of all time”, National Assembly of the Republic of Armenia, November 8, 2023, accessed April 8, 2024, <https://bit.ly/46foQmg>

PSRC, 2024, “Report on delivered electric energy: IV quarter, 2023”, Public Service Regulatory Commission of the RA, 2024, accessed May 2, 2024 <https://is.gd/obd3IL>

Radio Azatutyun, 2013a (RFE/RL's Armenian service), “Sarkisian Opts For Russian-Led Unions”, September 3, 2013, <https://shorturl.at/nHRAC>

Radio Azatutyun, 2013b, “Armenia Raises \$700 Million In Debut Eurobond Issue”, September 20, 2013, accessed April 22, 2024, <https://is.gd/Itpmd1>

Radio Azatutyun, 2022, “From April 1, gas will become more expensive by an average of 4.1 percent”, March 1, 2022, [in Armenian] <https://is.gd/6DKA8U>

RA SRIE, 2024, “Energy balance of the Republic of Armenia for 2022”, Scientific Research Institute of Energy of the Republic of Armenia,

USAID, 2021, “Action plan to ensure implementation of the Republic of Armenia energy sector development strategic program”, January 2021, <https://is.gd/Biu4rm>

World Bank, 2024, “Global Economic Prospects”, January 2024, <https://is.gd/v6hAFI>